

14580



Լ. Զաւթթ

Իրն աստիճանները

Մ. 1474 1912թ.

891.99

Զ-30



Լեւոն Շանտ

—  
Տարբեր ծոց

—  
Դրամա 6 Կգ.

—  
Մինորաբիլ Վրաս  
Կոնստանտինով

1912

891.99  
6-30

06 NOV 2011  
- 10/11

ԼԵՆԻՆԻ ՇԱՆՏ

Շանտ

Տարբեր ծոց

ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐ

Տ Ր Ա Մ Ա

(Հարգարամենակ մը մեզմէ, առաջ)



14560

Կ. ԳՈՂԻՍ  
1912

— Կոնստանտինով

ՏՐԱՄԱ  
ԱՐԱՔԹ

13 JUL 2013

ՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Ի ԲԵՐԵՆՑԱՐԱՄԻ  
ЛЬНЫЙ ЗАЛ

ամսաթիվ \_\_\_\_\_  
դատ

Տ է	Տեղում	Գրադ.
Յ	չկա	չկա
Ն	Որտեղ մեծ	Որտեղ բիբ-կե

.000, 6-րդ տպ., 1990

Ա. Ն ա ջ ի ն Ա. ր ա ր



69351-68

ԿՍՏՅՈՒՆ

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՍԵՒԱՆԻ ԳԱԳՍԹԸ. ԺԱՅՈՒԵՐՈՒ ՄԷՋ ԱԻԵՐԱԿ ՄԸ. ԻՐԻԿՆԱՍՏՈՒՏ

Վանահայրը նստած է քարի մը, ձեռքը ձեռքին ու մտախոն կը նայի վար: Կիսափուլ կամարի մը սակեմ կամաց դուրս կ'ելնէ ձերմակաւորը:

Վանահայրը՝ բարձրահասակ, քառ ու ալեխառն. գլխաբաց: ձերմակաւորը նոյնպէս գլխաբաց, երկար սեւ մազերով, ասորական ձեւի հիւսւած սեւ ու չֆեղ մօրուով:

Վայրկեան մը երկուքն ալ լուռ կը նային իրար:

**ձերմակաւորը** — (չեղճօտ) *Կը դիտե՛ս. կը դիտե՛ս թագաւորութիւնդ:*

**Վանահայրը** — (խոժոռ) *Ո՞վ ես դուն:*

**ձերմակաւորը** — Դիտե՛, դիտե՛: Տե՛ս, այդ երկու-երեք խարխուլ խցիկները, չէ որ դուն ես չինք. հապա աչն մատո՛ււրը, որ քու աճապարանքն է կառուցեր. և վերջապէս, նայե՛, քու այդ նոր եկեղեցիդ, որուն դմբէթը օր-օրի կը բարձրանա վեր և որու գլխուն շուտով քու խակ ձեռքովդ խաչը պիտի տնկես:

Վանահայր — Այ՛ն, եթէ Տէրը կամենա :

Ճերմակաւորը — Նայէ՛ ու հպարտացի՛ր : Չէ՞ որ այդ բոլորը քու կամքիդ ծնունդն է :

Վանահայր — Ո՞վ ես դուն :

Ճերմակաւորը — Ա՛յ, սեւաւոր, ինչո՞ւ ես ժողովեր դիտուող այդ սեւազգեստ ու սեահողի մարդիկը, ինչո՞ւ ես եկեր այս սրբազան հինաւուրց կղզին :

Վանահայր — Ո՞վ ես դուն :

Ճերմակաւորը — Ելի՛ր, ելի՛ր. քչէ՛ նորէն դուրս գէպի կեանքը այդ թշուառ ու մաայլ ամբոխը : Ելէ՛ք դո՛ւրս, դուք, որ զգայարանքները չորցրնել կ'ուզէք ու կըքերը մարկ : Դո՛ւրս այս կղզիէն, դուք, որ թըշնամի էք ամեն գեղեցկութեան, ամեն կեանքի ու շարժումի, ամեն ուժի ու ծնունդի : Դո՛ւրս, մի՛ աղարտէք իմ ասուածներուս այս սուրբ դրախտը :

Վանահայր — Հոս դրախտ չկա : Այս ժայռի կտորին վրա ես իմ վանքս հիմնեցի. ասկէ ետքը հոս անապատ սլախ կոչուի :

Ճերմակաւորը — Անապատ... այս ծիծղուն ծովակի ծոցին, այս թարմ արևուն դէմ : Հեռո՛ւ, կոխած տեղդ հին տաճար է ասուածներու. հեռո՛ւ, հին ասուածներու շեմքէն է, որ կը խօսիմ քեզի :

Վանահայր — Հին ասուածներու աւերակներէ՛ն :

Ճերմակաւորը — Աւերակը այս քարերն են, որ քեզի պէսներն են դարտեր. քանդուեր է անոնց դարսածը : Բայց ի՛նքը կեանքի մեհեանը խորտակում չունի, ինչպէս ե ինքը կեանքը : Կը թափին քարերը, կը փոխւին անունները, բայց իրենք ասուածները կան ու կը մնան :

Վանահայր — Հոս մեռան քու ասուածներդ :

Ճերմակաւորը — Հո՛ս ու ամեն տեղ, ուր մարդ իր տարը կը դնէ, հո՛ն են անոնք յաւերժ ու անմահ :

Վանահայր — Հոս մեռան քու ասուածներդ. ե անոնց աւերակներուն վրա ես իմ Աստուծու տաճարը կառուցի : Նայէ՛, մութին մէջէն դեռ կը նշմարւի զբմբէթին արդէն կազմուող սրութիւնը : Հոն կը թագաւորէ միայն հողին, հոն կը թագաւորէ միայն Ասարծու շունչը...

Ճերմակաւոր — Հոն կը թագաւորէ տանջանքի գործիքը ու մահը :

Վանահայր — Տանջանքն է, որ կը բարձրացրնէ հողին, տառապանքն է, որ կը մաքրէ : Եւ կեանքի ամենէն խոր բանը մահն է :

Ճերմակաւորը — Տառապանքը կեանքի խոյն է, իսկ մահը՝ կեանքի քայքայումը :

Վանահայր — Բու բերնով կը խօսի մանուկ մարդկու թիւնը :

Ճերմակաւորը — Բու բերնով կը խօսի ցաւազար մարդկութիւնը :

Վանահայր — Հերի՛ք է. ո՞վ ես դուն, որ կը հայհոյես : Հեռացի՛ր, այս կղզիին վրա այ տեղ չկա քեզի ու քու ասուածներուդ :

Ճերմակաւորը — Այս կղզին այ նոյն աշխարհն է, ինչպէս ամբողջ աշխարհը : Երկրագեղ՛, մոլորա՛ձ, յաւերժ ասուածներուն :

Վանահայր — Հեռացի՛ր :

Ճերմակաւորը — Խոստվանէ՛. մոլորա՛ձ, ու երկըրպաղէ :

Վանահայրը — Հեռացիր:

Ճերմակաւորը — Կու գա օրը ու կը խոստովանիս:  
(Աներևոյթ կ'ըլլա):

Վանահայրը — (Կը նայի շուրջը, անհանգիստ) Ու՞ր էր: Չքա-  
ցա՛ւ: Տեսի՞լք, կասկած... (Յանկարծ վճռական) Ա՛,  
երբէ՛ք: Աշխարհքը մուտք չունի՛ այս կղզին: Աշ-  
խարհքը մուտք պիտի չունենա՛ այս կղզին: Ո՛չ:



## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿ ՆՈՐ ԵՆԻՈՂ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԱՌՋԵԻՃ

Մեկ կողմը քանարի անդուռ մուսքը: Կ'երեւան քախ-  
սակի ելարաններ: Հոս ու հոն քափւած են ասաղծ,  
կիսասառ քարեր, մաղ, գործիքներ:

Խորք ծառեր, որոնց բուններուն մեջէն կը նշարուի  
ծովը:

Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ  
բուռն քափով: Կը լսի տեղերուն շրշիւնը եւ ծովուն  
խուլ աղմուկը հեռուէն:

1.

Մեկ-երկու քարսառ կը վազեն ծառերուն քակին դե-  
պի ծովուն կողմը: Տեսարանի խորքէն արագ կ'անցնի  
ժամկոչը երկար ձող մը ուսին: Եկեղեցիէն դուրս կու գա  
Ադամ վանականը արտաւրով եւ աշխատելով դուրս քա-  
ռի երկար պարան մը, որուն ծայրը ներսն է:

Ադամ վանական — (Ձերմեռանդ) Աստու՛ծ համնի օղ-  
նութեան: Աստուած համնի օղնութեան:

Քարսառ մը -- (Կու գա ծովուն կողմէն ձեռքերը չորցընե-  
լով. թաց են ոտներն ու թւերը) Չգէ՛, վա՛ր ձգէ  
հա՛յր-սուրբ, ալ կարի՛ք չկա: Ելան, ամե՛քն ալ  
կլան սփը:

**Աղամ վանական** — Ամե՛նքն ալ, կ'ըսես՝ ամե՛նքն ալ,  
և ծովը թափւածնե՞րը:

**Քարսաւ** — Ամե՛նքն ալ. թէև յոյսերնիս բողբոջին  
կորեր էինք. այնպէս կատաղի ծով է. ապա՞ծ կե-  
ցեր էինք ճարահատ. ըսինք՝ հիմա գարնէ՛ պիտի  
ափի ժայռերուն ու փշուր-փշուր ընէ լատն ալ,  
մէջի եղողներն ալ: Ես ու իմ Ասուածը, շոտ աժան  
սրձան:

**Աղամ վանական** — Փա՛նք քեզի սուրբ Ասուածածին:  
Իսկ ո՞վ էին ծովը թափւածները: Ծառե՞րը:

**Քարսաւ** — Միայն երկուքը, մեր արեղան ու օրիորդը:

**Աղամ վանական** — Օրի՞որդը... Ի՞նչ օրիորդ:

**Քարսաւ** — Իշխանին աղջիկը:

**Աղամ վանական** — Վա՛յ, ա՞ն ալ իշխանի հեռն էր:  
Է՛, կենդանի՞ է, ուչքը վրա՞ն:

**Քարսաւ** — Այո՛. Լրե՛ի: Հայրն ու իր մարդիկը տարին  
վանահօր խուցը: Տեսնէիր՝ ինչպէս սպրդներ էր իշ-  
խանը:

**Աղամ վանական** — Կատա՞կ է. խեղճը: Բայց ո՞վ  
կ'ըսէր ա՞ննց՝ այս տեսակ եղանակով ծով դուրս  
գային:

2

Կը մտնեն Անտոն, Մովսէս ու Ծերունի վանականները:

**Մովսէս վանական** — Է՛, Խոքը, Խոքը:

**Անտոն վանական** — Թո՛ղ, թո՛ղ քիչ մը շունչ քաշեմ:  
«Ետքը, Խոքը,» հարցընկը դիւրին է. Խոքը սար-

10

սափկի էր: Վայ՛... կարծես թե երս ջարդւած ըլ-  
լան: (Կը նստի բարձր քարի մը):

Յաջորդ պատմութեան միջոցին հոն ելողներ կը մո-  
տենան պատմողին, այլ եւ կու գան քանի մը բանուր,  
Ղազար, Դաւիթ, Չափարիա վանականները ու կ'աւելան  
ունկրնդիրներուն:

**Մովսէս վանական** — Խօսէ՛, խօսէ՛:

**Ծերունի վանական** — Թո՛ղ, աղա՛, թող սր ուչքի դա:

**Անտոն վանական** — (Պահ մը դէմքը կը ծածկէ ձեռքերովը  
և յանկարծ բանալով) Կէսէն արդէն անցեր էինք: Մէյ  
մը վեր կ'կնէինք այլքներուն ծայրը, մէյ մը կ'իջ-  
նէինք անդունդը, ամենքն ալ լստտին վրա փակեր  
էին իրենց տեղը, սպրդներ ու չորցեր: Ես ու արե-  
ղան կը քաշէինք թիւրը սրքան ուժ ունէինք: Կա-  
մաց մը գլուխս դարձուցի, տեսա՛ կը մօտենայինք  
ափին, բայց ի՞նչ ափ. այլքները, որ կու գան ու  
կը դարնեն ժայռերուն, կարծես փրփուրի սար ըլ-  
լան դէմդ կեցած: Ի՞նչ մեղքս սրահեմ, սիրտս հայե-  
ցաւ, բսի՛ վերջացաւ: Բայց յուսահատ ուժ տւի  
նորէն թիւրուս՝ «Եա՛, Յիսու՛ս, Քրիստո՛ս», ըսի՛  
պի՛նդ նստեցէք, չը վախնաք: Աս ըսկուս մէյ մըն  
ալ տեսնեմ անագին վիթխարի այլք մը, կարծես  
հեռուն ցամաքէն փրթիւր կու գար չխտակ մեր վրա...  
(Ոտքի ելնելով) Այ մնացածը... ալ ինչպէս ըսեմ.  
գիտեմ որ լստտը յանկարծ ստատիկ թեքւեցաւ, կախ  
ինկաւ անդունդի բաց չրթունքին. յանկարծ սուր  
ճիչ մը ու կարծես բան մը փրթաւ մեր լստտէն ու  
սահեցաւ այդ փոսը: «Աղջի՛կս, աղջի՛կս...» Բարձրա-  
ցաւ աղմուկ, իրարանցում. ես դեռ հաղիւ էի հաս-  
կըցեր, որ կողքէս վեր թռաւ արեղան, արագ նստեց

11

վրայէն կապան, ցատկեց ջուրը: Լաստը ուժով ճօճեցաւ, մնացի մէկ թիով, լաւ է՝ ալիքը ինքը կը քշէր, բայց գիտէի նորէն ետ է գալու: Եւ եթէ դուք ժայռերուն վրայէն թոկը ժամանակին չը հասցընէիք՝ կորած էինք մենք բոլորս ալ. կէս վայրկեան մը աւելի ուշ, կէս վայրկեան մը և վերջացաւ...

**Ծեռունի վանական** — Աստծու հրահրքը:

**Ադամ վանական** — Իսկ օրիորդը:

**Անտոն վանական** — (Հսարտ) Մեր արեղան ազատեց:

**Ադամ վանական** — Լողալով:

**Գաւիթ վանական** — Այո՛, լողալով. հանեց ալիք:

**Մովսէս վանական** — Մի՞թէ արեղան լող տալ գիտէր:

**Գաւիթ վանական** — Ո՞րտեղէն. ո՞վ էր լսեր:

**Մովսէս վանական** — Ուղղակի հրաշք է:

**Ծեռունի վանական** — Ձեզի կ'ըսեմ՝ Աստծու մատը կա հոտակ:

**Ադամ վանական** — Բայց աղէկ, ինչո՞ւ ճամբա ելաք այս եղանակով, Անտոն հայր-սուրբ:

**Անտոն վանական** — Է՛, այնքան ըսի, համոզեցի, իշխանունի սրբունին ինքը այնքան ինդրեց, ո՞վ է լսողը: Իշխանը հրամայեց, որ մանկն լատը: «Եթէ կը վախնաք, դուք մի՛ գաք, ըսաւ մեզի. մենք ինքներս կը թխալարենք»: Այ ի՞նչպէս հակառակ էի, ըսի՝ Աստծու կամքը:

**Մովսէս վանական** — Հասա աղջիկը:

**Անտոն վանական** — Ան ալ հօրը կտորը:

**Ծեռունի վանական** — Չէ՛. Տիրամօր կամքն էր ասիկա: (Նտկեւով իր գաւաղանին վրա և ոգեւորած) Նայեցէ՛ք, ո՞վ է Տիրամօր այս տաճարը կառուցողը. մեր սրբ-

բունի՞ իշխանունին չէ՞. ո՞վ է մեր այս վանքը շէն ու պայծառ պահողը, ո՞վ է շիներ մեր այս խուցերը, ո՞վ է, որ շարունակ ամեն մեր պէտքերուն օգնութեան է հասեր մեզի, մե՛նք, որ Տիրամօր աղօթող ճորտերս ենք:

**Ջայներ** — Իրա՛ւ է, իրա՛ւ է:

**Ջախարիա վանական** — Աստուած երկար կեանք պարգևէ մեր սրբունի իշխանունուն:

**Ծեռունի վանական** — Ա՛ն, որ թողեր է ամեն իշխանական կեանք ու վայելք, իր զաւակներն ու իր ապարանքը ու եկեր է Տիրամօր ոտքը, հո՛ն, Յամաքարերդի մնութեան մէջ իր կեանքի վերջին կէտը նւիրելու ճգնութեան ու աղօթքի:

**Գաւիթ վանական** — Երկար արեւ մեր բարեպաշտ սրբունուն:

**Ծեռունի վանական** — Այ՛, Տիրամայրը անոր համար է, որ ցոյց տաւ մեզի իր հրաշքը, ազատեց ալիքներէն անոր եղբայրն ու այդ աղջիկը: Թող տեսնեն բոլոր թերահաւատները ու համոզւին, որ մեր Տիրամայրը երեսէ չձգեր իր ծառաներն ու իր աղօթողները: Անպակաս ընենք մեր աղօթքները ու թող անպակաս ընէ Ան իր օրհնութիւնը մեր վրայէն, անպակաս ընէ մեր սրբունի իշխանունու վրայէն: Փա՛ռք մեր Տիրամօրը անունին, փա՛ռք անոր Միաձին Որդու անունին, յաւիտեանս յաւիտենից:

**Խոււրը** — (Երկեւղած) Ամէ՛ն:

**Ջայներ** — Իշխա՛նը, իշխա՛նը:

Իսկոյն խումբը կը բաժնուի երկու մասի, կը շարուի ու կը կենա խոնարհ:

Կը մտնեն Իշխանն ու Վանահայրը, քանի մը հետեւորդներ ու վանականներ:

**Իշխանը** — (Ուղիւ գտնելով դէպի շէնքը) Աստիճակ ուրեմն քրոջս այնքան սիրած ու փայտաշատ եկեղեցին: Կուկիկ ու սիրուն տաճար է: (Հետեւորդներուն) Ըստ այսօր տեսնեմ պիտի այս եկեղեցին և, ա՛յ, բոլոր տարերքներուն հակառակ կեցած եմ հիմա հոս ողջ և առողջ:

**Վանահայր** — Յանդուղն քայլ էր ըրածդ, իշխան:

**Իշխան** — Ձեր անապատը ուրիշ է, վանահայր, ուրիշ է դուրը: Դուրը յանդուղն կողմինն է աշխարհը: Եւ վերջապէս մէջ մըն ալ, ո՞վ դիտէ, երբ եմ այս կողմերը անցնելու, այնքան գործ ունիմ և զբաղում: Չտեսնէ՞ք անգամ մը քրոջս եկեղեցին, չհամարէ՞ք անգամ մը սուրբ սեղանը երթալէս առաջ:

**Վանահայր** — Վաղը օր չէ՞ր:

**Իշխան** — Վա՛ղը. բայց ես այս իրիկուն մեկնելու եմ Յամաքարեղէն:

**Վանահայր** — Ինչ. հիմա նորէն մտադիր ես՝ ծովն անցնիս:

**Ծեբունի վանական** — Աստուած չեն փորձեր, իշխան:

**Իշխան** — Քաւ լիցի: Դեռ քանի ժամ ունինք. յոյս ունիմ ծովը կը մեղմի:

**Վանահայր** — Եթէ քեզի չես խնայեր, պէտք է խնայես զաւակդ:

**Իշխան** — Աղջիկս քա՛ջ է: Քիչիկ մը վախցաւ, քիչիկ մըն ալ ձեր Սեւանի ջուրէն կույ տուաւ, բան չկա, երխտասարգութիւն է, կ'անցնի: Բայց ինչ որ այսօր տեսաւ ու սպրեցաւ, ա՛յ, աստիկա չի անցնիր: Չէ՞ որ իր պատանեկան յիշատակներուն ա՛նդ փաթորիկ մը նւիրեցի:

**Ծեբունի վանական** — Կեանքի նեա չեն խաղար, իշխան:

**Իշխան** — Աստիկա ըսողը դ՞ու՛ն ես, ձերո՛ւկ: Այնքան երկար ես սպրեր, որ մուցեր ես, թէ կեանքը ինքը խաղ մըն է միայն:

**Ծեբունին** — Կեանքը խաչ մըն է, որդի՛ս, որ պիտի կրննք մեր ուսին, մինչեւ Տէրը կանչէ մեզի: Տիրամայրը խնայեց քեզի այս անգամ, բայց այդ մեղքը միւս անգամ չկրկնես:

**Իշխան** — Եւ չորհակալ եմ իրմէն, հայր-սուրբ, կ'աշխատիմ պարտքի տակ չմնամ: Եւ հիմա որ ուխտի եմ եկեր իր տաճարը, չէի ուզեր եկած ըլլամ պարտալ ձեռքերով: Կը նւիրեմ Տիրամօր այս տաճարին կաղնի դուռ մը բարձրաքանդակ, այլեւ վարագոյր մը աւագ խորանին, որ պիտի ըլլա թաւիչ ու ոսկեակար:

**Ծեբունի** — Օրհնեալ ըլլաս: Ձեր ցեղի անուըր անջինջ պիտի մնա այս պատերէն:

**Իշխան** — Նաև պատիրեր եմ իմ գործակալիս, ամեն տարի, քանի չէն է իմ տունս, տասը չափ սպիտակ ցորեն զրիւի իմ կալերէս ձեր անապատը: Վայելքը ձեզի, ձեր սուրբ աղօթքը ծնողներուս ու զաւակներուս:

**Չայնե (Խաւն)** — Աստուած օրհնէ ձեր ծնողներուն յիշատակը: Ելն մնա ձեր կալն ու այգին: Աստուած պահէ ձեր զաւակները: Աստուած աւելցնէ ձեր ինչքն ու ստացւածքը:

**Իճխան** — Իսկ հիմա... (Վանահօրը) Ո՛ւր է արեղանս :  
**Վանահայրը** — Իսկո՛յն, իշխան՛ն, ետեւէն մարդ եմ  
ղրկեր : Այ՛, արդէ՛ն :

4

Կը մտնեն Աբեղան Սիմոն վանականի ու դպիրի մը  
ընկերակցութեամբը : Աբեղան մուայլ է, դեմքը անշարժ  
աչքերը միտս գետնին. տեսակ մը անկառաք :

**Իճխան** — (Քիչ մը դիտելէն ետքը) Ի՛նչ գեղեցիկ տղա  
ես դուն և ի՛նչ երիտասարդ :

**Վանահայրը** — Միաբանութեանս մէջ կրտսերն է, իշ-  
խան :

**Իճխան** — Է՛, վրադ պիտի չըլլար այդ սև վերարկուն  
և ես դիտէի իմ ընելիքս : Քեզի կու տայի իմ տա-  
կիս նժոյգը, կու տայի քեզի, ա՛յ, իմ սեփական  
սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ինձի հաւա-  
տարիմ, և կ'առնէի քեզի իմ պալատս, իբրև իմ  
հարազատ որդիս : Իմ սև նժոյգս քու այդ կեր-  
պարանքիդ աղւճ՛ր պիտի վայելէր, իսկ ձեռքդ, կը  
տեսնեմ, չուտով պիտի սորվեր սուրիս : Ձիս ու  
սուրս թէ հերիք չեկաւ, կու տայի քեզի և աղջիկս...

**Վանահայրը** — Իշխան :

**Իճխան** — ... Որուն կեանքը այսօր ազատեցիր : Մնիկա  
արդէն քունը կ'ըլլար ըստ օրինի : Դուրսը աշխար-  
հին մէջ՝ ով ինչ վերցուց, վերցո՛ւց :

**Վանահայրը** — Իշխան :

**Իճխան** — Գիտե՛մ, գիտե՛մ, այս սուրբ մենաստանին  
մէջ այս խօսքերուն տեղը չէ : Բայց ի՛նչ ընեմ,  
կ'ուզէի ըսն մը տամ, կ'ուզէի ըսն մը ընեմ, կ'ու-  
զէի ըսնով մը կրախտազէտ ըլլամ այս անձուէր,

16

այս քաջ կտրիճին : Ժսո՛ս, Ա. ժսո՛ս, այդ սև  
վերարկուն կը կաշկանդէ իմ թեւերս : (Մօտենալով  
աբեղային) Տղա՛ս, քու իշխանդ քու առջև շատ  
աղքատ է ու շատ անզօր քեզի փոխարէն մը ընելու,  
ինչ որ ըսել կրնամ՝ հոս ներելի չէ, ինչ որ տալ  
կրնամ՝ քեզի պէտքը չէ :

**Վանահայր** — Մեզի պէտք է քու ու զաւակիդ երկար  
արևը :

**Իճխան** — Աղէ՛կ. ես քեզի պարտական մնացի, աղւոր  
զգացում չէ. ես սովոր չեմ եղեր պարտական մնալու :  
Ինչ և է. տո՛ւր ձեռքդ. տե՛ս իմինս. ասիկա  
կրբէք սկսար չէ եղած մեր թշնամիներուն դէմ ու  
կրբէք ալ անարդար դորձ չէ տեսած. արժանի է որ  
սեղմես այդ քու ձեռքովդ, որ այսօր ազատեց աղ-  
ջիկս ալիքներէն : (Պինդ կը սեղմէ աբեղային ձեռքը) :  
Մանն՛ք, վանահայր, տաճարին ներսը :


Իճխանը, Վանահայրը, հետեւորդները եւ վանական-  
ներէն շատերը կը մտնեն եկեղեցի :

**Սիմոն վանական** — (Կտմաց մը բռնելով Աբեղայի թեւէն) Եր-  
թանք, մենք ալ երթանք ու քիչ մը հանգստացիր :  
Դեռ սժգոյն ես բոլորովին և կըզգամ մարմինդ, որ  
դեռ կը դողա :

Կես մը գրկած կը սանի դուստ :

5

**Ղազար վանական** — (Մօտենալով Աղամ վանականին, խոր-  
հըղուտօր կերտով) Հիմա որքան ժամանակ պէտք է  
աղաչխարէ արեղան, որ տաճարին մուտքը հորէն  
բացուի իրեն համար :



17

69351-68  
Կատարել

**Աղամ վանական** — Ապաշխարէ՞ . ինչո՞ւ համար :

**Ղազար վանական** — Չէ՞ որ ձեռք է աւեր կնկա :

**Աղամ վանական** — Բայց . . . բայց այս տեսակ դէպք . . .

**Ղազար վանական** — Ատիկա միւսնոյնն է , մեղքը մեղք է միշտ : (Աւելի խորհրդաւոր) Ես տեսա , երբ իրարու փաթթւած դուրս ելան ալիքներուն մէջէն : Իշխանի մարդիկը գրեթէ բռնի խլեցին աղջիկը անոր թեւերուն մէջէն :

**Աղամ վանական** — (Ձայրոյթով) Անմիտ բաներ կը խօսիս :



## Գ. ՏԵՍԱՐԱՆ

ԱԲԵՂԱՅԻ ԽՈՒՅԸ . ԳԻՇԵՐ

Յամ ու փոքրիկ սենեակ մը , պատերը անկան քար : ձակասը սախակէ պարզ մահնակալ , վրան փռւած է փոս մը , չոր ու կարծր բարձ մը , իսկ կոշ ճածկոցը կիսովին ինկած է գետին :

Սենեակի մեջտեղը հին կարպետի կտորի մը վրա ցածրիկ ու լայն գրակալը , գրակալի վրան ալ մեծ ու բաց ձեռագիր մը :

Սենեակի մէկ կողմը փայտէ կոպիտ սեղան մը , վրան փայտէ սեւ խաչ մը , կաւէ փարչ մը եւ իւղի նրագը , որ կը պլպլա : Միւս կողմը սենեակի մուտքն է :

Մահնակալին գլուխը պատէն կախւած է Աբեղայի վերարկուն :

1

Աբեղան նստած է մահնակալին ծայրը , ձեռքերը կրծքին ծալլած եւ աչքերը շեշտ յառած գետին : Անոր ետքը փայտէ ցած արդուակի մը վրա նստած է Կոյր վանականը , շիտակ , անշարժ , երկու ձեռքը գաւազանին ու գլուխը բարձր պահած :

**Կոյր վանական** — Ո՞ւր են մտքերդ , արեղս՛ :

**Աբեղան** (Կը ցնցւի ու կը բարձրացնէ գլուխը) :

**Կոյրը** — Նորէ՞ն , նորէ՞ն . . .

**Աբեղան** — Այո՛ , այո՛ , մեղք է , գիտե՛մ , մեծ մեղք :

Ո՛չ, ալ չեմ մտածելու, ալ պէտք չէ մտածեմ. երբէ՛ք, երբէ՛ք. պէտք է ջնջեմ գլխէս այսօրը, բոլորը, բոլորը, ծովը, հովը, լսաս, ալիք... ա՛խ, այդ ալիքները... (Յանկարծ վեր կը թռչի թափով) Բայց ի՛նչ հրաշալի բան է եզեր կուելը անոնց հետ, երբ անոնք իրենց լոյժ կուրծքը դէմ կու տան քեզի, երբ իրենց փրփուրը կը զարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցընեն քեզի. մէկը կը ցատկէ ուսիդ, միւսը կը զարարի լանջիդ. մէկը կը հրէ, միւսը կը քաշէ, կը ճնշէ. ու բոլորը, բոլորը ընկճել կ'ուզեն քեզի. խակ դուն միշտ երեսին, անոնց երեսէջքին հետ կը տարուբերիս՝ բազկիդ զարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը յաղթահարելով. ա՛, այդ կուր...

**Կոյրը** — Կուրը կեանքի համար է, արեղա՛, հոս անապատ է:

**Արեղան** — (Կտրուած) Այո՛, անապատ: Մեղա՛յ քեզ, Աստուած իմ, մեղայ:

**Կոյրը** — Զգո՛ւշ: Լաւ հսկէ ինքըզինքդ, արեղա, աղօթէ՛:

**Արեղան** — (Խաչին առջեւ ծունր էջնելով) Ես կորսւած մեղաւոր մըն եմ, փրկէ ինձի, տէ՛ր. ես ինկած յանցաւոր մըն եմ, օգնէ ինձի, տէ՛ր. մեղքի մէջ խեղդուող մըն եմ, բռնէ ձեռքէս, տէ՛ր: Տե՛ս, մեղքի ծովուն մէջ... մեղքի ծովուն մէջ... ծովուն... ծովուն... (Երկու ձեռքով դէմքը բռնած կ'երէ ոտքի):

**Կոյրը** — Ըսէ՛, ըսէ՛:

**Արեղան** (Յանկարծ դէմքը կը բռնա ու շեշտ կը նայի անոր՝ արձանի նման անշարժ դէմքին)

**Կոյրը** — Ըսէ՛, ըսէ՛:

**Արեղան** — Ըսե՛մ... ի՛նչը:

**Կոյրը** — Ա՛ն, ինչ որ հոս խո՛րքը, խո՛րքը:

**Արեղան** — Խո՛րքը, խո՛րքը...

**Կոյրը** — Ըսէ՛, ըսէ՛:

**Արեղան** — Ո՛վ կրնա տեսներ այդքան խորքերը, ո՞վ կրնա ըսեր այդքան խորքերը:

**Կոյրը** — Իսկ ես կը տեսնե՛մ, ես կ'ըսե՛մ:

**Արեղան** — Դո՞ւն. կո՛յր: (Երդե՛ծանքով) Հապա ըսէ՛ նա՛յիմ, ինչ որ կը տեսնես:

**Կոյրը** — (Հատիկ-հատիկ) Լաստին վրա, երբ ձեռքիդ թին ջուրը կը սրտուէր, ո՞վ էր հոգիիդ մէջ:

**Արեղան** — (Վախցած) Լուէ՛:

**Կոյրը** — Որո՞ւն համար այնպէս կը թփրուտար սիրտդ, չրթունքիդ ի՛նչ բառ էր փակած, երբ չուրջդ ամենքը Աստուած կը կանչէին, երբ դէմդ փոթորիկն էր, որ կը ծառանար:

**Արեղան** — (Սարսափահար) — Երնէ՛կ բաց ըլլային աչքերդ, որ չտեսնէիր, չտեսնէիր...

**Կոյրը** — Երբ բոլոր հայեացքները երկինք էին վերացած, երբ ամենքը կ'ըստատէին վերին օգնութեան, ո՞ւր էին սեւեռած քո՛ւ աչքերդ, ո՞վ էր ան, որուն առջեւը հոգիդ ծունր էր իջած:

**Արեղան** — Լուէ՛, ըսէ՛. դուն իրաւունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել:

**Կոյրը** — (Մտադր) Ըսէ՛, ի՛նչ էր ուզածդ, ի՛նչ կը փրճարուէիր:

**Արեղան** — (Աղերսով) Զգխտեմ, ոչինչ չգխտեմ. հերի՛ք է:

**Կոյրը** — Իսկ ծովուն մէջ, երբ ա՛ն օձի մը պէս վզիդ փաթթւած, մարմինը մարմնիդ, չունչը չունչիդ, երբ դուն ամեն ինչ մոռցած ալիքները կը սրտուէիր, ըսէ՛, նորէ՛ն չգխտես, թէ ինչ կ'ուզէիր:

**Արեղան** — (Երազկոտ) Ո՛չ, կը յիշեմ: Կը յիշեմ, ամբողջ էութեամբս կը ցանկայի՛ որ ալ վերջ չունե-

հար այդ կտիւր, ալ վերջ չունենար այդ թաց ձամբան, ալ վերջ չունենար այդ վայրկեանը:

**Կոյրը** — Ամբարի՛շտ:

**Աբեղան** — (Խորտակած) Բայց ունեցաւ իր վերջը:

**Կոյրը** — Ու հասար ափը: Եւ երբ առին ջու բեռդ թեւերէդ ու դուն ուժաստատ ինկար աւազին, արդէն դիակ մըն էիր անկեզան:

**Աբեղան** — Ճշմարի՛տ է. ինձի այդպէս զգացի:

**Կոյրը** — Դիակ մըն ես դուն և հիմա: Մարմին մը, ուրկէ կեր է Աստծու շունչը:

**Աբեղան** — Ա՛խ, Աստած իմ, կորուսի հողիս:

**Կոյրը** — (Ոտքի ելնելով) Ինկի՛ր գետին ու կոծէ՛. քուրձ հագիր ու աղաչխարէ՛. իսկ ամենէն առաջ գնա՛ խեղճ վանահօր մօտ ու խոստովանէ՛:

**Աբեղան** — Խոստովանի՛մ, վանահօրը, ի՞նչ, ինչո՞ւ: Ա՛, ամեն, ամեն բան, բայց այդ մէկը երբէ՛ք: Երբէ՛ք: Եւ դուն ալ, հայր-սուրբ, չըլլա թէ...

**Կոյրը** — Ես կոյր եմ, խուլ ու համբ. բայց գնա՛ ինքդ վանահօր մօտ ու ինքնակամ խոստովանէ՛:

**Աբեղան** — (Կտրուկ) վանահօրը երբէ՛ք:

**Կոյրը** — Կը վախնա՞ս:

**Աբեղան** — Ո՛չ, Բայց... բայց...

**Կոյրը** — Իհարկէ. դուն կ'ուզէիր սրահեա թաքուն սրտիդ մէկ հեռաւոր խորշին մէջ քու այդ փոքրիկ նոր սրբութիւնդ, սրահեա ու երկրպագեա ծածուկ:

**Աբեղան** — Գթա՛, գթա՛ ինձի, անողո՛ք:

**Կոյրը** — Իսկ դուն քեզի կը գթա՞ս, կուտա՞շտ: Յիշէ՛ պատւիրանը. « Մի՛ եղիցին քեզ ալ Աստուածք բայց յինէն: »

**Աբեղան** — (Կակազելով) Մի՛ եղիցին... մի՛ եղիցին...

**Կոյրը** — (Շեշտելով) « Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս իվեր է և որ ինչ յերկրի ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի... »

**Աբեղան** — (Դողդոջ) Եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի:

**Կոյրը** — (Կամաց-կամաց երթալով դէպի դուռը) « Զի ես եմ տէր Աստուած քո, Աստուած նախանձուս, որ հասուցանեմ զմեզս յերկս և ի չորիս... » (Դուռ):

**Աբեղան** — (Կ'երթա ծունկի կու դա խաչելութեան առջեւը բողկատարած ու ջերմեռանդ) « Կեցո՛ղիս, Աստուած, դի հասին ջուրք յանձն իմ, ընկղայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ: Եկի ես ի խորս ի խորս... ծովու... և չըջանք... ընկզմեցին... զիս... » (Քիչ-քիչ կը թուլնա, կը նստի ծունկերուն և գլուխը կը կախէ կրծքին):

Խաչն ու սեղանը կամաց կ'ըսկսի մեուշապախի, ամեն ինչ կը խառնուի իրարու, եւ այդ մեուշի օնինձ վրա հեճգնեճ կը պարզուի աղջկան կերպարանքը: Ամբողջապէս սպիտակ հագած, հագուեսք պարզ, նուրբ ու ձիգ, կարծես ջրէն հանած. մազերը արձակ, խոնու ու վրան մեկ-երկու քել ծովու խոս:

Աբեղան բերել մը գլուխը կը բարձրացրնէ, յանկարձ կը ճեսնէ ու սարսափահար կը ցաշկէ ոճի:

**Աբեղան** — (Ետետ երթալով) Դո՞ւն... դո՞ւն...

**Աղջիկը** — Այո՛. ես՛. միթէ՛ չէիր սպասեր:

**Աբեղան** — Աստուած իմ:

**Աղջիկը** — Մինակ ես :

**Աբեղան** — Ես . . . ես մինակ եմ միշտ :

**Աղջիկը** — Այ . եկա քեզի բնիկեր . ե եկա այսպէս կէս-  
գիշերին , որ մինակ ըլլանք ես ու դուն : Դո՛ւն , իմ  
քաջս , իմ արեւս , իմ լուսորդս . . .

**Աբեղան** — Հերի՛ք է :

**Աղջիկը** — Ինչո՞ւ : Չէ՞ որ ես քեզմով է , որ հիմա  
կ'ապրիմ , չէ՞ որ դո՛ւն նորէն կեանքս աւիր ինծի .  
ե ի՛նչ քաղցր է այդ կեանքը , որ դուն աւիր ինծի :  
Այս քանի՛ , քանի՛ տարի ապրեր եմ ես , ամբողջ  
տասներեօթը տարի , ե ես չգիտէի , ընաւ չգիտէի ,  
որ չէի ապրեր : Մի՞տքդ է ցերեկը , հո՛ն , ալիք-  
ներուն մէջ . նայէ՛ , մազերս խոնաւ են դեռ , բռնէ՛ ,  
բռնէ՛ , շօշափէ՛ :

**Աբեղան** — (Ետետ կ'երթա յափշտակած՝ աղջկան նայելով .)

**Աղջիկը** — Բայց գիտե՛ս դուն ինչ ուժեղ թեւեր ունիս  
ե ինչպէ՛ս ճկուն . իսկ ես դեռ այնպէս յուզւած եմ ,  
դեռ այնպէս յոգնած (Կ'ուզէ նստի Աբեղայի անկողնին)

**Աբեղան** — (Արգելել ուղեւով) Օրի՛որդ :

**Աղջիկը** — (Կը նստնի անկողնին ծայրը) Ես օրիորդ եմ  
ծառանկերուս համար , ես օրիորդ իմ մեր հպատակ-  
ներուն համար . իմ աէրս ինծի այլ կերպ պիտի կանչէ :

**Աբեղան** — Սեղա՛ :

**Աղջիկը** — Վա՛յ , դուն գիտե՛ս անունս :

**Աբեղան** — Հայրդ քեզի այդպէս կանչեց :

**Աղջիկը** — Այո՛ , Սեղա է անունս : Իսկ ի՛նչ է քու  
անունդ :

**Աբեղան** — Ինծի արեղա կը կանչեն :

**Աղջիկը** — Իսկ առա՞ջ , առա՞ջ , երբ դուն աշխարհն  
էիր դեռ ու աշխարհինը :

**Աբեղան** — Իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ , քանի  
խելքս կը հասնի :

**Աղջիկը** — Ասիկա՞ : Ա՛ ի՛նչ սառն է հոս , ինչպէ՛ս կը  
մրսիմ :

**Աբեղան** — Կը մրսի՛ս :

**Աղջիկը** — Բան մը տուր վրաս , որ հոգիս տաքնա :

**Աբեղան** — Ես ոչինչ չունիմ :

**Աղջիկը** — (Առանց գլուխը դարձնելու , ետեւը պտտէն կախւած  
վերարկուն մտանանիշ ընելով) Ա՛յ :

**Աբեղան** — Վերարկո՞ւս :

**Աղջիկը** — Ինչպէ՛ս կը մրսիմ :

**Աբեղան** — Վերարկո՞ւս :

**Աղջիկը** — Կը վարանի՛ս : Բայց չվարանեցար կեանքդ  
ինծի տարու , չվարանեցար , երբ կուրծէս կատրած  
ալիքներուն մէջը նետեցիր քեզի :

**Աբեղան** — Ո՛չ , չվարանեցա : Ան ուրիշ էր :

**Աղջիկը** — Այո՛ , ան ուրիշ էր : Հոն կուր էր ու փո-  
թորիկ , իսկ հոս լուռ է ու խաղաղ , ինչպէ՛ս գերեզ-  
ման : Ա՛ , ի՛նչ սառն է հոս , ինչպէ՛ս կը մրսիմ :  
(Կ'եւնէ սօքի)

**Աբեղան** (Կը վաղէ դէպի վերարկուն , ձեռքը կ'երկարէ ու նորէն  
վարանած կանգ կառնէ)

**Աղջիկը** — (Խնդրանքով) Բե՛ր , բե՛ր . . .

Աբեղան յանկարծ կը խլի վերարկուն ու կը դառնա  
դեպի աղջիկը , որ արդէն անեւելոյք է եղած : Աբեղան  
կը մնա քարացած , վերարկուն բռնած ձեռքը առաջ  
պարզած :

Դուրսէն կը լսւի ժամկոչին ձայնը, որ մեղամաղձոս  
ու միալար երգով մը ժամ կը կանչէ : Չայնը հեզզհեզ  
կը մօտենա : Աբեղայի ձեռքէն կ'իյնա վերարկուն :

**Աբեղան** — *(Նրթունքներուն մէջէն) Յիսուս . . . (Կ'ուզէ  
նորէն չուքի խաչին դէմը, ու խելառի պէս ետ կը ցատկէ :)*  
*Ո՛չ, ո՛չ : Եթէ յանկարծ նորէ՞ն երևենա . . . (Իէմքը կը  
չըջէ անկողնին կողմը) Ա՛խ , Ասուածս կրկն դարձուց  
ինձմէ : (Հեծկտանքով կ'իյնա մահճակալին ոտքը ու դէմքը  
կը թաղէ անկողնին մէջ :)*

Դուրսէն կը լսւի միշտ ժամկոչին երգը, որ հեզզհեզ  
հեռու ու հեռու , կը քուլնա, կը նւաղի ու կը հալի :



Երկրորդ Արար

# Ա. ՏԵՍԱՐԱՆ

## ԱՂԲԻՒՐԻ ԳԼՈՒԽԸ

ՀԻՆԱՌՈՒՐՑ ՎԵՔԵԱՐԻ ԾԱՌԻ ՄԸ ԱՏԻԵՐԻՆ ՏԱԿ

Ծերունի վանականը նսած է ծառին սակր փայտի նստարանին ու բուն կ'երեւա: Աղբիւրին մօտիկ լամբւած են Ղազար, Մովսէս, Գաւիթ, ու Զաւարիա վանականները եւ սիրացուն. կը խօսին փափառուով ու անհանգիստ: Անոնց բովը կեցած է Աբեղան աչքերը գետին ու կը լսէ:

**Մովսէս վանական** — *Իրա՞ւ, նորէ՞ն:*

**Տիրացուն** — *Ցատկեր է անկողնին վրա, նստեր է կողորդին ու սկսեր է խեղդելու:*

**Մովսէս վանական** — *Քիտուս-Քրիստոս:*

**Տիրացուն** — *Խեղճը հաղիւ է շունչը ազատեր:*

**Գաւիթ վանական** — *Ի՞նչ հակառակեր է չարը հայր Բարսեղին, աս քանի՞ քրորդ անգամն է:*

**Զաւարիա վանական** — *Ի՞նչ կերպարանքով է եղեր:*

**Տիրացուն** — *Զգիտե՛մ: Ըստու միայն, որ ծծումբի ծուխին պէս բարձրացեր է ու առաստաղի գերաններուն մէջէն կորուեր է դուրս:*

**Մովսէս վանական** — *Անի՛ծւածը: Նզուլուի ինքն ալ, իր կերպարանքն ալ:*

**Տիրացուն** — *Ա՛, սարսափելի է. ազատում չկա իր ճանկերէն:*

**Գաւիթ վանական** — Գիւհրնները մինչև Հնայիմ անկողնիս տակն ու ետեւը՝ ես երբէք պառկիլ չեմ կրնար:

**Մովսէս վանական** — Ես ալ: Անցած իրիկուն մասնեմ խուցս ու ի՞նչ տեսնեմ. գորշ սաւանին մէջ փաթթեամ կնկան մը պէս կըկըզեր է անկունը. լեզիս պատուեցաւ. խկոյն խաչ հանեցի, աներեւոյթացաւ:

**Ղազար վանական** — Հա՛, այդ նզովից-արմատները կու գան կնկա կերպարանքով. կու գան խմբերով ու ալ ինչե՛ր ըսես չեն ըներ, ի՞նչ խայտառակութիւններ, ի՞նչ գայթակղութիւն...

**Զաւարիս վանական** — Իսկ ինձի կ'երեւանան միշտ մեր գիւղացիներու կերպարանքովը: Գինեպան Ուսեփը, մեր դրացի Գափօն, չըւի փչող կոյր Ակորը, ա՛ող զարնող Մինասը: Կու գան, կը հաւաքելն գլխուս, ձեռքերնին գինի, օղի, ուտելիքներ, խորոված: Խաչուի անմահական հոտը կը լեցնէ խուցս, կարծես ամբողջ բակը լեցւեր են ու մատաղ կ'եփեն: Այ ի՞նչ հրամմէներ, ի՞նչ խնդիր, ի՞նչ համոզել, որ պատճառ ուտեմ: Եւ մինչև Տիրամօր անունը չը անտամ չեն չքանար չիք-դառնալիքները:

**Մովսէս վանական** — Պատիժ է, պատիժ: Ինչո՞ւ կը տանջես մեզի, փրկի՛չ:

**Զաւարիս վանական** — Հակառակի պէս ալ, կարծես, մաքէս կը գօղնան Տիրամօր անունը. կը փընտրուեմ, կը փնտրուեմ, հա՛, հա՛, լեզուս ծայրն է, բայց չեմ կրնար ըսեր՝ «Սուրբ կոյս Մարիամ»:

**Տիրացուն** — Ա՛խ, ո՞ւր փախչի մարդ այդ գարշելիներուն ձեռքէն: Ո՞ւր փախչես, ի՞նչպէս փախչիս:

**Մովսէս վանական** — Եւ ի՞նչ կ'ուզեն մեզմէ. և անպատճառ մեղմէ՛:

**Գաւիթ վանական** — Անապատ եկողը եկեր է սատա-

նայէն փորձեկու, ինչպէս որ ինքը Տէրն մեր Յիսուս-Քրիստոս:

**Մովսէս վանական** — Յիսուս-Քրիստոս ըլլա մեր զօրավիգը:

**Խուսիք** — Յիսուս-Քրիստոս:

**Տիրացուն** — Եւ ամեն տեղ են, ամեն տեղ, ուր ալ որ երթաս: Ա՛յ, ի՞նչ գիտէք, որ հիմա մէկը նստած չէ հո՛ս մեր ետեւը (Տեղը կը փոխէ): Կամ հո՛ն քարայրի ձերպերուն մէջը, կամ մեր վրան, ա՛յ, սաղարթներուն մութին մէջը: Կը տեսնէ՞ք... կը տեսնէ՞ք... մէկը հոն ան մութին խորքը... կը շարժուի. մէկն ալ հո՛ս, ա՛յ, ազրիւրին ակնէն. նայէ՛, նայէ՛, ինտո՛ր կը խնդա, ինտո՛ր կը քրքջա... (Սարսափած ետ-ետ քաշւելով սղբելովէն) Յիսուս-Քրիստոս, Յիսուս-Քրիստոս: (Դէմքէմի կու գա վանահօր հետ)

**Վանահայր** — (Խոժոռ) Ի՞նչ կա, ինչո՞ւ ես վախեցրի, տիրացո՛ւ:

**Տիրացու** — Հա՛յր-սուրբ... (Կ'ընտ վանահօր ոտքերը)

**Մովսէս վանական** — Վանահայր. չարը հանգիստ չի տար մեզի:

**Ղազար վանական** Ուժեղ է խարդաւանանքը չարին:

**Վանահայր** (Զղւանքով) Դեռ միշտ այդ հին դուէն կը խօսիք ինձի: (Բարկացած) Ոտքի՛ ելիր, տիրացո՛ւ:

**Տիրացուն** — (Դէմքը ծածկած կ'եղնէ ոտքի)

**Վանահայր** — (Բիչ մը լուռ կը նայի անոր, վերջը միւսներուն ու հատիկ-հատիկ) Զարէն թող վախնա ան, ով չէ տիրեր իր մարմնին ու բնազդներուն. սատանային իշխանութիւնը բնազդներու վրա է միայն:

**Ծեռուկի վանական** — Իսկ ան ո՞վ է, վանահայր, որ

տիրեր է իր մարմնին ու բնազդներուն :

**Վանահայրը** — ( Հպարտ ) Ա՛ն , ով եկեր է այս անապատը , ծերունի՛ :

**Ծերունի վանական** — Մենք մարդ ենք ամենքս ալ , վանահայր :

**Վանահայր** — Ո՛չ , հայր-սուրբ . ով եկեր է հոս խնձի հետ իմ անապատս , պէտք է աւելի վեր բլլա , քան մարդը : Իսկ չարէն թող վախնա ան , ով չէ կորեր իր բոլոր շղթաները աշխարհքին հետ , իր անցյալին հետ , իր յուշերուն հետ , իր վշտերուն , իր ուրախութիւններուն :

**Ծերունի վանական** — Իսկ ան ս՛վ է , վանահայր , որ կրցեր է կարել այդ բոլոր շղթաները :

**Վանահայր** — ( Հպարտ ) Ա՛ն , ով եկեր է այս անապատը , ծերունի՛ :

**Ծերունի վանական** — Մենք մարդ ենք ամենքս ալ , վանահայր :

**Վանահայր** — Ով մարդ է ու միայն մարդ՝ անիկա աշխարհինն է ու թող դառնա աշխարհին . ահա՛ պատրաստ է հայր Անասնին լաստը : Ես չկանչեցի ձեզի հոս , որ հաւաքուիք ու դուրս ելն սարսափիք : ( Ուրեւորած կը բարձրացնէ կրծքէն կախած պարզ խաչը ) Հո՛ս Տիրոջ խաչն է , հոս դուրս չկան :

**Քոյուր** — ( Զերմեռածդ խաչ կը հանեն )

**Վանահայր** — Հոս կրքեր չը կան , հոս բնազդներ չը կան , հոս սուրբ-հոգին է միայն , հոս մի՛տքն է միայն , վեր խոյացող միտքը դէպի ճշմարտութիւնը , դէպի Աստուած : Այս մէկը աղէ՛կ հասկըցէք ու ստանանները թողէք աշխարհին : Դէ՛ , երթաք խողաղութեամբ և Տէրը բլլա ձեզի բոլորիդ հետ :

**Քոյուր** --- Ամէ՛ն : ( Կը ցրւին ) :

Վանահայր կեցած է մինակ , կը նայի անոնց ետեւէն յիսուր գլուխը շարժելով , երբ ետեւէն կամաց մը կը մտնա Աբելան , կը ծռի , զգու՛ս կը բարձրացրնէ Վանահոր փէշը ու կը համբուրէ :

**Վանահայր** — ( Գոնկարծ կը զգա ու կը դառնա ետ ) Ի՞նչ կ'ընես , որդի՛ս , ի՞նչ կ'ընես :

**Աբելան** — Հայր . . .

**Վանահայր** — Ի՞նչ կ'ուզես , որդի՛ս . ի՞նչ ունիս :

**Աբելան** — Որքա՛ն բարձր ես դուն , հայր . որքա՛ն , որքա՛ն բարձր :

**Վանահայր** — Բարձր կը ձգտինք մենք բոլորս , որդեակ :

**Աբելան** ( Սրհամարտ ) Ա՛ , բոլորս : Քու ձայնդ խնձի կարծես երկնքէն կու գա , հեռուէ՛ն , հեռուէ՛ն , վերէն : Է՛ , մենք բոլորս : Քանի խելքս կը հասնի եզեր եմ քու թեւիդ տակը , քու խրատներուդ , քու օրինակիդ . և եղաւ ժամանակ մը , երբ կարծեցի , թէ ե՛ս ալ հասնելու եմ այդ բարձունքները . . .

**Վանահայր** — Իսկ հիմա՞ , որդի՛ս :

**Աբելան** — Հիմա . . . հիմա . . . ( Կտրուկ ) Ես քու որոնած վերիններէն չեմ , հայր :

**Վանահայր** — Ինչի՛ր կը խօսիս , տղա՛ս , կը բամբասես քեզի . դո՛ւն , իմ բնորեալս . դո՛ւն , որ այս ամենուն մէջ ամենէն աւելի վեր սաւառնողն ես եզեր :

**Աբելան** — Սաւառնողը . . . գուցէ՛ , երբ թեւերս ազատ էլն ու թեթեւ :

**Վանահայր** — Է՛ , հիմա ի՞նչ եղան թեւերդ :

**Արեղան** — Հիմա... հիմա թուերս թուչեցան, հայր,  
**Վանահայր** — Թուչեցան՞ն:  
**Արեղան** — (Խորհրդաւոր ու մտեհաւով) Հիմա ե՛ս ալ կը  
 վախնամ, հայր:  
**Վանահայր** — Կը վախնան՞ս, դ՞՞ն ալ, սատանայէ՞ն:  
**Արեղա** — Սատանա՞. ո՛չ. ո՛չ սատանայէն:  
**Վանահայր** — Հապա՞:  
**Արեղան** — Ես... ես կը վախնամ... ծովէն:  
**Վանահայր** — Ծովէ՞ն...  
**Արեղան** — Ծովէ՞ն: Հոն ալիքներ կան, փոթորիկ, ե՛  
 յուզում, ե՛ կռիւ ե... ե... ամեն ինչ:  
**Վանահայր** — Կը հասկընամ, որդեակս. անցած օրւան  
 դէպքը ցընցեր է հոգիդ. կ'անցնի. ի՞նչ կապ քու  
 ու ծովուն մէջ: Թարմ է սիրտդ, գլխոտ ու կարեւ-  
 րից. ու ազատեցիր քեզի նման մանուկ էակ մը մա-  
 հէն. օրհնակ՛ը բլրաս:  
**Արեղան** — Բայց այդ օրէն, հայր, ինծի կը թւի, թէ  
 ծովը... ծովը սիրան է բնութեան:  
**Վանահայր** — (Նեշտ կը դիտէ Արեղան ու քեզ մը խիտ) Դուն  
 նայէ երկինք, որդի՛. երկինքը մի՛տքն է բնութեան.  
 խո՛ր ու խաղաղ:  
**Արեղան** — Այո՛, խոր ու խաղաղ, երբ ծաւի պայծառ  
 է երկինքը. իսկ իմ մտքերս աւելի կը նամակին թըր-  
 պատ օրերուն, երբ հոն ալ ամեն բան պղտոր է ու  
 խառնակ: (Կտարած) Ես քու որոնած վերիններէն չեմ,  
 հայր:  
**Վանահայր** — Ատիկա ըսողը դ՞՞ն ես, արեղա՛: Դո՛ւն,  
 որ իմ հպարտութիւնս եւ եղեր, որուն հոգին ես եմ  
 խմորեր, որուն մէջ իմ ամենաթանկագին մտածում-  
 ներս եմ դրեր, իմ սեփական հոգիս եմ դրեր, և որ  
 ինծմէ՛ ետքը իմ գործիս շարունակողն է ըլլալու:

Համեստութիւնը ես կը սիրեմ, արեղա՛, բայց իմ  
 ժառանգս եղողի մը բերնէն աւելի խոյանք ունեցող  
 խօսքեր կը սիրէի լսեմ:  
**Արեղան** — (Յանկարծ դէմքը ծածկելով ու հեծկտաւով) Ա՛խ,  
 դուն դեռ չզխտես... դուն դեռ չզխտես, հայր...  
**Վանահայր** — Բողոքովին սլալուած կ'ուղղուի և յանկարծ խիտ)  
 Ինծի նայէ, տեսնե՛մ. նայէ աչքերո՛ւս:  
**Արեղան** — (Կը հեկեկա):  
**Վանահայր** — Մի՛թէ. միթէ ճշմարիտ է կասկածս: Ա-  
 բեղա՛, նայէ աչքերո՛ւս:  
**Արեղան** — (Կը հեկեկա):  
**Վանահայր** — Այսպէս թո՛ղ, այսպէս խեղճ... Դո՛ւն,  
 որու հոգին ես որձաքարի պէս ամուր կը կարծէի,  
 անարատ ու կոյս բացաւիկ հոգի մը. ու գլուխդ հպարտ  
 ցըցած վեր, դէպի երկինք, աշխարհքի ծովուն մէջ,  
 ինչպէս իմ այս կոյս ու մենաւոր կղզիս այս ծովուն  
 մէջ: Թշուառակա՛ն, խոնարհե՛լ կ'ուղես այդ գեղե-  
 ցիկ, այդ հպարտ գլուխը ցած, այս ցածի ծովուն  
 դէմ, այն վերերէն, ուր մեր Աստուածն է...  
**Արեղան** -- Աստուած երեսը դարձուց ինծմէ:  
**Վանահայր** — Լռէ՛, լռէ՛: Այդպէս խախո՛ւտ, այդպէս  
 ողորմելի՛... առաջին իսկ փորձումի՞ն:  
**Արեղան** — (Ծունը իջնելով) Հայր...  
**Վանահայր** — (Ետ կը քաշուի) Ելի՛ր, ելի՛ր. ես քեզի շատ  
 եմ տեսեր ծունկերուս քովը, բայց ո՛չ այդպէս, ո՛չ  
 այդպէս: Ես քեզի այդպէս չեմ կրնար տեսներ:  
 Ելի՛ր, ելի՛ր:  
**Արեղան** — (Կ'եղնէ ստքի)  
**Վանահայր** — Եւ հեռացի՛ր: Գնա՛, եղի՛ր նորէն աջն-  
 պէս, ինչպէ՛ս որ էլը, և՛ տքը եկուր ինձի: Այնպէ՛ս,

ինչպէս որ էիր, այնպէ՛ս, ինչպէս որ էիր... (Խօսքը  
կը կտրէ ու կը կենա սնշարժ ու խոժոռ):

**Ա. բեղան** (Լուռ ու գլխահակ կամոց կը հեռանայ)

4

**Վ. անահայրը** — Աշխարհքը... աշխարհքն է, որ կ'ուզէ  
մանէ կղզիս: Հո՛ն սատանաները, հո՛ս այդ աղջիկը...  
և արեղան... ի՛մ արեղան... ա՛յդ արեղան...  
Ո՛չ, անկարելի է: (Գառնալով դէպի վեր, դէպի կողմին  
գազաթը) Է՛յ, դո՛ւն, դո՛ւն, ի՞նչպէս է քու անունդ,  
դո՛ւն, ճերմակաւո՛ր. ո՛չ, աս սլատանմունք մըն է  
միայն, չուրախանա՛ս. դիպւա՛ծ մը անցաւո՛ր ու  
սլատանակա՛ն. չուրախանա՛ս...



## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԺԱՅՈՒՐՈՒՆ ՄԷՋ ՇՈՎԱՓԻ ՄԸ ԿՏՈՐԸ

Չախ կողմը սեպ-բարձր ֆարափ, աջ՝ ցրիւ ժայռա-  
կոյսեր. մեջտեղը օտարակ աւազուս. նակասք ծովն է  
մինչեւ ժայռերուն ոտը. խորքը սարերու հեռանկար:

Պայծառ արեւ իրիկուն է: Ժայռերը, ծառերը, ծովը  
էւ ամեն ինչ ողողւած են արեւի նարինջ-կարմիր շողերուն  
մեջ, որոնց գոյները ամբողջ Տեսարանի միջոցին քեքել  
մը կը փոփոխւին ու կը վառւին:

1

Քիչ մը ասեմ Տեսարանը պարապ է: Կը լսի աղջիկ-  
ներու սուր քրիչ ու աղմուկ: Աջ կողմի ցածիկ ժայռե-  
րէն մեկուն վրա կ'երեւա Միգանուս մը, կը նայի աւ-  
խուժ շուրջը ու ետ դառնալով ձեռքերը խողովակածել  
կը դնէ բերնին ու ձայն կու տա:

**Առաջին Միգանուս** — Հօ՛ - օ՛, հօ՛ - օ՛:

Կից ժայռին կ'երեւա ուրիշ Միգանուս մը, որ ժիր  
ու քովուուն, ձեռքով կ'ընէ ու կը կանչէ դէպի հեռուն:

**Երկրորդ Միգանուս** — Ա՛յս կողմը, ա՛յս կողմը:

Ու երկունքն ալ ձեռք-ձեռքի քեքել մը կը ցատկեն աւա-  
զուսին վրա:

Մինչ նոյն ժայռերու վրային ու ետեւն ներս կը քափ-  
ւին հաս-հաս ու խմբով միգանուսները, նուրբ ու քեքել,  
նկուն ու շարժուն. հագած են բաց-կապոյտ կամ բաց-  
կանաչ՝ ցանցընւած փրփուր զարդերով: Բոլորն ալ հեռա-  
ձակ նոյն գոյնի ժապաւեններով: Կը ցատկեն, կը վազեն,  
կը նետւին. ծիծաղ, հրմեսուք:

Նոյն ժայռին ծայրը կ'երեւա Աբեղան իր հալածող-  
ներուն ձեռքին փախչողի մը պէս: Ետեւեւ ուրիշ միգա-  
նուեցին:

Աբեղան կը նայի ժայռէն, կ'ըստապէ վար իջնէ, կը  
գայրի ցած ու նստած կը մնա ժայռի ոտքին: Ընդհանուր  
կայտառ քիչ ու զւարթ իրարանցում:

Աբեղան կամաց կ'ելնէ ինկած սեղէն մռայլ ու շուր.  
Եւ յուսահատ շարժումով մը ձեռքովը կը գոցէ աչքերը:  
Կը լռեն բոլորը ու կ'անշարժանան:

**Երրորդ Միգանուց** — (Կամաց կը մտտենա Աբեղային ու կը կան-  
չէ ականջին) Սկզբա:

**Աբեղան** — (Կը ցընցուի ու անմիջապէս կը բռնա աչքերը: Ընդ-  
հանուր քրքիշ, որ խորին ալ կը զսպուէի)

**Միգանուցներ** — (Ձանազան կողմերէ ու դիրքերէ իրար արձա-  
զանգերով) Սկզբա... Սկզբա... Սկզբա...

**Աբեղան** — Կորէ՛ք, չքայցէ՛ք յանուէն Յիսուսի Գրիտտոսի,  
յանուէն այս խաչի: (Ձեռքովը խաչ կը հանէ անոնց վրայ)

**Խուսմբ մը Միգանուցներ** — (Նըջապատելով ու հեղձնելով)  
Ա՛խ, այս սիրուն խեղճ մանչը, ա՛խ, այս սիրուն  
խեղճ մանչը. ալ անդոր է քու խաչը:

**Աբեղան** — (Նորէն կտտուած) Ալ անդոր է արօթքս, ալ  
անդոր է իմ խաչս:

**Չորրորդ Միգանուցը** — Ա՛յ, ա՛յ, ի զո՛ւր. մի տխրիր:

**Առաջին Միգանուց** — Հոս ուրախ է ամեն իր:

**Աբեղան** — (Սրտնեղ) Ա՛, ի՞նչ կ'ուզէք. թողէ՛ք ինձի:

**Երրորդ Միգանուց** — Կ'ուզենք հոգիդ առկայծի:

**Երկրորդ Միգանուց** — Մենք քեզի զէչ ի՞նչ ենք ըրեր:

**Հինգերորդ Միգանուց** — Գիտե՛ս, բերեր ենք լուրեր:

**Երրորդ Միգանուց** — Լուրեր, սէրեր, սարերով:

**Երկրորդ Միգանուց** — Մէրը սիրով,  
սէրը սիրով,  
օրէնքն ա՛ս է  
դարերով:

**Աբեղան** — (Աչքերը շփելով) Բայց ո՛չ. սա պատրանք է  
դուի:

**Առաջին Միգանուց** — Դուի՞:

**Միգանուցներ** — (Թեւ թեւի կու տան, մէջ կ'առնեն Աբեղան,  
կը դառնան շուրջը ու կ'երգեն պարելով.)

Դուի, դուի, թեւ թեւի,  
պարենք, կրղենք թեւ թեւի,  
զուցէ սիրտը թեթեւի  
այս անսէրի, անթեւի:  
թեւեւ, թեւեւ,  
սէ՛ր-ու վե՛ր.  
արե՛է՛ք թեւեւ,  
թուչի վեր:

**Աբեղան** — (Կը յորձակէ երրորդ Միգանուցի վրայ)  
Ըսէ՛, ըսէ՛, դուս ի՞նչ ես,  
այդպէս անուշ կը հնչես:

**Երրորդ Միգանուց** — (Ետ ցատկելով թեթեւ)  
Չէ՛, ո՛չ դու եմ, ո՛չ փերի.  
քեզի ծովէն լուր բերի:

**Աբեղան** — Ուրեմն կա՞ս, կ'ապրի՞ս դուս:

**Երրորդ Միգանուց** — Կ'ապրիմ այնպէս, ինչպէս դուս:

**Աբեղան** — Ո՞ւր է սառնդ. բոցնդ ո՞ւր:

**Երրորդ Միգանուց** — Եւ հո՞ս, և հո՞ն, ամենու՛ր:

**Առաջին Միգանուց** — Ալեհուշներ, միգանուշներ,  
մենք բոլորըս անուշներ:

**Աբեղան** — Ձեզի երբէք ես չե՛մ տեսեր:

Առաջին Միգանուց — Նախ պէտք էր սէ՛ր :

Երկրորդ Միգանուց — Ու կարօտներ, սպասումներ...

Հինգերորդ Միգանուց — (Ընկերները ճեղքելով առաջ կ'անցնեն)  
Բայց ծանօթ ենք ես ու դուն :

Արեղան — Իրար ծանօթ, ես ու դո՞ւն :

Հինգերորդ Միգանուց — Հա՛. կը յիշե՞ս այն առտուն,  
կըր ծովուն մէջ, Սեբան լանջիդ,  
փոթորիկը ահանջիդ...

Արեղան — (Ոգեւորւելով) Երբ կախ էր ալիքին հետ :

Հինգերորդ Միգանուց — (Շարունակելով)  
... Կը կուէիր մեզի հետ,  
որ ստքերդ կից մը աւին  
պինդ դարձովը ուժեղին  
երկու ծիծիս մէջստեղին...

Արեղան — (Կարեկցատ) Յաւեցա՛ւ :

Հինգերորդ Միգանուց — (Ընկերներուն) Յա՞ւ. ի՞նչ բան է  
ցաւ : (Շարունակելով երբ)  
... Այնպէս թափով, այնպէս ամուր,  
որ դարձա բուռ մը փրփուր :

Արեղան — Դո՞ւն, փրփու՞ր...

Վեցերորդ Միգանուց — (Բնքուշ փոթթւելով Հինգերորդին)  
Անձէջ քուրիկ,  
Փրփուրի՛կ,  
հա՛տ մը, հա՛տ մը  
համբուրիկ :

Չորրորդ Միգանուց — (Չունչ ստելով)  
Ա՛խ, դուք չքրքրիք :

Հինգերորդ Միգանուց — (Սրտնեղ)  
Թող սուր ինձի. է՛ հերի՛ք :

Արեղան — Իսկ ե՞րբ թողիր դուն ծովը :

Հինգերորդ Միգանուց — Երբ չէր ինկեր դեռ զովը, այս-  
օ՛ր, ջերմիկ կէս օրին :

Արեղան — Թողիր ի՞նչքող, կամովի՞ն :

Հինգերորդ Միգանուց — Հայր արեւը կանչեց վեր :

Արեղան — Հայր... արե՞ւը. հրաւէ՛ր :  
Եւ ինչո՞ւ :

Հինգերորդ Միգանուց — (Ծիծաղով ու դարմանքով ընկերներուն)  
Ինչո՞ւ...

Առաջին Միգանուց — Չո՞ւ, չո՞ւ :

Վեցերորդ Միգանուց — Չըւելու, չըւելու, հովերուն հետ  
սրաչկու :

Արեղան — Հովերո՞ւն :

Երկրորդ Միգանուց — Ա՛յ, ա՛յ, եկա՛ն :

Խորէն խումբ մը — Եկա՛ն, եկա՛ն :

Չորրորդ Միգանուց — Հովիկներ՛րը, հովիկները, փախէ՛ք :

Ուրիշ խումբը մը — (Ոստատելով) Եկա՛ն, եկա՛ն հովիկները :

Ընդհանուր իրարանցում: Ներս կը քափւին Հովիկ-ները՝ քար ու քեքել պատանիներ խու մագերով. հագուստին գործ, ծալաւոր ու ծածանուց:

Կը քափւին ներս սեսարանի խորէն, կը խառնին Միգանուցներուն, կը փարբւին անոնց զոյգ-զոյգ կամ խմբերով. եւ առանց բնաւ կանգ առնելու, անոնք ալ իրենց հետ փաշելով, դուրս կ'ելնեն սեսարանի առջեւի մասէն, ցատկելով, աղմուկով ու ծիծաղով:

Զոյգ մը անցնելու ատեն.

Միգանուցը — Սպասել ալ որ կու տա՛ք :

Հովիկը — Կուի էինք սարի տակ :

**Միգանուեր** — Ի՛ն, առ որո՛ւն հետ նորէն:

**Հովիկ** — Ա՛ն, որ վերը ձուներէն:

**Միգանուե** — Կ'ատեմ անոնք բոլորն ալ,  
ի՛նչ կրպիտ են ինչպէ՛ս պաղ... (Կ'անցնին):

Փոքր խումբ մը իրար փաշտելով:

**Հովիկ մը** — Մանե՛նք թուփին ծոցերը:

**Ուրիւ Հովիկ մը** — Երթանք ծովուն բացերը:

**Միգանուե մը** — Երթանք պարե՛նք, հա՞, պարե՛նք:

**Ուրիւ Միգանուե մը** — Չէ՞, բերկրանքի համար ենք:  
(Կ'անցնին):

Մեծ խումբ մը բեւ բեւ շղթա կազմած.

**Հովիկներ** — Անուշ շո՛ւնչն էք ծովերու:

**Միգանուեներ** — Դուք ալ յոյզքը եթերի:

**Միասին** — Մենք ջերմ փարած իրարու, ա՛, ի՛նչ կեանք  
է անթերի: (Կ'անցնին):

Վերջին՝ ետ մնացած խումբ մը շտապելով:

**Միգանուե մը** — (Ետ նայելով Արեղային) Եկո՛ւր, եկո՛ւր,  
աղա՛, դուն ալ եկուր մեզի հետ:

**Ուրիւ Միգանուե մը** — (Փաթթւելով ետ հովիկին) Ա՛խ, չի  
կրնար. ան անդոյգ է, անընկեր...:

**Խումբը** — (Հեռանալով) Անընկեր...:

3

**Արեղան** — (Երկար կը նայի անոնց ետեւէն, մինչեւ աղմուկը կը  
կտրուի: Տխուր գլուխը շարժելով) Անդոյգ ու անընկեր...  
(Լուռ քիչ մըն ալ. ու յանկարծ սրտին խորքէն) Ա՛խ, գո-  
նէ գիտնայի, որ իղուր չէ այս ճգնութիւնը...: Ի՛նչ

կեանք է աս. մոռցած մոմ մը խաչկութեան առ-  
ջեւը, դժգոյն ու մինակ, որ կը միտ ու կը հալի...  
(Ձեռքովը կը ծածկէ երեսը, գլուխը կը կտտէ կրծքին ու կը  
մտն անշարժ):

4

Բարձր սեպ փարափի ծայրէն կ'երեւա ձգնաւորը,  
զգզուած ու կիսամերկ:

**ձգնաւորը** — (Պոռալով) Է՛յ, ո՞վ է հոտ: Ի՛նչ դորձ ունիս  
հոտ՝ իմ փոսիս գլխուն:

**Արեղան** — (Ապշահար կը նայի վեր):

**ձգնաւորը** — Է՛յ, քեզի կ'ըսեմ. ի՛նչ բանի ես հոտ:  
(Արագ ցած կը մագլցի ժայռէն, երեւնալով ու չքանալով քա-  
րերու ցցած քներուն ետեւը: Հասնելով քարափի կէտերուն  
կտնգ կ'առնէ) Ինչո՞ւ ես եկեր, մա՛րդ, այս անմարդ  
կողմերը:

**Արեղան** — Ա՛խ, երեւի դուն այն ճգնաւորն ես, որ  
մեզմէ շա՛տ շատ տարիներ առաջ եկեր էր մինակ  
այս կղզին ճգնելու: Բայց չէ՞ որ անիկա մնած է  
արդէն, վաղո՛ւց, վաղո՛ւց:

**ձգնաւորը** — Իսկ դո՛ւն. դուն մնած չե՞ս, վաղո՛ւց,  
վաղո՛ւց:

**Արեղան** — Ե՞ս:

**ձգնաւորը** — Ունայութի՛ւն: Դուն ինծի ան ըսէ՛ ին-  
չու ես եկեր այս անմարդ կողմերը:

**Արեղան** — Չգիտե՛մ. ինծի բերին:

**ձգնաւորը** — Ո՛վ բերաւ քեզի:

**Արեղան** — (Մտածկոտ) Չգիտե՛մ: Բայց չէ՞ որ քու ճգ-  
նարանդ այս ժայռերուն մի՛ւս կողմն էր, աւելի  
վերը:

Ճգնաւորը — Բայց հոսանդ է իմ փոսս :

Արեղան — Փո՞ս . ի՞նչ փոս :

Ճգնաւորը — Նայէ՛ ոտքերուդ տակը . ունայութեան փոսը :

Արեղան — Ունայութեան : (Կը նայի ոտքերուն տակը, ուր բացած է փորւածք մը գերեզմանի չափ ու ձեւով) :

Ճգնաւորը — Զգո՛ւշ . չքանդե՛ս :

Արեղան — Ճի՛շտ է , ճգնաւոր , որ դուն տէր ու թափաւոր ես եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու , սպառաններու մէջ ես սպրեր , հարիւրաւորներ եւ ծառայեր քու ամեն մէկ քմայքիդ . վայելքներուդ ու զարճութիւններուդ սահման չէ եղեր : Ճի՛շտ է , ճգնաւոր , ինչ որ կը պատմեն :

Ճգնաւորը — Ունայութիւն :

Արեղան — Կ'ըսեն՝ թողեր ես այդ բոլորը , պալատն ու խրախճան , իշխանութիւնն ու փառք . թողեր ես ամեն ինչ , հողեր ես սքեմ , դացեր ես մարդոց մէջ սպաշխարանք քարոզելու . քարոզելու դու՞թ , քարոզելու ողորմածութիւն , քարոզելու խոնարհութիւն : Ճի՛շտ է , ճգնաւոր , ինչ որ կը պատմեն :

Ճգնաւորը — Ունայութիւն :

Արեղան — Ճի՛շտ է , որ ատկէ ալ ես կշտացեր , եկեր ես այս մենութեան մէջ անդորրութիւն գտնելու , մտածելու հողիդ փրկութիւնը :

Ճգնաւորը — Ունայութիւն :

Արեղան — (Յուզւած) Ճգնաւոր , ի՞նչ կը խօսիս . ունայութիւն ե քու ճգնութիւնդ :

Ճգնաւորը — (Անտարբեր) Քիչ մը հեռու իմ փոսէս . փուլ չի տաս :

Արեղան — Հա՛ , այս փոսը : Երեւի , գերեզմանդ է , որ

վրան այդպէս կը դողաս : Բայց բաց է ու պարագ : Ճգնաւորը — Ունայութիւն ե գերեզմանը : Ես գերեզման չունի՛մ :

Արեղան — Հա՛ , իրաւ որ . գիտե՛մ : Կ'ըսեն՝ քեզի նեակեր ես ծովը , հո՛ն , այն միւս կողմի բարձր ժայռէն : Զվախցա՞ր հողիդ կորուստէն , չվախցա՞ր հանդերձեալ կեանքէն :

Ճգնաւորը — Ունայութիւն մըն ալ այդ քու հողիդ ու քու հանդերձեալ կեանքդ :

Արեղան — (Սարսփահար) Լու՛է՛ , թշուաւկա՛ն , հայնոյա՛նք է խօսածդ :

Ճգնաւորը — Իզուր մի՛ սարսփիր ու քիչ մը հեռու փոսէս :

Արեղան — Այ ի՞նչ փոս . ալ ինչո՞ւ համար . ուրեմն ալ ինչո՞ւ ես փորեր այդ փոսը , ուրեմն ալ ինչո՞ւ կը պահպանես այդպէս վախով ու դողով , նոյնիսկ մահէդ ալ անդին :

Ճգնաւոր — (Դուխը շարժելով) Ա՛ , ատիկա՛ է , ատիկա ունայութիւններուն ունայութիւնը : Փորեր եմ , փորեր , նայէ՛ , այս եղունկներովս , ուղեղովս ու սրտովս , փորեր եմ անընդհատ ծնած օրէս մինչեւ վերջին վարկեանը , փորեր եմ ու որոնք տակէն բան մը գտնելու համար կարեւոր բան մը . փորեր եմ ու պահպաներ , որ այդչափ աշխատանքս չկորչի . հիմա ալ կը պահպանեմ , որովհետեւ իմ փորածս է . միա՛կ բանը որ իմա է , իմ տեղծածս : Միա՛կ բանը , ա՛յ , այդ փոսը , այդ դատարի փոսը , այդ միշտ դատարի փոսը , որ ինչքան փորես , այնքան աւելի դատարի կը դառնաս : Դատարի , դատարի , կը հասկընա՞ս , որ երբէ՛ք , երբէ՛ք չէ լեցելու , ոչինչո՞վ , ոչինչո՞վ : Գնա՛ , դուն ալ գնա փորէ քու փոսդ ու թող իմինս ինձի : (Կ'ուզէ հեռանալ)

**Արեղան** — *Կեցի՛ր, կեցի՛ր, մա՛րդ. քեզի հարց մէն ալ,  
դո՛ւն, որ այդքան խմաստուն ես:*

**Ճգնաւորը** — *(Կէս մը ժայռին ետեւէն) Մարդը խմաստ՞ւն...:  
Ունայնութի՛ւնս: (Դուրս)*

5

Արեղան կ'երբա նորէն փոսին գլուխը եւ իսուր ու մնայլ կը դիտէ մտածկոտ:

Քարերուն մեջէն դուրս կու գա կերպարանք մը ամբողջովին փաքրւածմ եզի նման ֆոյի մը մեջ: Ծանր-ծանր առաջ կու գա ու կը կենա Արեղային դէմը:

**Քօղաւորը** — *Ի՞նչ է, եկա՛:*

**Արեղան** — *(Դուրսը կը բաճարացնէ ու կը դիտէ թեթեւ զարմանքով ու տեսակ մը անփոթ) Դո՞ւն ալ անհնայմէ:*

**Քօղաւորը** — *Ինձի ինչո՞ւ կանչեցիր:*

**Արեղան** — *Կանչեցի՞ր. քեզի՞:*

**Քօղաւորը** — *Հոգիդ կանչեց ինձի ու եկա:*

**Արեղան** — *Հոգի՞ս:*

**Քօղաւորը** — *Ինչո՞ւ է հոգիդ մնայլ: Ի՞նչ կը խորհէիր:*

**Արեղան** — *Հոգի՞ս:*

**Քօղաւորը** — *Ըսէ՛, ու այդպէս ասուր մի՛ ըլլար:*

**Արեղան** — *(Փոսը մատնանիշ ընելով) Այ՛, նայէ՛:*

**Քօղաւորը** — *Ատ ի՞նչ է որ:*

**Արեղան** — *Կեա՛նքը:*

**Քօղաւորը** — *Կեա՞նքը. այդ նեղ ու մութ փոսը:*

**Արեղան** — *Այո՛. ունայնութեան փոսը:*

**Քօղաւորը** — *Ախ, վախցի՛ր ես այդ դատարկ փոսէն:  
Կ'ուզե՞ս լեցընեմ:*

**Արեղան** — *(Աշտուժ) Լեցընե՛ս...*

**Քօղաւորը** — *Իսկո՛յն. դժւար դործ չէ՛: (Կը մտնենա, կը կենա փոսին գլուխը և կ'ընկի իր կիսերգը խորհրդաւոր կանչող շարժումներով, եւ վերէն կ'ընկի մշուշի նման բան մը իջնել վար դեպի փոսը վերջապէս կարմիր ճառագայթներուն տակ. իջնող մշուշին մէջ աղօտ կը նշմարւին կարծես դէմքեր, մարմնի մասեր, տերեւ, ծաղիկ, կայծեր ու գոյներ):*

*Իջէ՛ք իջէ՛ք*

*կրազներ՛:*

*Իջէ՛ք զգո՛ւշ,*

*կրազներ,*

*շոյող, անո՛ւշ*

*կրազներ,*

*Իջէ՛ք, քնքուշ*

*կրազներ:*

*Ծաղիկ, կանաչ,*

*թարմ հիւսեր,*

*բաղդի կարկաչ*

*ու յոյսեր.*

*Դող ու անցուկ*

*ու կարօտ,*

*ձածուկ արցունք*

*վարանոտ.*

*Խելքի, մտքի*

*հակասում,*

*միշտ նո՛ր կեանքի*

*սպասում...*

*Իջէ՛ք, իջէ՛ք*

*կրազներ.*

*Իջէ՛ք զգո՛ւշ*

*կրազներ,*

չոյսդ անուշ

երազներ ,  
իջէ՛ք , քնքուշ  
երազներ :

Գլուանդ , ժպիտ ,  
գոյն ու բոյր ,  
աչիւր լճիտ  
ու համբոյր .

Իզձեր անլերջ ,  
անմեկին ,  
սազնասդ ու տնչ  
մոկեզին .

Օրօր , գրգիւ  
ու յոյզեր ,  
սրտի թրթիւ ,  
երգ ու սէր . . .

Իջէ՛ք , իջէ՛ք ,  
երազնե՛ր .

Իջէ՛ք , զգուշ ,  
երազներ ,

չոյսդ , անուշ  
երազներ ,

Իջէ՛ք , քնքո՛ւշ  
երազներ :

Աստղեր թովիչ ,  
բոց ու կայծ ,  
ցնորքներ վառ  
ու առկայծ .

Հաւատ ուժի ,  
մեծութեան ,

փառքի , կամքի

գոյութեան .

Շուինդ , լնդիւն ,

հպարտանք ,

իմաստութիւն . . .

բի՛ւր պատրանք :

Իջէ՛ք , իջէ՛ք

երազներ ,

Իջէ՛ք , զգո՛ւշ ,

երազներ ,

չոյսդ , անուշ

երազներ ,

Իջէ՛ք , քնքուշ ,

երազներ :

**Քօղաւոր** — Դէ՛ , եկուր ու ալ մի ըլլար ախուր :

**Արեղան** — (Նայելով) Լեցա՛ւ : Կուզէի ոտս դնեմ վրան :

**Քօղաւոր** — Դի՛ր :

**Արեղան** — (Մէկ ոտքով կը կենա փոսին վրա ) Եւ ես կեցա՛ծ  
եմ հիմա ունայնութեան փոսին վրա :

**Քօղաւոր** — Դուն կեցած ես հիմա երազներու վրա :

**Արեղան** — Այո՛ : Եւ փոքր լեցւած է : (Յանկարծ ուրախ  
ետ կը ցատկէ ու անըտս) Հէ՛յ , դո՛ւն , հէ՛յ , ճղնա-  
ւո՛ր , հէ՛յ , ունայնութի՛ւն , փոռդ լեցւած է , լեցւած :  
Իսկ դո՛ւն , քողակիր հմայո՛ղ , ս՛վ ես դուն :

**Քօղաւոր** — Ե՞ս . ես ալ երա՛զ մը :

**Արեղան** — Երա՞զ :

**Քօղաւոր** — Ես ա՛ն եմ , որուն սպասեր ես դուն տա-  
րինե՛ր ու տարիներ առա՛նց զխանայու . որը կանչէր  
եւ դուն խուցիւղ մննութեանը մէջ երկա՛ր , երկար  
զիշերները առա՛նց բառ մը արտասանելու . որուն

պատակեր է քու երխտասարդ ծարաւ սիրտդ անվերջ  
ու անխերջ առանց խոստովանելու: Ես ան եմ, ա-  
ռանց որուն անապատ մքն է այս կղզին և որուն  
ներկայութեանը անապատին մէջ գրախտը կը ծաղկի:  
Ահա՛ եկե՛ր եմ ևս քեզի:

**Արեղան** — (Ոգեւորած) Օրհնած ըլլա քու գալուստդ,  
քօղաւոր: Ըսէ՛ ինչպէ՛ս կանչեմ քեզի:

**Քօղաւոր** — Կանչէ՛ ինչպէ՛ս որ սիրտդ ուզէ. իմ անուն-  
ներս հաշիւ չունին: Դուն ծովը շատ սիրեցիր, կանչէ  
Շովիկ, եթէ կ'ուզես:

**Արեղան** — (Երազկոտ) Այո՛. ծովուն խայտուն պլեքները  
այս ժայռերու ոտքին միշտ քեզմէ են խօսեր ինծի:

**Քօղաւոր** — Եւ սիւքե՛րը տերեւներուն մէջէն, և հաւ-  
քերը թփերուն տակ, և կարկա՛չը աղբիւրի չրթուն-  
քին, ամենը, ամենը, ամեն որ ու ամենուր ինծմէ  
են խօսեր քեզի:

**Արեղան** — Կ'ուզեմ տեսնեմ քու երեսդ: Բա՛ց:

**Քօղաւոր** — Թո՛ղ. գուցէ զոջաս:

**Արեղան** — Կ'ուզեմ տեսնեմ քու երեսդ: Բա՛ց:

**Քօղաւոր** — Աղէ՛կ. եկուր ի՛նքդ բաց:

**Արեղան** — (Վախով ու դողով) Ե՞ս:

**Քօղաւոր** — Եկո՛ւր, բա՛ց:

**Արեղան** — (Դողդալով կը մօտենա և դողոջուն ձեռքով կը  
բռնէ քօղին ծայրը ու կը քաշէ: Քօղը կ'եյնա աղջկան թե-  
ւերուն կեցած է Սեղան՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ էր առա-  
ջին արարին մէջ: Արեղան ետ-ետ կը քաշուի հիացած ու  
խեղագար) Սեղա՛ . . .

**Սեղա** — Ի՛նչ է. ահա՛ ևս:

**Արեղան** — (Հետզհետէ աւելի ու աւելի յափշտակած) Օ՛,  
դո՛ւն. դուն իմ էութեանս համայքը, դուն թագու-  
հին իմ մտքերուս. դուն իմ սրտիս ծո՛վը, դուն

փոթորի՛կը իմ հողիս: Արեւուն հորքն ևս դուն,  
ծովերուն յայլքն ևս դուն, ընտրեման պարզեւն ևս  
դուն ինծի: (Կը նետու գետին) Թո՛ղ, թո՛ղ փաթթելիմ  
ոտքերուդ, թող համբուրեմ կոխած հողդ, համբու-  
րեմ այդ ձերմակ հագուստիդ անարատ փեշերը . . .  
(Կ'ուզէ դալարել անոր ոտքերուն, որ աղջկան կերպարանքը  
կը մշուշոտի ու կ'աներեւոյթանա Արեղան գրկելու գերքով  
ինկած է անշարժ այն տեղը, ուր քիչ մը առաջ ունայնութեան  
փոսն էր)

6

Խորքի ժայռերուն մեջէն կ'երեւան Աղամ ու Սիմօն  
վանակաները, բեւեհուն մեյ-մեկ բաւկինակ՝ մեջը լիբ:

**Սիմօն վանական** — Դժոխքի ձամբա է, դժողքի ձամբա:  
Բռնէ՛ տեսնեմ սա ձեռքս:

**Աղամ վանական** — Օգնելով ընկերօջը, որ վերի ժայռէն վար  
եջնէ՛ Նայէ՛, հայր Սիմօն, ան ի՛նչ բան է հոն. կար-  
ծես մարդ ըլլա դեռինը ինկած:

**Սիմօն վանական** — (Խաչ կը հանէ ետեւը) Յանուն Յի-  
սուսի Գրիտոսի: Մա՛րդ, այսքան հեռունե՞րը.  
դժբաղդութիւն մը պատահած չըլլա՞: (Կ'ըջնէ ժայռերէն  
և երկուքով զգուշ կը մօտենան)

**Արեղան** — (Սնոնց ոտքի ձայնէն կը բարձրացնէ գլուխը ու  
սալշած կը նայի առջեւը) Գնա՛ց . . . : (Կը նայի շուրջը, կէս  
մը կ'երնէ ու կը նստի)

**Սիմօն վանական** — Ա՛խ, դո՛ւն ևս, Արեղա՛: Կ'աղօ-  
թէ՛իր. ինչո՞ւ այսքան հեռուները:

**Աղամ վանական** — Վախցա՛նք:

**Արեղան** — (Կ'երնէ ոտքի, կը նայի անոնց ցրած արտայայտու-  
թեամբ և յանկարծ ուշադիր կ'ըստի գետինը բան մը փըն-  
տելու)

**Աղամ վանական** — Ի՛նչ կը որոնես, Արեղա՛:

**Արեղան** — Ո՞ւր է. ճիշտ հո՞ս պիտի ըլլար: Ո՞ւր է փոսը, ո՞ւր է այն փոսը:

**Աղամ վանական** — Ի՞նչ փոս, Արեղա՛:

**Արեղան** — Հա՛, իրա՛ւ, մոռցա՛. չէ՞ որ լեցուց:

**Աղամ վանական** — Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ:

**Արեղան** — Ան... անիկա... երա՛ղը:

**Սիմոն վանական** — (ժպտուն) Ա՛խ, երա՛ղ ես տեսեր: Գունդ տարեր էր, հա՞:

**Արեղան** — Երա՞ղ... (Յանկարծ վրա կը նետւի Սիմոն վանականին, շոշափելով անոր մարմինը, պինդ-պինդ թափ տալով անոր թեւը) Իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն... իսկ դո՞ւն...

**Սիմոն վանական** — (ետ-ետ քաշւելով) Տէր Յիսուս-Քրիստոս, դուն խափանես չարը:

**Արեղան** — Իսկ ասիկա՞, իսկ ե՞ս, իսկ այս վա՞նքը, այս անապա՞տը...: Ի՞նչպէս իմանամ՝ ո՞րն է քուն, ո՞րն է արթուն. ա՛ն, հո՛ն, անս՛նք, թէ՞ հոս՛, դո՛ւք, ե՛ս...

**Աղամ վանական** — Սթափւէ՛, Արեղա՛, սթափւէ՛: Ի՞նչ երաղ, ի՞նչ բան. ա՛յ, անիկա Սիմոն հայր-սուրբը, ասիկա ալ ես՝ մեղաւոր ծառաս: Կղզիի գագաթն էինք, լիճանք սունկ հաւաքելու. քարէ քար, ժայռէ ժայռ հեռացանք մինչեւ հոս. այս կողմերը սքանչելի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողվեր եմ, նայէ՛. հրաշալի սունկէ-սպաս պիտի ըլլա:

**Արեղան** — (Յանկարծ) Իսկ եթէ՞ դուն ինքը սունկ մըն ես միայն, հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ըստւերին ե քունիդ մէջ կ'երազես միայն, իրբեւ թէ վանական մըն ես ու եկեր ես սունկ հաւաքելո՞ւ:

**Աղամ վանական** — Խեղքի եկուր, Արեղա՛, ինչե՛ր կը խօսիս:

**Արեղան** — (Շարունակելով) Կամ գուցէ այն ժայռի սուերն

եւ դուն, քարի կտորի մը սուերը, որ խնկեր ես հոս ու կ'երազես, թէ մեղքերուդ յաղթած սուերը մըն ես դուն: Ո՞րն է երազը, ո՞րը արթուն. ըսէ՛, եթէ գիտես. ե ի՞նչ բան է ինքը երազը:

**Սիմոն վանական** — (Վտխցած ու խօսքը փոխելու ջանքով) Երթա՛նք, երթա՛նք, Արեղա՛, ուշ է արդէն: Դժոխքի ճամբաներ են, նա՛յէ. կատարեալ սատանայի սանդուղ:

**Աղամ վանական** — Երթա՛նք, որ հասնինք իրիկան հացին: Հսկում ունինք այս գիշեր:

**Արեղան**—(Համակերպած) Երթա՛նք: Ուտե՛նք սունկէ-սպասը ու կենանք հսկումի: Երազ մըն ալ ասիկա՛. բայց երկա՛ր, երկա՛ր երազ մը. չէ՞, հա՛յր-սուրբ:

**Աղամ վանական** — Չդիտե՛մ, Արեղա՛, ինչ ըսել կ'ուզես:



# Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

## ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԴԱՂԵՃ ՄԵ ՍԻՆԱԶԱՐԴ ՌԻ ԸՆԴԱՐՁԱԿ

Աջ կողմը խոր նիւ մը նեղ ու երկար լուսամուտ-  
ներով: Նիւի առջեւը փայտե բազկաբոռ, վրան բարձ,  
ոսփին սակը բարձ: 'Քովը' ցած ու փոքրիկ կլոր սեղան մը.  
վրան մեկ-երկու կանացի իրեր եւ գեղեցիկ ձեռագիր գիրք  
մը: Զախ կողմը երկար դիւան. ամեն կողմ գորգեր: Ճակատը  
սիւններ են, որոնք դանիներ կը բաժնեն խորքի սրահներ.  
սիւններուն մէջ մուր գոյնի վարագոյրներ:

Անդոր, մեղմ ու ախորժելի:

1

Իշխանուհին նստած է բազկաբոռին, ձեռքը սեղանին  
ու կը խօսի: Դեռ չբռնած գեղեցկուքիւն, բերել մը  
ներմկած մագեր. սգաւոր սիկնոջ արտաքին, պարզ ու  
ընտր:

Քիչ մը փոքրնի ու ետեւոք նստած է գետնը, գորգին  
վրա Դայեակը, որ ժիր ու դիւրաքեֆ, ալեւոր ու սեւա-  
զգեստ պառաւ մըն է:

Իշխանուհիին դէմը գլխաբաց կեցած է Գործավարը,  
ձեռքին ոլորած մագաղաքներ:

Գործավարը — Այո՛, Իշխանուհին եթէ կը հաճի:

Իշխանուհին — Աղէ՛կ, ինչպէս գիտես. համաձայն եմ:

Գործավարը — Իսկ Սեպուհի՞ն:

Իշխանուհին — Տղո՞ւս. կը կարգադրեմ:

Գործավարը — Լա՛ւ: Իշխանուհին ուրիշ հրաման ունի՞:

Իշխանուհին — Ո՛չ: Բարեւներս բարբին: Իսկ Սննան  
թող ինքզինքը աղէ՛կ հայի, իր այդպէս թող կազ-  
մովը: Կ'ըսես՝ մաքրոյ խիստ էր դժգոհ:

Գործավարը — Իշխանուհին պէտք է որ թողներ մեզի.  
Իր բացակայութիւնը շատ է զգալի ապարանքին մէջ:

Իշխանուհին — Է՛, ապարանքը կը դառնա և առանց  
ինձի: Այդ տարիքին մէջ մօր կարիքը չնչին է: Ես  
հասցուցեր, սրահներ, կատարներ եմ իմ պարտքս:  
Աշխարհին աւեր եմ իմ հարկս. հիմա քիչ մըն ալ  
իմ հանգիստս ու իմ հողիս:

Պառաւը — (Գործավարին) Թո՛ղ, դո՛ւն ալ, քու ապա-  
րանքդ ալ: Տիրուհիս նահատակ մըն է եղեր իր  
ամբողջ կեանքը, հիմա կ'ուզես, որ նորէն գար ու  
լինար կեանքի անիւլին տակ: Ո՛չ, ալ հերիք է. հան-  
գիստ է պէտք և մեզի, գոնէ մեր օրերուն վերջին:  
Նայէ՛, այս անդորը ու լսիկ մենարանը, ոչ-մէկ  
արքունիքի հետ չեմ փոխեր:

Գործավարը — Ճի՛շտ է. սիրուն տեղ է Յամաքաբերդը,  
սիրուն ու հանգիստ. Սեւանի լի՛ճը, դէմի կղզի՛ն:

Իշխանուհին — Եւ վերջապէս կ'ուզեմ՝ մօտիկ ըլլամ իմ  
եկեղեցիիս, որ կը շինուի. տես՛, աչքիս տակը:

Գործավարը — Գիտե՛մ Իշխանուհու բարեպաշտութիւնը.  
գիտե՛մ անոր զթոտ սիրան ու առատաձեռնութիւնը:  
Հոս ամեն քայլիս անոր ողորմածութենէն կը խօսին  
ու կարեկցութենէն: Բարերարւածները անչա՛փ, գի-  
տե՛մ: Իզուր չէ անշուշտ, որ սրբուհի կը կանչեն:

Իշխանուհին — (Փպտուն) Իրա՞ւ: Թող կանչեն, անունը  
ոչինչ չի փոխեր: Բան մը պիտի ընէի՞, թէ չէ, այս  
մենաւոր խուլ անկիւնը:

Պառաւը — Մանաւանդ սիրուհիիս պէս անկերջ հոգա-  
տարութեան ու խնամկող սովոր սրտի մը համար:

Եւխանուհին — Կին ըլլալը՝ հոգ ըսել է, Եղիա՛ս, իսկ մայրը՝ ինամբ :

Գործադարը — Հրաման կու տա՞ իշխանուհին . որ մեկնիմ :

Եւխանուհին — Ե՞րբ կ'ուզես՝ ճամբա ինաս :

Գործադարը — Այսպէ՛ս, ժամէ մը :

Եւխանուհին — Աղէ՛կ, Աստուած հետդ :

Գործադարը — Առողջ մնա իշխանուհին : (Կը ծռել, կը համբուրէ խոնարհ անոր ձեռքը ու մէջի վարագոյներէն կ'եւնէ դուրս) :

2

Եւխանուհին — (Գիչ մը լուռ, և ետքը հտուտանքով) Է՛, կեանքը որքա՛ն քիչ բան ունի մեզի տակու :

Պառաւր — Մի՛ տրանջար . քիչ ունի թէ շատ . ինչ որ ունի քեզի աւեր է :

Եւխանուհին — Այդպէս կը մտածես և դո՞ւն :

Պառաւր — Ծշմարտութիւնը ատ է :

Եւխանուհին — Այն ատեն շատ խղճուկ ու աղքատիկ է ինքը կեանքը :

Պառաւր — Գուցէ՛ :

Եւխանուհին — Ա՛խ, ինչպէս ախուր է այսօր սիրաս :

Պառաւր — Ամպոս է օրը :

Եւխանուհին — Ամպոս է դուրսը . անձրեւ է ու թուխպ հողիխ մէջ : Բե՛ր ինձի աւետարանս :

Պառաւր — (Ոտքի կ'եւնէ ու քիչ մը որոնելէն ետքը) Հո՛ս է, թեւիդ տակը :

Եւխանուհին — (Վերցնելով ու բռնալով) Հա՛, մտցիր էի :

3

Նածիբօս վը — (Սեւաղգեստ կին մըն է, որ վարագոյրը ետ ընելով կը խօսի խոնարհ) Վանահայր հայր-սուրբն է, կ'ուզէ ականջ իշխանուհին :

Եւխանուհին — Հայր-սուրբը :

Նածիբօս — Այո՛, իշխանուհի՛ : Ի՞նչ կը հրամայէ իշխանուհին :

Եւխանուհին — Հո՛ս առաջնորդէ : (Գիրքը ձեռքէն կը դնէ վարս) :

Նածիբօս — (Դուրս) :

Պառաւր — Ա՛յ, աղէ՛կ եղաւ . սիրտդ քիչ մը կը բացուի : Դուն միշտ ուրախ ես, երբ քեզի քու եկեղեցիէդ կը խօսին :

Եւխանուհին — Բա՛ց վարագոյրը :

4

Պառաւր եւ կ'ընէ սիւներուն մեջի վարագոյրը եւ բռնած ալ կը մնա պահպառանգով : Կը մտնէ Վանահայրը ու շիտակ դէպի Եւխանուհին, որ ոտքի կ'ելնէ :

Վանահայրը — Ասածու օրհնութիւնը քու վրայդ, իշխանուհի՛ :

Եւխանուհին — Եւ քո՛ւ, հայր-սուրբ : Ի՞նչ լուրեր վանքէն :

Վանահայրը — Աղօթք և օրհնութիւն :

Եւխանուհին — Ո՛չ, եկեղեցի՛ն :

Վանահայրը — Օր օրի կը լրանա ու կը դառնա տուն աղօթքի ու ներքնասոյղ խոհանքի :

Եւխանուհին — Ի՞նչպէս եղաւ աջակողմեան նիւը :

Վանահայրը — Այնպէս, ինչպէս որոշեցինք անցած օր :

Եւխանուհին — Ուրեմն երկու սիւներուն հասեւր, ուրոյն կամարով :

Վանահայրը — Այո՛ : Ո՛չ, Ինչպէ՞ս թէ սիւներուն հասեւր : Սիւներուն կո՛ղքը :

**ԻՇխանուհին** — Միւներուն կտուր: Չէ որ... սիւնը  
այսպէս...: Եղիսա՛, յատակադիծը տա՛ս:

**Պառաւր** — (Որ քիչ մը հեռուն կեցած էր ձեռքերը կրծքին  
պատկառանքով, կ'երթա պատի պահարանէն կը բերէ ուրած  
մագաղաթ մը)

**ԻՇխանուհին** — (Փռելով մագաղաթը իր փոքրիկ սեղանին վրա)  
Նստէ՛, հա՛յր-սուրբ: Ա՛յ, նայէ՛:

**Վանահայր** — Ա՛ս քեզի սիւները, աս ալ կո՛ղքը:

**ԻՇխանուհին** — Իրա՛ւ է: Ինչ կը նշանակէ, որ այդ  
կտորը իրականին վրա դեռ չեմ տեսած: Երեւա-  
կայելը երբէք ան չէ՛, չնայելով՝ ինչքա՛ն, ինչքա՛ն  
նայեր եմ այս յատակադիծին վրա: Գիտե՛ս, յաճախ  
ամբողջ գիշերներով այդ շէնքի մասին կը մտնեմ,  
բոլոր անկիւնները, բոլոր մանրամասնութիւնները,  
ամեն մէկ քարը: Այնպէ՛ս բոլորը մօտ է սրտիս,  
այնպէս կապւած է հոգիիս, կարծես ամեն մէկ քարը  
ես եմ դրեր, ես եմ շիներ:

**Վանահայր** — (կատակով) Այո, իշխանուհի՛, ես կը կարծէի,  
թէ շինողը ես եմ, արդիւնքը եղաւ՝ որ դուն շի-  
նեցիր:

**Պառաւր** — Ճշմարի՛տ է. Մարիամ Աստուածածնի այդ  
տաճարը իմ Մարիամ իշխանուհիիս ձեռքի գործն է:

**Վանահայր** — (Մտածկոտ) Այո՛, դո՛ւն շինեցիր, իշխա-  
նուհի՛:

**ԻՇխանուհին** — Ո՛չ, հայր-սուրբ, ես չշինեցի այդ եկե-  
ղեցին. մե՛նք շինեցինք այդ եկեղեցին, մե՛նք, ես  
ու դուն: Միասին ենք խորհեր, միասին ենք ոգե-  
ւորւեր, միասին ենք կազմեր ու միասին ալ կեր-  
պարանաւորել: Եւ այնպէս հիւսւած է եղեր այդ բո-  
լորը իրարու, որ այժմ բնաւ չզխտեմ ս՛րն է որ  
ինձմէ է ծներ և ո՛րը քեզմէ: Կը յիշե՛ս, հա՛յր-սուրբ,  
մեր այն միասին խորհումներուն ժամերը:

**Վանահայր** -- Կը յիշե՛մ, իշխանուհի՛. բազդաւոր բան  
է կառուցելը, մանաւանդ տաճար մը, ուր քու  
Աստուածդ է բնակիլու:

**ԻՇխանուհին** — Աղւո՛ր բար: (Երազկոտ) Կեանքիս ամե-  
նչն քաղցր վայրկեաններն են եղած, երբ մենք միա-  
սին այս նոյն սեղանին երկու կողմը նստած մեր  
երեւակայութեան մէջ ստեղծեր, կառուցեր ենք այդ  
չէնքը:

**Պառաւր** — Եւ որու ճակտին քանդակւելու է քու ա-  
նունդ, դարէ՛ դար պատմելու բոլորին քու բարե-  
պաշտութիւնդ ու աստուածսիրութիւնդ:

**ԻՇխանուհին** — Թո՛ղ մօր ու դայեակի քու այդ մնախա-  
ռութիւնդ, Եղիսա՛, ձգէ՛ մեզի առանձին ու մի՛  
խանդարեր:

**Պառաւր** — (Բրթմանքով դուրս)

**ԻՇխանուհին** -- Այո՛, կեանքիս ամենաքաղցր վայրկեան-  
ները. չեմ քաշելիր կրկնելու, ինչ որ ճշմարտան է.  
չե՛մ ուզեր քաշելի: Ինչո՞ւ աչքդ կը ձգես դեպիս.  
ո՛չ, պէտք չէ որ դեպիս ձգես: Ես ամբողջ կեանքս  
չխառի եմ նայեր ամենուն երեսին և կ'ուզեմ որ  
ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը յարգանք  
ունիմ, շիտակ նային իմ երեսիս:

**Վանահայր** — Չեմ հասկընար ինչ կը խօսի Իշխանու-  
հին: Ես պատճառ չունիմ ոչ-մէկուն առջեւը աչքերս  
գետին ձգելու:

**ԻՇխանուհին** — Բայց ճշմարտութիւնն ան է, որ ես ու  
դուն կը վախնանք իրարու աչքի մէջ խոր ու չի-  
տակ նայելու:

**Վանահայր** — Իշխանուհի՛:

**ԻՇխանուհին** — Թ՛ո՛ղ, թ՛ո՛ղ, մի՛նչևեւ ե՛րբ: Այլ լեցւեր է բաժակը: Ի՛նծի համար սաստիկ ծանր է ստիկա ու վիրաւորիչ: Ի՛նչո՞ւ, ի՛նչ յանցանք ենք գործեր:

**Վանահայր** — (Ոտքի ելնելով) Իշխանուհին թող ինձի ներքէ, պէտք է մեկնիմ:

**ԻՇխանուհին** — Ո՛հ, ո՛հ, հայր-սուրբ, մի՛ փախչիր: Եւ ի՞նչ օգուտ փախուստը. դուն քու հոգիէդ չես կրնար փախչիր: Նստէ՛, նստէ՛, պէտք է որ խօսիմ: Ամբողջ տարի մըն է, որ ես հոս եմ, ամբողջ տարի մըն է չրթունքիս է այդ հարցը և որ շարունակ վախցեր եմ տալու. իսկ այդ վախը խոր կը վիրաւորէ իմ արժանապատուութիւնս. կարծես երկու մեղաւոր ըլլանք դէմ-դէմի կեցած, որոնք ստիպւած են ամօթով իրենց հոգին ծածկելու:

**Վանահայր** — Ես չեմ հասկընար, ինչ ըսել կ'ուզէ Իշխանուհին:

**ԻՇխանուհին** — Չեւ հասկնա՛ր...

**Վանահայր** — Ըսածներէդ չհասկցա ևս ոչինչ:

**ԻՇխանուհին** — Ոչի՛նչ, Յովհաննէ՛ս:

**Վանահայր** — (Խոյթւածի նման կը ցնցուի) Իշխանուհի՛... (Ու ծանր կ'ելնէ ստքի):

**ԻՇխանուհին** — (Նոյնպէս ոտքի ելնելով) Մի՛տքդ է արքունի ամարանոցը, մեր փոքրիկ աւազանի եզերքին, վերջապոյտի այն իրիկունը ասկէ ուղիղ քսանընկնդ տարի առաջ:

**Վանահայր** — Եւ այդ քսանընկնդ տարիներուն ետեւէն դեռ կը յիշէ Իշխանուհին այն քանի մը հասարակ խօսքերը՝ որ փոխանակեր ենք հոն իրարու հետ:

**ԻՇխանուհին** — Յիշեր եմ ևս մի՛շտ:

**Վանահայր** — Երախտապարտ եմ, իշխանուհի: Մեծ պատիւ մը, որ ես ընաւ չեմ յանդգնած երեւակայելու: (Քիչ մը լուռ. վերջը հետզհետէ գլուխը բարձրացնելով) Միայն... միայն այն Յովհաննէսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մտցեր Իշխանուհին, այն Յովհաննէսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթէ ձերունի մը, հեռու արքունիքէն ու ամենքէն, որ եկեր է քեզի հետ կառուցւող շէնքի ծախքերուն մասին խօսելու:

**ԻՇխանուհին** — Յովհաննէսը մեռեր է գուցէ քեզի համար, չգիտեմ, բայց ո՛չ ինձի: Ան միշտ կենդանի է եղեր հոգիիս մէջ և կենդանի ալ կը մնա: Անոր պատկերն է, վանահայր, միակ պայծառ կէտը իմ ամբողջ կեանքիս մէջ:

**Վանահայր** — Բայց ատ ըսողը կին մըն է, որ ամուսին է ունեցեր:

**ԻՇխանուհին** — (Տեսակ մը ընդհատելով) Եւ խիտ արժանաւոր ամուսին մը, որ ես միշտ յարգեր եմ խորապէս: Եւ խորապէս ալ տանջւեր, որ յարգանքէ տարրեր բան մը անոր տալու անկարող եմ եղեր:

**Վանահայր** — Բայց ատ ըսողը կին մըն է, որ զաւակներ է ունեցեր:

**ԻՇխանուհին** — (Խիտ) Ես կատարեր եմ իմ պա՛րտքս: Եւ շատ ծանր է եղեր սրտիս, որ պարտաւորութենէս աւելի ոչինչ չեմ կրցեր տալ զաւակներուս: Ունեցեր եմ ամեն ինչ և ամեն ունեցածս աւեր եմ իմ հարազատներուս. բայց բազմաւորութիւն ոչ-մէկուն չեմ տւեր և ոչ-մէկէն ալ չեմ ստացեր:

**Վանահայր** — (Կեցած է լուռ և ունքերը կետած):

**Իջխանուհին** — Լսէ՛. պէտք է ըսեմ բոլորը, որ մեր մէջէն վերնա այս անախորժ լարուածը մի անգամ ընդ միշտ: Նայէ՛, ես պառաւ կնիկ մըն եմ, և դուն ինքզ ըսիր քիչ մը առաջ, որ ծերունի ես արդէն. վախնալու ոչինչ չունինք, քաշուելու ալ ոչինչ չունինք, քանի որ մաքուր է մեր խիղճը: Այս քոզարկուածը զգացումներու այս խեղաթիւրուածը վայել չէ մեր դէմքին, ո՛չ քու և ո՛չ ալ իմ: Լսէ՛, ինչ որ չբռնուցանէք երբէք չէ արտասաներ և ինչ որ սակայն լեցուցեր է իմ ամբողջ էութիւնս: Իմ կեանքիս գորշ երկընքին դուն ես եղեր ինձի համար լոյսի աստղը, ապրելու իմաստը, առանց այդ լոյսին, առանց այդ միտքարութեան, ես չգիտեմ, ինչու էի ապրելու:

**Վանահայր** — (Ձեռքովը ճակատը սեղմած) Հերի՛ք է, հերի՛ք է...

**Իջխանուհին** — Քու պատկերդ է եղեր իմ դէմս մննութեանս վայրկեաններուն: Ինքս ալ ազէկ մը չգիտեմ այն ջերմ ազօթքները, որ սրտէս դուրս են յորդեր աւելի խաչկալին նկարի՞ն են ուղղւած եղ՛ր, թէ՞ քու պատկերիդ: Իրա՛ւ է, ես պաշտեր եմ քու պատկերդ իմ Աստուծս հետ միասին:

**Վանահայր** — Եւ չն՞ս վախցիր Աստուծմէ՛:

**Իջխանուհին** — Աստուծ՞: (Բորձրացնելով սեղանէն աւետարանը) Աստուած սէր է, վարդապետ:

**Վանահայր** — (Մտածկոտ գլուխը շարժելով) Այդպէ՛ս... (Յանկարծ) Իսկ հիմա՞:

**Իջխանուհին** — Հիմա՞: Հիմա ալ, տե՛ս, այս լուսամուտը, որ քու կղզիիդ կը նայի ու քու լուսամուտիդ, այն քու փոքրիկ լուսամուտիդ, որ մինչեւ կէս դիշեր անմար է ճրագը: Դուն երեւի կը կարդաս ու կ'ազօթես. ես ալ հոսկէ կ'աշխատիմ քու մաքերդ կար-

դամ ու քու ազօթքներդ: Միթէ՛ այս բոլորը հոգիդ չէ՞ր դիտեր:

**Վանահայր** — (Կտրուկ) Ո՛չ, ընա՛ւ:

**Իջխանուհին** — Իրա՞ւ: Մի՞թէ քու հոգիդ նոյնպէս լիքը չէ եղեր ինձմով, ինչպէս որ իմինս քեզմով:

**Վանահայր** — (Լուռ է)

**Իջխանուհին** — Պատասխան՞ տուր, ուրախ չէ՞ր, միթէ հոգիդ ուրախ չէ՞ր, երբ հոս այս մննութեան մէջ դէմ-դէմի նստած կը խօսէինք ժամերով ու կը ծրագրէինք: Պատասխան՞ տուր:

**Վանահայր** — (Անհանգիստ) Չգիտե՛մ. ես ոչինչ չգիտեմ:

**Իջխանուհին** — Չգիտե՛ս: Ես գիտե՛մ. և միշտ ալ վստահ գիտցիր եմ, որ կ'ապրիմ միշտ քու հոգիիդ մէջ, թէեւ տարիներու այս երկար շարքին մէջ հազիւ ութը-տասը անգամ պատահած ըլլանք իրարու մինչեւ հոս գալս. և շա՛տ աւելի նւազ մէկ-երկու խօսք փոխանակած ըլլանք իրարու, միշտ տափակ, միշտ անգոյն ու միշտ կողմնակի բառեր: Ըսէ՛, ճիշտ չէ՞ ինչ որ կ'ըսեմ:

**Վանահայր** — Թո՛ղ, իշխանուհի՛. հին, անցած-գացած օրեր, ի՞նչ իմաստ քրքրելը:

**Իջխանուհին** — Հայր-սո՛ւրբ, եղիր շիտակ ու պատասխան տուր: Այսօր պէտք է մաքրելն հին հաշիւները:

**Վանահայր** — Ի՞նչ կ'ուզես, կի՛ն, ի՞նչ կ'ուզես դուն ինձմէ: Ամբողջ կեանքիս կէսը տառապանք տւիր ինձի, տառապանք ու դառնութիւն, ջարդեցիր կեանքս, խորտակեցիր երիտասարդութիւնս, հիմա ալ մոխիրը քրքրել կ'ուզես:

**Իջխանուհին** — Իմ խեղճ Յովհաննէս...

Վանահայրը — Արդէն կեանքը տառապանքէ զատ ուրիշ  
ի՞նչ է աւեր ինծի... և քեզմէ առաջ և քեզմէ ետքը :

Թեխանուհին — Ա՛խ, ես զգացեր էի...

Վանահայրը — Վերջ տանք : Ի՞նչ միտք այդ հին ու մա-  
րած յիշողութիւնները խառնելը :

Թեխանուհին — Մարած...

Վանահայրը — Այո՛. այդ բոլոր անողորմ յուշերն ալ միւս  
բոլոր աշխարհային ցաւերուս հետ մէկտեղ սրտէս  
զուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վե-  
րարկուն :

Թեխանուհին — Սրտէդ զուրս քամեցիր...

Վանահայրը — Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ  
կայծերը :

Թեխանուհին — Ո՛հ, չմարեցան այդ կայծերը :

Վանահայրը — Իշխանուհի՛ :

Թեխանուհին — Ո՛հ, կ'ըսեմ քեզի. չմարեցան այդ կայ-  
ծերը : Աշխատեցար որ մարես, աշխատեցար, որ  
խաբես քեզի, օրօր ըսիր հողիւղ ու համոզելիր  
քեզի, թէ մարեր ես, բայց չը մարեցիր. չէիր  
կրնար :

Վանահայրը — (Խիստ) Իշխանուհի՛ :

Թեխանուհին — (Յած ձայնով, Եթէ մարեցիր, հապա ի՞նչ  
է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մե՛ր եկեղեցին :

Վանահայրը — (Սարսափած ետ քաշւելով) Լուէ՛, լուէ՛, իշ-  
խանուհի՛ :

Թեխանուհին — Ճշմարտութի՛ւնը, վարդապե՛տ : Մենք  
այդ եկեղեցին չենք շինած քու բարձրնալ Աստուծո՛ւ  
համար, ինչպէս որ միշտ կրկներ ես. մի՛ խաբեր  
քեզի. այդ եկեղեցին շիներ ենք մենք մեզի համար,  
մեր սիրու Աստծուն համար :

Վանահայրը — (Խորտակւած) Մարիամ...

Թեխանուհին — Այո՛. այդ քու եկեղեցիդ նւիրւած է ո՛չ  
թէ Մարիամ Աստուածածնին, ան նւիրւած է քու  
Մարիամ իշխանուհիւդ : Ըսէ՛, ճիշտ չէ՞ :

Վանահայրը — (Կեցած է լուս ու գլխահակ)

Թեխանուհին — Ըսէ՛, ճիշտ չէ՞ :

Վանահայրը — (Լուս է ու գլխահակ)

Անկիւնը յանկարծ կ'երեւնա ձերմակաւորը :

ձերմակաւորը — Ըսէ՛, ճիշտ չէ՞ :

Վանահայրը — (Կը ցընցւի, կ'ուզուի ու հայեացքը ձերմակա-  
ւորին յառած կը քարանայ)

Թեխանուհին — Ի՞նչ եղաւ քեզի :

ձերմակաւորը — Ըսէ՛, սրտն է նւիրւած այն եկեղեցին,  
այն քու նո՛ր շինած եկեղեցին :

Վանահայրը — (Լուս է)

ձերմակաւորը — Ըսէ՛, պե՛տք է որ ըսես, պե՛տք է  
խոստովանիս :

Վանահայրը — (Խորտակւած) Այո՛ : Ճի՛շտ է : Այդ... այդ  
եկեղեցին նւիրւած է... հի՛նս աստուածներուն :

ձերմակաւորը — Ի՛մ աստուածներուս :

Վանահայրը — Քո՛ւ աստուածներուդ :

ձերմակաւորը — (Կ'աներեւոյթանայ)

Վանահայրը — Ճի՛շտ է : Ես սղորմելի ու մեծափա մարդ  
մըն եմ. դոցեր եմ աչքերս ու կը կարծեմ թէ կը  
թռչիմ, պարզեր եմ թեւերս գոռոզ վե՛ր և կարծեր  
եմ՝ թէ հասա երկնքին :

**ԻՇխանուհին** — Մի՛ խօսիր այդպէս : Մեր սրտերուն  
այդ կապը , մեր այդ ամբողջ սէրը եղեր է սուրբ ,  
ջերմ ու ազնիւ , ինչպէս ջերմեռանդ աղօթքի մը  
մրմունջը , ինչպէս ընտիր կընտրուկին բայրը , որ  
դէպի երկինք կը մլտա :

**Վանահայր** — (Սչքերը միշտ յառած դէպի ձերմակաւորին  
երեւցած կողմը) Ո՛չ , ո՛չ : Ծշմարիտ է այս բոլորը ,  
բայց դեռ մի՛ յաղթանակիր . կանուխ է դեռ . դեռ կը  
տեսնւինք... (Ու արագ դո՛ւրս առնոց Իշխանուհին կողմը  
նայելուս)

**ԻՇխանուհին** — (Շւտք ու վախով) Յովհաննէ՛ս , Յովհան-  
նէ՛ս , հայր-սո՛ւրբ... (Թուլցած կ'ենա իր աթուխս)

Երրորդ Արար

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

### Վ Ա Ն Ա Յ Օ Ր Խ ՈՒ Յ Ը

Ճակասք քառակուսի ցամ լուսամուտ մը՝ հասարակ  
սախտակէ փեղկով: Լուսամուտին մէկ կողմը բանի մը շարք  
դարակ՝ լիք ամեն մեծուքեան ու ձեւի ձեռագիրներով  
ու մագաղաքներով: Գրադարանին ու լուսամուտին առ-  
ջեւը փայտե սեղան մը՝ վրան նստէն գրէր ու այլ մանր  
իւրեր: Գուռը կողմնակի, գրասեղանին դէմը:

1

Բաց լուսամուտէն արեւի առաս պաշտառ ոսկի  
շերտ մը ինկած է սենեակի յատակին ու սեղանին: Սե-  
ղանին առջեւը յոյսի այդ ողողումին սակ նստած է  
Վանահայրը՝ երկու արմուկը սեղանին ու զլուխը բաղած  
ափերուն մէջ:

Քիչ մը ասեմ լուռ է: Կամաց կը բացւի դուռը ու  
կը մտնէ Վարպէսը աշխատանքի փոշոտ ու աղտոտ հա-  
գուսներով: Քայլ մը կ'ընէ դէպի սեղանը ու կը կենա:

Վարպէսը — *Ինձի կանչեր էիր, վանահայր:*

Վանահայրը — *(Սնշարժ է):*

Վարպէսը — *Հայր-սուրբ, կանչեր էիր ինձի:*

Վանահայրը — *(Ծանր կը բարձրացնէ գլուխը ու կը նայի  
գլխոցնին) Հայր: (Քիչ մը լուռ) Գէ՛, ըսէ՛ նայիմ՝ հիմա  
ի՞նչ պիտի ընենք:*

Վարպէս — *Ի՞նչը, հայր-սուրբ:*

Վանահայրը — *Մենք հիմա ի՞նչ պիտի ընենք այդ չէնքը:*

- Վարպեսը — Եկեղեցին :
- Վանահայրը — (Գրուելը կը շարժէ դրահանն)
- Վարպեսը — Այրինքն ի՞նչպէս : Արդէն դիտես , հայր-սուրբ , որ մինչև Աստուածածնի տօնը աւարտած կ'ըլլա գմբէթը . մնացածը երկրորդական բաներ են :
- Վանահայրը — (Մտածկոտ) Մինչև... Աստուածածին :
- Վարպեսը — Ի՞նչն է որ քեզի հոգ կը պատճառէ , վա-նահայր :
- Վանահայրը — Ուրեմն... մինչև Աստուածածին կ'ըլլա աւարտած : Հը՛մ . այդպէս հաստատ դիտե՛ս :
- Վարպեսը — Ես իմ խօսքիս աէրն եմ , հայր-սուրբ :
- Վանահայրը — (Տաք ու կտրուկ) Ե՛ս ալ , ն՛ս ալ իմ խօսքիս աէրն եմ , վարպէ՛ս :
- Վարպեսը — Ուրե՛մն...
- Վանահայրը — Քանի՞ տարի է , որ դուն վարպետ ես :
- Վարպեսը — Ե՛ս . ի՞նչ գիտնամ . քսան մը կ'ըլլա :
- Վանահայրը — Ուրեմն քսան տարի է , որ կը շինես ու կը շինես . իսկ երբէք պատահե՞ր է , որ շինելէդ ետքը քանդես :
- Վարպես — Քանդե՞մ , իմ շինա՞ծս . ինչո՞ւ :
- Վանահայրը — Ինչո՞ւ այդպէս դարձացար : Չէ՞ որ շի-նելն է դժւարը , քանդելը գլուրին է միշտ :
- Վարպեսը — Այո՛ , ուրիշի շինածը : Իր շինածը քանդելը շատ դժւար է , հայր-սուրբ :
- Վանահայրը — (Հայացքը լուսամուտէն դուրս նետած ու երազկոտ) Դժւար է , դժւար , ի՞նչա՛րկէ . երբ մանուաւնդ կապ-լած է հին յիշողութիւններու , յոյզերու , վշտերու , երբ կապւած է անցեալիդ , երիտասարդ օրերուդ , չէ՞ , վարպէ՛ս : Դժւար է , ի՞նչարկէ : (Լուռ ու անկապել յ կը մնա քիչ մը՝ աչքերը լուսամուտէն դուրս . և յանկարծ գլուխը շրջելով՝ խիտ ու կտրուկ) Փակէ՛ սա փեղկը :

- Վարպես — Փակե՞մ , լուսամու՞տը :
- Վանահայրը — Այո՛ , այո՛ , լուսամու՞տը :
- Վարպեսը Բայց ի՞նչ ակորժիկի արեւ է . ինչպէ՛ս ու-րախ ու տաք :
- Վանահայրը — Ու փակես պիտի ճիշտ ատոր համար :
- Վարպեսը — Բայց...
- Վանահայրը — Արե՛ւ... Մեզի անպատճառ պէտք է արեւ , ուրախ ու տաք արեւ : Մենք դեռ արեւա-պաշտներ ենք . արե՛ւ... : Չենք կրնար սպրիք առանց ակորժիկի արեւի , առանց ուրախ ու տաք արեւի : Գոնէ լուսամուտ մը , դոնէ ձեզք մը , գոնէ գողուելի ներս սպրդած ճառագայթ մը... (Յանկարծ բռնեցքը գարնեղով սեղանին) Ո՛չ : Գոցէ՛ , կ'ըսեմ քեզի , ի՞նչ ես քարացիք :
- Վարպեսը — (Վարսնքով կ'երթա ու կը գոցէ փեղկը) Սենեակը գրեթէ մուր է :
- Վանահայրը — Այդպէ՛ս : Պէտք է խցւի այդ անցքը , ուրիշ արեւը կը նայի ներս , ուրիշ ցամաքը կը նայի ներս , ուրիշ աշխարհքը կը նայի ներս :
- Վարպեսը — Բայց բնակարանդ դարձաւ խաւար ու մռայլ , ինչպէս դամբարան :
- Վանահայրը — Ըսէ՛ ինչպէս եկեղեցի :
- Վարպեսը — (Ուտերը կը ցնցէ)
- Վանահայրը — Ինչո՞ւ կը վախնաս խաւարէն : Խաւա-րը խաւար է կարճատես աչքերուն : Բոլոր մեծ յղա-ցումները խաւարի ծոցն են գոյացիք , բոլոր մեծ խորութիւնները միայն խաւարի մէջ կարելի է տեսնել : Եւ այդ ձեր պաշտած լոյսը միթէ ծնունդդ չէ՞ խա-ւարի . ծնունդ մը ու մահկանացու մը : Խաւարն է միայն , որ կա ու կը մնա անմահ ու յաւիտեան : (Ելած է սփռել , կը խօսի մտածելով ու երթեւեկելով սեն-եակին լոյնքովը)

Վանահայր լուծ է ու մտառոյզ կ'երբեւեկէ դեռ  
Վարպէտին դէմը, որ կը վստահէ Աբեղան ու կը կենա դուան  
հովը լուռ ու խոնարհ:

Վարպէտը — Վանահայրը նոր հրաման ունի՞ ինծի տալու :  
Վանահայրը — Այո՛ . միայն ո՛չ այս վարպետանիս . նախ  
ուրիշ հաշիւ ունիմ մարտիս : Գնա՛ առայժմ : Ծնոր-  
հակալ եմ քեզի : Տէրը քեզի հետ : (Գոռնալով Աբե-  
ղային) Գո՛ռն ինչու ես եկեր , արեղա՛ :

Աբեղան — (Նստի կ'ըստատէ մինչեւ Վարպետի հեռանալը . վերջը  
զլուծելու աւելի խոնարհելով) Քեզի խօսիկը ունիմ :

Վանահայրը — Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամ-  
բան , արեղա՛ :

Աբեղան — Գիտե՛մ գիտե՛մ , որ այ փակ է ինծի համար  
քու հոգիիդ ճամբան : Կը հասկընամ , որ ասկէ ետքը  
ես քեզի համար անարդ ու անարժէք արտրած մըն  
եմ , իսկ դուն ալ ինծի : համար . . . (Կը լռէ)

Վանահայրը — Ըսէ , մի՛ քաշուի :

Աբեղան — Կ'ըսէի , եթէ գիտնայի : Ինքս ալ չգիտեմ .  
կ'ըզգամ միայն , որ մենք իրարու անհաշտ թշնամի  
ենք :

Վանահայրը — Թշնամի՞ . . . : Եւ հիմա ատիկա ըսելու  
համար է , որ եկեր ես ինծի :

Աբեղան — Ո՛չ : Ես եկեր եմ քեզի ուրիշ բան մը յայտ-  
նելու :

Վանահայրը — Խօսէ՛ :

Աբեղան — Գոռն ըսեր ես , որ հո՛ս այս կղզին կըրնան  
ուրիշ ասուածներ են ասրեր :

Վանահայրը — (Իր ցնցումը զստեւով) Ե՛տքը :

Աբեղան — Ըսեր ես՝ շո՛տ-շո՛տ տարիներ մեզմէ առաջ :

Վանահայրը — Ե՛տքը :

Աբեղան — Ըսեր ես՝ հիմա մեռա՛ծ են բոլորը :

Վանահայրը — (Լուռ է)

Աբեղան — Մեռա՛ծ , վաղո՛ւց մեռած :

Վանահայրը — (Լուռ է)

Աբեղան — Ահա՛ եկեր եմ քեզի ըսողու , որ սխալ ես ,  
այդ ասուածները մեռած չեն :

Վանահայրը — (Ահաբեկ ու սաշած) Իսկ դո՛ւն . . . իսկ  
դո՛ւն ասիկա ուրիշ գիտես :

Աբեղան — (Յած ու խորհրդաւոր) Ես . . . ես տեսա՛ :

Վանահայրը — Տեսա՛ր, դո՞ւն , իմ մէջ . ի՞նչպէս տեսար :

Աբեղան — Քու մէջը . ի՞նչպէս թէ՛ քու մէջը : Ո՛չ .  
ես տեսա հո՛ն . . .

Վանահայրը — Ո՛ւր :

Աբեղան — Հո՛ն , հին ճգնարաններուն շուրջը :

Վանահայրը — Ի՞նչ տեսար հոն ճգնարաններուն շուրջը :

Աբեղան — Տեսա՛ այն միւս . . . հին ասուածներուն ա-  
րարածները :

Վանահայրը — Արարած . . .

Աբեղան — Կը սխալիս , վանահայր : Քեզի կ'ըսեմ՝  
հին ասուածները կ'ասրին . ու հին ասուածներուն  
հետն ալ իրենց հին կիանքը : Երբ մենք հո՛ս , մեր  
մութ ու նեղ եկեղեցիներուն մէջ գետնատարած  
կ'ապաշխարենք , անոնք հո՛ն կ'ասրին ազա՛տ .  
կ'ասրին տաք ու սրայծառ արեւին տակ , կ'ապոյտ ծո-  
վուն վրա , ծփուն օդերուն մէջ , աւազուղ ավին .

կ'ապրին իրենց զւարթ ու եռուն կեանքը, լի, շար-  
ժուն ու յարափափախ: Մենք կ'ազօրժենք, անոնք  
կ'ապրին: Այս ծովը, այս սարերը, այս կղզին,  
անոնցն է այս բոլորը, մե'րն է միայն այս խուցերը  
ու եկեղեցին:

**Վանահայր** — Ո՛չ: Մերը չէ նաև ո՛չ այս խուցերը  
իրենց կեղծաւոր լուսամուտներով, ո՛չ ալ եկեղեցին:  
Անոնցն է, բոլորն ալ անոնցն է:

**Քրեղան** — (Նախ սալած, ետքը վախով) Հա՛յր, ատիկա ըստ-  
ղը դո՛ւն ես:

**Վանահայր** — Մեր Աստուածը հոս ոչի՛նչ չունի, ոչի՛նչ:

**Քրեղան** — Հա՛յր...

**Վանահայր** — Անոնցն է այս բոլորը: (Մտնալով Արե-  
ղային ու ցած) Ու քանզի՛ պիտի այս բոլորը, արե-  
ղա՛: Մինչև Աստուածածին հոս քար մը քարի վրա  
չի պիտի մնա ո՛չ այս խուցերէն, ո՛չ եկեղեցիէն:

**Քրեղան** -- Հա՛յր, կը ծագրե՞ս ինձի: Գէշ կտտակ է  
բրածդ:

**Վանահայր** — Ծագր մըն է եղեր իմ բրածներս մինչև  
այսօր ու դէշ կտտակ մըն է եղեր բրածներս մինչև  
հիմա: Բայց ասկէ ետքը ալ լուրջ է: Փոխելի պիտի  
այս կղզին վրա ամեն բան: Ոչի՛նչ, ոչի՛նչ չի պիտի  
մնա հոս ո՛չ արդի շէնքերէն, ո՛չ արդի հողիներէն:

**Քրեղան** — Իսկ հին աստուածները, հա՛յր:

**Վանահայր** — Պնդէ՛ դօտիդ, սրղի՛ս, կանչէ՛ կամքդ  
ու դո՛ւրս վանէ մէջէդ բոլոր այդ հին աստուածները:  
Քանզի՛, քանզի՛, եթէ պէտք ըլլա, քանզի՛ ամ-  
բողջ հողիդ: Բու հողիդ աղնիւ է, արժէ այդ աչ-  
խատանքը: (Դուրս)

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՄԵՇԵԱՆԻ ՄԸ ԳԱԻԻԹԸ

Երկու կողմը երկու շարժ բարձր ու յաղթ սիւներ:  
ձակասը մեջտեղը լայն ու մեծ կամար մը, որ ծածկւած  
է վարագոյրով: Կամարին երկու կողմերը նոյնպէս սիւներ  
են, որոնց ետէր քիչ մը սարածուքիւն ու քարէ պաս:  
Կամարի մուր-վարդագոյն վարագոյրին վրա ոսկեկար  
նանանչաւոր արեւ մը:

Վարագոյրին առջեւը տեսարանին խորքը դրւած է քա-  
րէ փոքրիկ բազին մը, որ կը մխա: Բազնի աջ ու ձախ  
կողմէն երկար քարէ սեղաններ քիչ մը ծուռ դիրքով ու  
քար էնսարաններ. սեղանները մեջտեղի բազնին հետ միա-  
սին պայտի ձեւը կը կազմեն:

Սիւներուն առջեւը բարձր ածանակներ ու առկախ  
ջահեր: Բազինը, սիւները եւ ածանակներուն մեջքը բո-  
լորն ալ գալարւած է ծաղիկներու ու կանաչի շղթայով:

1

Վառ է միայն երկու ջահ բազնին երկու կողմէն,  
խորքը. այնպէս որ անագին բարձր շէնքը դողդոջուն կես-  
մուրի մը մեջ է:

**Սեղա** — (Չախ կողմի առջեւի սիւներուն ետեւէն ետեւ ներս  
կը մտնէ, միշտ նոյն հազուստով, թեքւած քիչ մը դէպի  
առաջ ու երկու ձեռքովը սրտանց կանչելով) Եկո՛ւր, ե-  
կո՛ւր...

**Քրեղան** — (Երեւնալով) Սեղա՛, Սեղա՛...

**Սեղա** — Եկո՛ւր:

**Արեղան** — Տո՛ւր ինձի իմ հանգիստս, տո՛ւր ինձի իմ աղօթքներս. տո՛ւր իմ վստահութիւնս բրածիս, կեանքիս, ուժիս: Ամեն, ամեն ինչ կը վիլ շուրջս:

**Սեղա** — (Միշտ ետ-ետ դէպի աջ երթալով) Եկո՛ւր, եկո՛ւր:

**Արեղան** — Այլ չկա ինձի հանգիստ ո՛չ խուցիս մենու-թեանը մէջ, ո՛չ դուրսը, ո՛չ ալ եկեղեցիին կամար-ներուն տակը: Սաղմոսներուն մէջէն քու ձայնդ կը լսեմ, մտթ կամարներուն տակէն քու աչքերդ ինձի կը ժպտին, խունկի հոտին մէջէն քու թաց մազե-րուդ բոցը կ'ըզգամ...: Ինչո՞ւ, ինչո՞ւ կը ասնջևս ինձի:

**Սեղա** — Եկո՛ւր, եկո՛ւր:

**Արեղան** — Ե՛տ տուր ինձի իմ հպարտութիւնս, իմ մե-ծամիտ խորհրդածութիւններս. ե՛տ տուր ինձի իմ հաւատքս, իմ Աստուածս. տո՛ւր, ե՛տ տուր ինձի իմ Աստուածս...

**Սեղա** — Եկո՛ւր... եկո՛ւր... (Ու կը քաշէի, կ'աներեւոյ-թանս աջ կողմի սիւներուն ետին):

2

**Արեղան** — Գնա՛յց նորէն: Նորէ՛ն մինակ... (Նէնքի մէջ-տեղն է. կը կենս, գլուխը կը բարձրացընէ, կը նայի չորս դէն ու դարձնանքով) Աս ո՞ւր եմ ես: Աս ո՞ւր բերաւ ինձի:

Գուրսէն կը լսի հեռաւոր աղմուկ ու ձայներ: Շսապ ներս կը մտնէ ծերունի պաշտօնեա մը՝ ձեռքին լոյս ու արագ կը վառէ ջահերն ու մտները:

**Արեղան** — (Յանկարծ մտահալով) Ծերունի՛, ի՞նչ չէնք է աս. ո՞ւր եմ ես:

**Ծերունի** — Վա՛յ, վախցա, արևը վկա: Ո՞վ ես դուն:

**Արեղան** — Եկեղեցի՞ է, ի՞նչ բան է սա:

**Ծերունի** — Եկեղեցի՞. ի՞նչ յիմար լեզու կը խօսիս: Զարդաճներու ու խաչաճներու տեղը չէ՞ նոս, հանգի՛ստ եղիր:

Գուրսի աղմուկը հետզհետէ կը մօտենա:

**Արեղան** — Ի՞նչ ուրախ է նոս, ի՞նչ տօնական:

**Ծերունի** — Մնչո՛ւչտ. կեանքը ուրախութեան համար է աւած մեղի:

**Արեղան** — Եւ ասիկա ըսողը ալուր ծերունի մըն է:

**Ծերունի** — Այո՛, ծերանալը ծանր բան է. բայց հողիս առոյգ է դեռ ու սիրաս երիտասարդ. դեռ կընամ վայելի կեանքը և վայելեմ սլիտի, արեւս վկա, քանի շունչ կա շրթունքիս: Ի՛նչարկէ՛, բլլալ, քեզի՛ նման, երիտասարդ, ա՛, մեծ բազդ է: Ափսո՛ս որ ետ չեն դառնար այդ խնդ ու անդուսպ օրերը: Է՛նչ՛, եկա՛ն: (Կ'երթա դէպի աղմուկը)

**Արեղան** — (Կը քաշէի ետ-ետ ու կը ծածկել սիւներու ստեղծի ետեւը)

3

Չախ կողմի խորհի սիւներուն մեջէն ներս կը մտնեն Իբխանը իր գէնընկերներուն հետ՝ երեսուն հոգիի չափ. այդչափ մըն ալ մեհենական աղջիկներ. այլ եւ խուժք մը զինակիր պաշտակներ՝ ջահեր բռնած: Շենքը կը ողողի լոյսով: Այրերը սաղաւարդ ունին, վահան, մեջքերնուն սուր: Կանայք հագւած են քերեւ ու սպիտակ, մագերնուն մեջ իբրեւ զարդ խրած ունին ասսլ մը:

Ամենէն առաջ ներս կը մտնեն ֆանի մը ջահակիր ու խուժք մը աղջիկներ ուրախ ու ոգեւորւած: Ետէր Իբխանը շքապասուսած իր մեծերէն: Անոնց ետեւէն ալ զինուորականներն ու աղջիկները խառն, ուրախութեան բացականչուրիւններով. ջահակիրներ ֆովերէն ու ետեւէն:

**Աղջիկներու առաջին խումբը** — (Սընտրէն ներս սօք դնելու  
ուն պէս) *Կեցցեն յաղթողները . . . Կեցցեն քա-  
ջերը . . .*

**Քար կանաչ** — *Կեցցեն, կեցցեն յաղթողները :*

Իշխանը կ'երբա կանգ կ'առնէ բազմին առջեւը,  
բոլորը կը խոնին անոր ետեւը: Աջ կողմի խորի սիւ-  
ներուն մեջէն դուրս կու գա ֆուրմ մը՝ ներմակներ հա-  
գած. ուրիշ երկու ֆուրմ աջէն ու ձախէն:

**Քուրմը** — (Գալով *Իշխանին ընդատաջ*) *Քարի գալուստ Իշ-  
խանին: Քարի գալուստ մարտնչողներուն:*

**Իշխանը** — *Եկեր ենք մեր գէնքերը դնելու Քահն Վահա-  
գնի բազնին սօքը ու իր սուրբ ծագումը երկրորդա-  
գիւր:*

**Քուրմը** — *Իր սուրբ ծագումը ձեզի չօրավիզ, ձեր  
թուերը միշտ ամուր, ձեր սօրբերը միշտ հասու,  
ձեր վահանը անխորտակ: Լոյս ու արև Վահագնի  
օրհնութիւնը ձեզի հետ, դժւ.ք, որ յաղթողներն էք  
կեանքի կուլին մէջ. ձերն ըլլա միշտ յաջողու-  
թիւնն ու յաղթանակը:*

**Զօրականները** — *Յաջողութիւնը մեզի հետ, յաջողու-  
թիւնն ու յաղթանակը:*

**Աղջիկները** — *Քահն Վահագնի օրհնութիւնը ձեզի հետ:*

**Քուրմը** — *Դեռ բաւական ժամանակ կա մինչև մեր լոյս  
Տիրոջ ծնունդը, իշխան: Նստեցէք ու հանդսաա-  
ցէք: Նստեցէք Մեծն Վահագնի ու Մեծն Աստղիկան  
սեղանը: Նստեցէք ու վայելեցէք, դժւ.ք, որ կուտղ-  
ներն էք կեանքի մեծ կուլին մէջ, կուտղներն ու յաղ-  
թողները. ձերն է յաղթութիւնը, ձերն է վայելքը:*

**Զօրականները** — *Մերն է յաղթութիւնը, մերն է վայ-  
ելքը:*

**Քուրմը** — *Բացէ՛ք, աղջիկներ, Տիրոջ սեղանը, բացէ՛ք  
Վահագնի ու Աստղիկան սեղանը: Բերէ՛ք գինի անա-*

*պական և ուրախութիւն, բէրէ՛ք ձեր գեղեցկութիւնն  
ու ձեր նազանքը. բերէ՛ք, մինչև արժանանանք  
երկրորդագիւր լուսածին Վահագնին ու փրփրածին  
Աստղիկին: Բացէ՛ք, աղջիկներ, վայելքի սեղանը:  
(Իր երկու ընկերներուն հետ կ'երնէ դուրս)*

4

Իշխանն ու իր զենքերները կը հանեն սաղաւարդ-  
նին ու վահանները, կու սան զինակիրներուն, որոնք  
կ'առնեն ու սիւներուն մեջէն կը սանին դուրս: Աղջիկ-  
ներուն մէկ մասը կը վագէ ձախ սիւներէն դուրս, կը բերեն  
ձաղիկներ, առաւ շաղ կու սան ֆարէ սեղանին, կը բերեն  
սեղանի բազմանիւղ առանակներ եւ զինիով լեցուն  
արծաթ աւազաններ. կը բերեն ոսկի ու արծաթ քասեր,  
բաժակներ եւ եղջիւրէ գալարուն բմպանակներ:

Այդ պատահաւորեան միջոցին է, որ կը խօսուի.

**Երիտասարդ գօրական մը** — (Առաջ գալով) *Բայց կու էր,  
սա՛ք կու:*

**Հասակաւոր մը** — *Թող անպակաս ըլլա կեանքէն սուրը  
կու:*

**Երիտասարդը** — *Սարսափելի ջարդ կերան:*

**Ուրիշ մը** — (Կատակով) *Կը մեղքնաս. թող խնայէիր:*

**Իշխանը** — *Աս ո՞վ է, որ խնայելու մասին կը խօսի:  
Երբէ՛ք, որդիներս. կեանքի կուլին մէջ չխնայէք  
կրբէ՛ք. և ս՛չ-ոքի: Խնայելը թուութիւն է, մեղքը-  
նալը պարտութիւն: Զարկէ՛ք, ով ձեր դէմն է,  
ով ձեր ճամբան կը գոցէ: Ով որ քեզի կ'արդիէ  
քու թշնամիդ է:*

**Երիտասարդը** — *Զարկէ՛ք, յաղթողը մենք ենք:*

**Ուրիշ մը** — *Ի՞նչ լաւ է յաղթող ըլլալը:*

**Երիտասարդը** — *Յաղթող ըլլալ ու կուէն դառնալ:*

**ԻՇխանը** — (երթալով սեղանին գլուխը) Դէ՛, հիմա եկէ՛ք նրա-  
տինք Տիրոջ սեղանը. արդար հասուցում մեր դա-  
ժան կուխն :

Աղջիկ ու զօրական խառն կը նստին: Աղջիկներէն  
շատեր կը մնան ոտքի, կը մօտենան ու կը ծառայեն  
մեկուն-միւսին. մեկ-երկուք կ'երբան-կու գան: Զինա-  
կիրներ կը շարունակեն սերտուն Ետեր ու կ'արձա-  
նանան:

Բազմութեան կեսը նսած է արդեն, կեսը դեռ ոտքի,  
որ կը խօսի:

**Զօրական մը** — (Բաժակը վերցնելով) Կեցցէ՛ կուխը :

**Կողմի աղջիկը** — Կեցցէ՛ կուտղը :

**Գեղմի զօրականը** — Կեցցէ՛ գեղեցկութիւնը :

**Ուրիշ մը** — Կեցցէ՛ սէրը :

**Աղջիկները** — Կուխը կեանքն է աշխարհի :

**Զօրակաները** — Սէրը վայելքն է աշխարհի :

**ԻՇխանը** — (Երծողելով) Կեցէ՛ք, կեցէ՛ք. մի՛ շատուէք,  
է՛յ, դո՛ւք, կուխ, է՛յ, դո՛ւք, սէ՛ր: Մի՛ բռնկիւք  
այդպէս շուտ. նստեցէ՛ք հանգիստ, հպատակւինք հին  
կարգին: Թատերը պատրաստ, մեր մեծ Սատուն  
ձօն եմ ձօնելու :

Աղջիկները գինի կը լեցրնեն քասերը մեջտեղի գինիի  
աւազաններէն:

Խոր լուսիւն:

**ԻՇխանը** — (Վերցնելով գինիի մեծ եղջիւր մը՝ կ'երթա կը կենսա  
բազնին առջեւը, դէմքը գետն վարագոյրը դարձուցած ու  
գինին բարձր պահած) Բեղի՛, ով մեծդ Սատուած, վա-  
հազն արի, դուն արեւը աշխարհի, դուն կեանքն  
ու նախուժ, դուն կուխ և ուժ, դուն լոյս ու զսող,  
աղինւր դատող, փառքը ազատող, դո՛ւն որ յաղ-

Թեր ես վարի, խաւարի, ամեն մուայի, այլ և երկըն-  
քին սե ամպ ու թուխպին, դեւին, վիշապին աշ-  
խարհի ափին, քեղի՛, այգածին, ճառագայթածին,  
քեղի կը ձօնեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ  
արբեցընող գինիով, դո՛ւն, որ ապրելու ու կուկու  
արբեցումը կու տաս մեղի: Տէ՛ր, ընդունէ՛ մեր  
ձօնը: (Մէկ-երկու կաթիլ կը թափէ կրակին. ուժեղ ու  
պայծառ բոց)

**Չայնր ամեն կողմէն** — Ընդունւած է... ընդունւած է...  
է... ընդունւած է...

**ԻՇխանը** — (Դառնալով եր տեղը) Յաղթողի ձօնը յաղթողի  
բազնին վրա մի՛շտ է ընդունւած: Խմե՛նք, Կեցցէ՛  
կեանքն ու իր կուխը:

**Քոլորը** — (Ազմուկով ու իրարանցումով, նստած, կեցած, թատերը  
երարու բախելով) Կեցցէ՛ կեանքն ու իր կուխը:

Կը խմեն ու կը նստին. լուսիւն:

**Արեղան** — (Դողդոջուն քայլերով առաջ կու գա, ամբիկտ վա-  
րանքով, հայեացքը գետնին, ձեռքը առաջ մեկնած) Տէ՛ք  
թաս մըն ալ ինծի: Ես ալ կ'ուզեմ խմիմ:

Ընդհանուր զարմանք. ու խոր լուսիւն:

**ԻՇխանը** — Դո՛ւն հոս ինչ գործ ունիս, սեւազգե՛ստ:

**Արեղան** — Տո՛ւր թաս մըն ալ ինծի. ես ալ կ'ուզեմ  
խմիմ:

**ԻՇխանը** — Այս եղջիւրէն խմել ուղողը կուէն պէտք է  
որ գա:

**Արեղան** — (Աղաչաւոր) Մէ՛կ թաս մը միայն, իշխան.  
Ի՞նչ մեծ բան է որ: Անդամ մը միայն, մէկ ո՛ւմպ  
մը միայն քու այդ վայլքի եղջիւրէդ:

**Իճխանը** — (Արհամարտ) Տիրոջ սեղանին վրա, այժմ թշուառ, ոչինչ չի ստացելիր աղաչանքով. դնա մուրացիկներուն սեղանը:

**Զօրական մը** — (Ծաղրով) Է՛յ, բարեկամ, ո՞ր հողերն են քեզի այս կողմը նեակը:

**Ծրիսասարդ մը** — Գինիի հոտ է ինկեր ծոմ պահողին քիթը:

**Իճխանը** — Տարին տասը չափ ցորեն նւիրեր եմ ես իմ կալերէս ձեր անապատին. գնա՛ նստէ՛ ու կե՛ր:

**Հասակաւոր մը** — (Ծաղրով) Ու աղօթէ՛ քու աստուածներուդ մեր մեղքերուն համար:

**Հասս գօրական մը** — Մե՞ղք... (Փորը բռնած սաստիկ կը խնդա) Աղօթէ՛, աղօթէ՛ մեր մեղքերուն համար... մեր անթիւ մեղքերուն...

Ընդհանուր հոհոռոց:

**Արեղան** — Ի՛շխան, դուն ինձի չե՞ս ձանձար:

**Իճխանը** — Մշտդէս ալ աներես մարդ: (Բարեացած) Պիտի հեռանա՞ս, թէ չէ:

**Հասակաւորը** — Ես կը ձանձնամ քեզի, ես: Դուն այն ցած վախկոտը չե՞ս, որ սուրբ նեակը եւ գետին ու փախեր եւ կեանքի կուէն:

**Ծրիսասարդ գօրական մը** — Դո՛ւրս, հայդէ՛, ցա՛ծ արարած:

**Ուրիժ մը** — Դո՛ւրս, վախկո՛տ:

**Հասակաւորը** — Դուն այն մեծամիտ տխմարը չե՞ս, որ կ'արհամարես մեր վե՛նն Վահագնի նւիրած ամենէն վե՛ն նւէրը՝ կեանքը. ե. քու թշուառ գլուխդ չես ուզեր խոնհարես անոր լոյս պատկերին առջեւը:

**Յարսը** — Կորսրէ՛, կորսրէ՛ դուրս:

**Մէկը** — Կորսրէ՛ դո՛ւրս այս սուրբ վայրէն:

**Ծրիսասարդ մը** — Աստուածուբայ:

**Հասակաւորը** — Դուն այն ամբարտաւանը չե՞ս, որ երկրպագել չես ուզեր մեր փրփրածին Աստուածուհիին, ո՛չ անոր նւէրը կողով քրտուն, ո՛չ ալ կնոջ գեղեցկութեանն ու հմայքին:

**Աղջիկները** — Դո՛ւրս այդ ամբարտաւանը:

**Աղջիկ մը** — Ապո՛ւշ...

**Հասակաւորը** — Դուն այն բրբաղիկը չե՞ս, որ կ'արհամարես մարմինը, Վահագնի ու Աստուծան այդ հրաշալի կերտածքը:

**Աղջիկ մը** — (Քովի տղան մտանմնել) — Արհամարե՛լ այս մարմինը. այս առո՛ղջ, այս ճկո՛ւն, այս ուժե՛ղ մարմինը:

**Աղջիկները** — Սրբապիղծ՝...

**Ծրիսասարդ մը** — (Քովի աղջիկը մտանմնել) Այս քնքուշ, այս գեղեցիկ, այս հոյակապ մարմինը:

**Ծրիսասարդները** — Սրբապիղծ՝...

**Արեղան** — (Ամեն յարձակման տեւի ու տեւի խորտակած, տեւի ու տեւի գլուխը վար կը կտնէ ու քայլ-քայլ կը քաշուի ետ վերջին խօսքերուն մտած է արդէն իր նախորդ տեղը սրունքուն ետեւը ու ալ չեքեւար)

**Իճխանը** — Թողէ՛ք. թողէ՛ք կորչի: Ես ձօն ունիմ ձօնկու: Առէ՛ք թաակը:

Բոլորը կը լեցրնեն:

**Իճխանը** — (Եղջիկը առած կ'ընթա նորէն բագնին առջեւը ու գինին վեր բարձրացնելով) Քեզի՛, ո՛վ վե՛նդ գիցուէ՛ր, ո՛վ փրփրածինդ Աստուծի, դո՛ւն որ անարատ եւ ու սքանչելի, քու կլամ փրփուրիդ նման. դո՛ւն վերին գեղեցկութիւն, դո՛ւն գերազոյն հմայք ու քնքշութիւն, քու տւած լոյսիդ նման. դո՛ւն, որ աղբիւրն

ես սիրու, յոյսերու ու յուզումներու, քեզի օրօրօզ  
ալիքներուն նման. քեզի՛, ծովածի՛ն, քեզի կը նւիր-  
րեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ ու արբեցընող  
զինիով, դո՛ւն, որ գեղեցկութեան ու սիրու վայ-  
ելքը, հեշտանքը ու արբեցումը կու տաս մեզի:  
Ընդուէ՛, դիցուհի՛, իմ ձօնս: (Մէկ-երկու կաթիւ կը  
թափէ կրակին. ուժեղ ու պայծառ բոց):

**Իսխանը** — (Դառնալով իր տեղը) Յաղթողի ձօնը մի՛շտ է  
ընդունւած գեղեցկութեան բազնին վրա: Խմն՛ք:  
Կեցցէ՛ գեղեցկութիւնն ու սէրը:

**Ռուսը** — (Ազմուկով, ծիծաղով, կատակներով, ըմբռանկները  
իրարու բախելով) Կեցցէ՛ գեղեցկութիւնն ու սէրը:

Կը խմեն ու կը նստին. լռութիւն:

7

**Արեղան** — (Դուրս կ'երնէ իր անկիւնէն և վճռական կը մօտենա  
Հաստ զինւորականին, ձեռքը կը դնէ անոր ուսին ու կտրուկ)  
Տե՛ղ սուր ինձի:

Ընդհանուր զարմանք:

**Հաստ գօրականը** — Նորէ՞ն, ա՛յ մուրացկան:

**Արեղան** — (Սւրբ կտրուկ ու խէթ) Ե՛ս ալ կ'ուզեմ նստիմ  
այս սեղանին:

**Հաստ գօրականը** — Բեզի տեղ չկա այս սեղանին:

**Արեղան** — (Գրգռած ու դողալով) Ես պէ՛տք է նստիմ այս  
սեղանին:

**Հաստ գօրականը** — Տեղ չկա՝ ըսինք քեզի. սուր չունե-  
ցողին հոս տեղ չկա. ի՛նչ ևս կպիր, ձիո՛ւ-ձանձ:

**Արեղան** — (Յանկարծ կը փաթթի Հաստ դօրականի մարմնին,  
կը վերցընէ նստարանէն, կը գլտորէ գետին):

Նախ ընդհանուր անբարեհաճ յուզում ու իրարան-  
ցում, որը սակայն յանկարծ տեղի կու տա բուռն ու միա-  
համուռ ծիծաղի մը:

**Արեղան** — (Ծուռկը կը դնէ նստարանին և բռունցքը սեղանին  
զարնելով) Ես պէ՛տք է նստիմ այս սեղանին:

**Հաստ գօրականը** — (Վեր կը թռչի կատաճ, կը քաշէ սուրը ու  
կը վազէ Արեղանին վրա) Անդի՛ն, անդգամ, չեմ ուզիր  
պղծեմ այս սուրբ մեհնանին գաւթի՞քը քու պիղծ ար-  
խնովդ:

**Արեղան** — (Հաստատ ու ծանր քայլերով կը մօտենա անոր վայր-  
կեան մը շեշտ կը դիտեն իրար մտերգին: Յանկարծ Արեղան  
բոլոր ուժովը կը զարնէ դիմացնի թեւին, որուն սուրը կ'ընա  
վար: Արեղան խկոյն կը խէ ու նորէն Ծուռկը դնելով նստա  
րանին) Ահա՛, իշխան, և իմ սուրս:

Ընդհանուր ոգեւորութիւն, աղմուկ. հիացում:

**Աղջիկները** — (Իրարու) Ի՛նչ ուժ, ի՛նչ ուժ...

**Աղջիկ մը** — Ի՛նչ կրկաթի ձեռք:

**Հաստ գօրականը** — Ո՛չ, իշխան, դուն տեսար բռնութիւնը,  
դուն բոլորը տեսար. իմի՛նս է այդ սուրը:

**Չայներ** — Ո՛չ, ո՛չ. ալ ո՛չ:

**Երեսասարդ գօրական մը** — Բու մէջքդ դպաւ, գետին:

**Իսխանը** — Սուրը անորն է, որու ձեռքը որ է:

**Ռուսը** — Ապրի՛ մեր արդար իշխանը:

**Չայներ** — Ապրի՛ մեր նոր ընկերը:

**Մէկը** — (Մօտենալով պարտածին) Կը ներե՛ս, բարեկամ,  
բայց կը տեսնես, որ քեզի այլ ևս տեղ չկա հոս:

**Հաստ գօրականը** — Աղէ՛կ, ևս կ'երթամ. բայց մնք դեռ  
կը պատահինք, սեւազգե՛ստ. կամ սուրս կու տաս ին-  
ծի, կամ կեանքդ:

**Արեղան** — Կեանքս՝ դուցէ:

- Չայներ** — Գինի տէք յաղթողին :
- Երիտասարդ մը** — Վերցուր անոր թասը : Հիմա ան ալ քուկինդ է :
- Աբերան** — (Կ'առնէ Հաստ գօրականի ըմպանակը ու կը նետէ անոր ետեւէն) Ես չիմ ուղեր ուրիշին խմուկը :
- Աղջիկ մը** — (Թուր երկարելով) Ա՛ն , քա՛ջ , ի՛մ թասս :
- Աղջիկները** — (Երկնցնելով իրենց թասերը) Ա՛ն ի՛մ թասս . . . ա՛ն իմ թասս . . . առ իմինս . . .
- Աբեղան** — Իշխան , քիչ մը առաջ ես քու կողմերդ խնդրեցի , ա՛յն կողմերը , որով ձօնդ ձօնեցիր :
- Խախանք** — (Եղջիւրի մէջինը կը թափէ ու կու տա մօտի աղջկանը.) լուրջ ու հանգիստ) Լեցո՛ւր ու սուր իրեն :
- Աղջիկը** — (Կը կատարէ ու՛կու տա քնքշանքով . խորապէս սրտանց) Ա՛ն :
- Խախանք** — Առաջին թասը , նորե՛կ , դիպցի՛ր , միշտ վա՛հագնինն է . այդպէս է աշխարհի հին օրէնքը :
- Աբեղան** — Առաջին թասը . . . ձեր այս կեանքի սեղանին առաջին թասը ես կը խմեմ . . . կեանքի ու աշխարհի օրէնքովը . . . ես կը խմեմ կուլի՛ կենացը . կուլի , որ վերն է խաւարին ու ամպերուն մէջը , ինչպէս որ կ'ըսէք . կըուլի՛ , որ դուրան է , աշխարհի վրա , ուրկէ դուք կու գաք . կուլի՛ , որ հո՛ն է , ծովուն մէջ , փոթորկի ատեն , ուրկէ ես՛ կու գամ :
- Աղջիկները** — (Սաստիկ հետաքրքրի , փսփսուեալով երարու) Ծովէ՛ն . . . ծովէ՛ն . . .
- Աբեղան** — Թող օրհնուա՛ծ ըլլա՛ կեանքի կուլը : (Կը խմէ)
- Չայներ** — Մնո՛ւչ , անո՛ւչ . . . Յաջողութի՛ւնը , յաղթանակը միշտ քեզի՛ . . .
- Խախանք** — Աղէ՛կ : Լեցո՛ւր երկրորդ թասը :

- Աղջիկները** — (Իրար սնցած) Գինի՛ , գինի՛ :
- Աղջիկը** — (Նորէն կը լեցնէ ու կու տա սրտանց) Ա՛ն :
- Խախանք** — Երկրորդ թասը , նորե՛կ , դիպցի՛ր , միշտ Աստղիկինն է . այսպէս է աշխարհի հին օրէնքը :
- Աբեղան** — Երկրորդ թասը . . . ա՛յն , Աստղիկինն է . ա՛ն , որ ինչպէս կ'ըսէք , ծնաւ գեղեցիկ յորդ փրփուրէն , դուրս կրաւ սիրարձարձ՝ յուզուող ու եռացող ալիք ներքն . ա՛ն , որ փոթորկի անդունդներուն մէջ կը գալարի ու կը յափշտակէ քեզի : Իշխան , այս թասը ես կը խմեմ քու աղջկանդ կենացը : (Կը խմէ)
- Աղջիկները** — Սեղա՞ն . . . Սեղա՞ն . . .
- Խախանք** — Աղջի՛կս . . .
- Քաղցր** — (Սաստիկ յուզւած , վտխով ու սպասողական դերքով կը նային Իշխանին կողմը.)
- Հասակաւոր գօրական մը** — Իշխան , քու աղջի՛կդ . . .
- Խախանք** — Կեցի՛ր , ա՛յ աղա , կարծես քու դէմքդ ծանօթ է ինձի :
- Աբեղան** — (Թեթեւ հեղձանքով) Հիմա , իհարկէ՛ , իշխան , հիմա պէ՛տք է որ ձանձնաս :
- Աղջիկները** — (Իրարու , փսփսուեալով) Ո՞վ է , ո՞վ է , ո՞վ է որ :

- Քուրմը** — (Կ'երեւա վարագոյրին առջեւը) Պատրա՛ստ կղէք , յաղթողներ , ու թողէք սեղանը : Արեւելքը չիկներ է , ծովը ծիրանն է հագեր , ու թարմ բնութիւնը թափ կու տա քունը աչքերէն Մեծ Աստծուն երկրպագելու : Լուսասաուն ու լուսասաղը գրկելու են հիմա իրար , պատրաստ կղէ՛ք դուք ալ երկրպագելու :
- Ամենքը** — (Իսկզմն վեր կը ցատկեն իրենց սեղերէն , զննակերները շտապ կը բերեն սաղուարդները ու վահանները իրենց աէրերուն օրնք կը հագնին ու կ'երթան բազնին առջեւը երկու դու-

դահեռ տողաշար կը կազմեն երեսները վարագոյրին, աջ՝ գօրահանները, ճախ՝ աղջիկները») *(Մատենալուվ Աբեղային)*

**Թելսանը** — (Մատենալուվ Աբեղային) *Տո՛ւր ինձի ձեռքդ ու երթանք երկրպագելու. երկրպագելու մեր վեհ ասուածներուն:*

**Աբեղան** — *Երկրպագելու... նո՛ր ասուածներու:*

**Թելսանը** — *Հի՛ն ասուածներուն. միշտ հի՛ն ու միշտ նո՛ր ու միշտ յաւիտեան: Եկո՛ւր:*

**Աբեղան** — (Անշարժ ու յամսու կեցած է. աչքերը դետին)

**Թելսանը** — *Եկո՛ւր, կ'ըսեմ քեզի. շո՛ւտ. դո՛ւն, որ խմբիկը կուրի կենայր, դո՛ւն որ խմբիկը իմ Սեղաշի կենայր, պէ՛տք է որ դաս: Տո՛ւր ձեռքդ ինձի: (Կը բռնէ սնոր թեւէն ու տեսակ մը կէս-քաշելով կը սանի առաջ դրոյ տողաշարին մէջէն Բագնին մէկ կողմը ինքը կ'անցնի, միւս կողմը կը մնա Աբեղան:)*

Վարագոյրին ետեւէն կը լսւի շեփորի կանչը մեկ-երկու ելեւեջ, որուն կը յաջորդէ ֆուրմերու ուրախ ու յաղթական երգը: Երգի միջոցին կը բացւի կամաց-կամաց նակ-սի վարագոյրը եւ տեսարանի մնացած բոլոր մասերը հետզհետէ կը քաղւին մուրի մէջ:

Նորի բեմը, որ աւելի ալ բարձր է, կը ներկայացրնէ Սեւանի գագաթը իր աւերակով: Աջ՝ կեցած են ֆուրմերը, բոլորն ալ ներմակագրես, կուրծքերնուն ոսկի արեւ մը. ձախ՝ կեցած են ֆուրմիները, բոլորն ալ ներմակագրես, հերարձակ ու մազերնուն մէջ խրած խոտոր ասղ մը: Հեղ մը ֆուրմերը կ'երգեն, հեղ մը ֆուրմիները, վերջը բոլորը միասին:

Նոր բեմի խորքը հորիզոնն է՝ ծովուն ու երկինքի իրար կրպշող ծիրը: Երկինքը շառագոյն է, սեղ-սեղ դեղին, ծովը լերք կարմիր, սեղ-սեղ ծիրանի: Երգի միջոցին

հետզհետէ կը նմանուի հսկա արեւի մը սկաւառակը, որ կը բարձրանա կամաց-կամաց: Երբ կեսին չափը դուրս է եկած ջուրէն՝ արեւը կը բացւի ուսրէի մը պէս ու կափարիչը կ'իյնա ջուրին երեսը՝ արեւի ցոլիկն նման: Ուսրէին մէջը վառ կը փայլի աչք խօսք սուղ արծաթմարգրիս փայլով մը: Եւ այդ վառ փայլին մէջ կեցած է յաղթական Վահագնը, մերկ, բարձր, շիտակ, յաղթ ու առողջ, աջ ձեռքը առաջ պարզած, մազերն ու մօրուրը ասորական ձեւի եւ շեկ, աչքերը բոցոց: Անոր ձախ կողմը քերել քեք է ինկած նազանով ծովային խոտերու ու ծաղիկներու վրա Ասղիկը. սա քերել մը փաքքւած է Վահագնին ու գլուխը յենած անոր մարմնին. ինքը՝ մերկ, նկուն, նուրբ. մազերուն մէջ ահագին աղամանդէ ասղ մը ու մարմնին վրա մեկ-երկու քել ծովային նուրբ ու երկար սեգ:

Երգեցողութիւնը կը սեւէ մինչեւ ուսրէի լրիւ բացումը: Երբ երգը յանկարծ կը կտրուի, կը լսւի նորէն շեփորին կանչը ու բոլոր բազմութիւնը իսկոյն կը քափի գետնին խորը երկրպագութեամբ: Քրմերն ու ֆուրմիները կը խոնարհին մինջեւ մէջքը: Ոսքի կը մնա միայն Աբեղան՝ ուղիղ ու անշարժ:

**Քուրմը** — (Խուճեթն մէջէն, ահեզ) *Երկրպագէ, դո՛ւն, շառա՛ւթ:*

**Աբեղան** — (Անշարժ է:)

**Թելսանը** — (Սարսուփահար ու կիսաձայն) *Երկրպագէ՛, անմի՛տ:*

**Աբեղան** — (Անշարժ է:)

**Սեղա** — (Կ'երեւա յանկարծ բարձր բեմի սանդուղներուն վրա, հանդիսգ առաջ կու գա, կը կենա ուղիղ Աբեղային դէմը՝ քնքուշ ու հրամայական) *Երկրպագէ՛. երկրպագէ՛ ծովուն ու իր ասածուն:*

**Աբեղան** — (Նախ գլուխը կը թեքէ, ետքը ծունկերը քել-քել կը ծալւին ու յանկարծ կ'իյնա դետին)

Մասիկ դրդիւն մը. եւ մեկ անգամէն կը կորչի  
ամեն բան. կը տրե խորին մութ ու լուսփուն:

Երբ բանձ մուրը կ'ըսկսի փառասիլ՝ սեսաւանը  
փոխւած է: Հեզգիտէ բացւող աղօս լոյսին մեջէն կը  
նշարւի հաս ու ցած սիւներու զոյգ շարք մը սեսաւա-  
նին ճիւղ մեջտեղը: Եկեղեցի է: Խորքը կ'երեւա միայն  
երկու վառ մում, որուն առջեւը երկու վանական սաղ-  
մոս կը կարդան փոխնիփողը: Անոնց ետեւը կիսաշրջա-  
նով կեցած են վանականները երեսնին՝ դէպի խորանը:  
Մ'առջի ու մութ. բնբերցումը տխուր ու միալար:

Լռիկ աղօթող վանականներու շարքին մեջ յանկարծ  
խորհում մը կ'իյնա:

**Վանական մը** — (Մեւսներուն կոնտէն ծուկով դէպի ետ՝ փը-  
փսուքով) *Ջո՛ւր, ջո՛ւր, երեսին ջո՛ւր:*

Չախ կողմի խորքի սիւներուն մեջէն կ'երեւան եր-  
կու վանական, որոնք Աբեղայի թեւերը մտած ու բար-  
ձրացուցած կը բերեն առաջ: Աբեղան թոյլ ու անզգա:  
Մովսէս վանականը կու գա անոնց ետեւէն՝ օգնելով:

**Աղամ վանական** — (Արագ դուրս կ'երնէ աջ կողմի սիւններուն  
մէջէն, կը մօտենա Մովսէսին, երբ Աբեղան արդէն անցու-  
ցած են, և կիսաձայն) *Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ եղաւ:*

**Մովսէս վանական** — (Մեշտ կիսաձայն) *Աբեղան մարեցաւ:  
Կեցիք էր առջեւս կ'աղօթէր, մէյ մըն ալ տեսա՝  
զլուխը կախեց, թիչ մը ծուկեալ ու բոլոր ուժովը  
խնկալ դեպին:*

**Աղամ վանական** — *Խեղճ արեգա. երեւի դիշիրը շատ  
է ճգներ: Տարէ՛ք աղբիւրը, տարէ՛ք աղբիւրը:  
(Եւ ինքը կը դառնա ետ իր նախորդ տեղը)*

**Մովսէս վանական** — (Կ'ըջտապէ դացողներուն ետեւէն)

Ու նորէն ամեն ինչ հանդարտ է, ու նորէն որո՞ւ կը  
լսի սաղմոսասացներուն միալար, բախճոս ու ձանձա-  
ցած ձայնը:

**Առաջին սաղմոսասաց** — «Ո՛չ գոյ ըջժկութիւն մարմնոյ  
խնոյ յերեսաց բարկութեան քո՛ւ:»

**Երկրորդ սաղմոսասաց** — «Ո՛չ է խաղաղութիւն ոսկե-  
րաց խնոյ յերեսաց մեղաց խնոյ:»

**Առաջին սաղմոսասաց** — «Մնօրէնութիւնք իմ բարձրա-  
ցան քան զզլուխ իմ, որպէս բռն ծանրացան ի վե-  
րայ իմ:»

**Երկրորդ սաղմոսասաց** — «Նեխեցան և փխկեցան վերք  
իմ յերեսաց անզգամութեան խնոյ:»

Սաղմոսի միջոցին կամաց-կամաց, շա՛հ հանգիստ,  
սեսաւանը կը գոցւի, այնպէս որ վերջին ֆանի մը բառը  
կը լսի դեռ գոցւելէն ալ ետքը:



# Գ. ՏԵՍԱՐԱՆ

## Ի ԵՄԱՆՈՒՇ ԻՒՆ ԱՌԱՆՁՆԱՍԵՆԵԱԿԸ

Փոքրիկ, կոկիկ, ցած առաստաղով սենեակ մը ամբողջովին գորգերու մեջ: Ճակասը բազմոց, մօտիկը ցածիկ արձուակ մը: Անկիւնը ներմակ Ֆօնի վրա սեւ սիրուն խաչելութիւն մը ներմակ նեղ սեղանին. երկու կողմը երկու ամանի մեջ վարդի բարձ փունջեր: Առաստաղէն կախած է արաբական գունաւոր լապսեր մը:

Մուսքը աջէն ու ձախէն:

1

Իշխանուհին կեցած է բազմոցին առջեւը ձիգ ու անշարժ: Քիչ մը հեռուն, անոր դէմը, դռան մօտիկ կեցած է Վանահայրը: Երկուքն ալ հայեացքնին նետած են գեսին:

**Վանահայրը** — (Հանդիստ ու պաշտօնական) . . . Ա՛ն է կայեր մեզի իրար, ան ծնունդն է մեր երկուքի, անիկա մեր կապն է. իսկ մեր մէջը չի պիտի ըլլա ո՛չ մէկ կապ. մեր մէջէն պէտք է խղճի ամեն կապ:

**Իշխանուհին** — (Գլուխը բարձրացնելով ու նոյնպէս հանդիստ) Վարդապետ, այդ եկեղեցին ո՛չ ոք աւրել չի կրնար. ո՛չ դուն, ո՛չ ես, և ո՛չ մէկը. անոր հիմը մեր սրտերուն մէջն է դրւած:

**Վանահայրը** (Խիստ) Անոր հիմը, իշխանուհի, մեզքի վրա է դրւած:

**Իշխանուհին** — Ինչպէ՛ս թէ՛ մեզքի:

**Վանահայրը** — Այո՛, մեզքի՛:

**Իշխանուհին** — (Հպարտ) Մեղքը միշտ օտար է եղեր ինձի և միշտ ալ օտար պիտի մնա ինձի:

**Վանահայրը** — Կին՛, նորէ՞ն կ'ուզես խաբես:

**Իշխանուհին** — (Աւշաճ) Խաբե՛մ:

**Վանահայրը** — Այո՛, խաբես ու կեղծես:

**Իշխանուհին** — Ե՛ս:

**Վանահայրը** — Դո՛ւն, դո՛ւն: Ի՞նչ կը զարմանաս. դուն, որ ամբողջ կեանքդ խաբեր ես ու շարունակ կեղծեր: Խաբեր ես, տարիներ ու տարիներ, այն մարդը, որ իբրև իր կինը իր տունն է տարեր քեզի. խաբեր ես քու զաւակներդ, որոնք շոյանքի կարօտով գիրկդ են վազեր. խաբեր ես ու խաբիսեր, կապեր ես բոլոր շրջապատողներուդ աչքերը. խաբեր ես և ինձի, թէև, այո՛, առանց խոստում մը տալու, առանց բառ մը արտասնակու. խաբեր ես և քեզի՛, քեզի քու աչքիդ նահատակ ես նկարեր, դո՛ւն, որ մարդդ մեռեր է թէ չէ, վազիր եկեր ես հոս՝ ինձի հետ նոր շէնք շինելու, քու կեղծիքիդ աստծուն նոր տաճար կառուցանելու: (Քիչ մը լուռ):

**Իշխանուհին** — (Կեցած է ձիգ ու հպարտ, ունքերը կիտած. ո՛չ շարժում, ո՛չ ծպտուն):

**Վանահայրը** — Իհարկէ, չէ՞ որ՝ քու աստուածդ սէրն է: Ո՛վ սոխաստութիւնս Ի՞նչ է սէրը. ինչի՞ սէր է աստուած, արուի՞ ու էգի: Կին՛, մեղանջանք է քու առունդ, կեղծիք է քու հողիդ ու զգայարանքները քու աշխարհդ: Մեղքի վրա է շինւած այդ եկեղեցին:

**Իշխանուհին** — Ըսի՛ր:

**Վանահայրը** — Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու:

**Իշխանուհին** — Դէ՛, բաց է դուռը:

**Վանահայրը** — (Վերաւորւած) Իշխանուհի՛, կը վռնտես ինձի:

**Իշխանուհին** — Ի՞նչ է: Գնա՛, զնա քանդէ՛:

**Վանահայրը** — Ատիկա իմ պարտքս է և ես գիտեմ.  
բայց պէտք է որ դուն ալ կատարես քու պարտքդ :

**Իսխանուհին** — Այսինքն : Ի՞նչ է ուզածդ :

**Վանահայրը** — Պէտք է անմիջապէս հեռանաս հոսկէ՝  
Յամաքարերդէն :

**Իսխանուհին** — Հեռանամ . . . այդպէ՞ս կը հրամայես :

**Վանահայրը** — Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու :

**Իսխանուհին** — Կը հրամայես . . . (Յանկարծ ու բուռն բար-  
կութեամբ) Եւ ո՞վ ես դուն, ի՞նչ գործ ունիս հոս,  
հո՞ս, իմ դէմս . ո՞վ ես դուն :

**Վանահայրը** — Ես . . . ես վանական մըն եմ, իշխանուհի՛,  
քաշւած անապատը :

**Իսխանուհին** — Անապատ մըն ես դուն ինքդ և օտար,  
օտար հոգիիս, ինչպէս ամենքը : Ամբողջ կեանք մը  
ապրեր եմ ես օտարներուն մէջ, օտար եմ եղեր ես  
ինքս յողորմին, օտար ու մինասկ . մինակ պալատներու  
ամբոխին մէջ, միւս-մինակ իմ խի պալատիս, իմ  
սեփական ընտանիքիս մէջը, մինակ, միշտ : Եւ  
հոգիիս միակ լուսաւոր աստղը եղեր է ան, որ հե-  
ռմէ հեռու կա ուրիշ հոգի մը, իմինիս պէս մինակ,  
իմինիս պէս լքւած, իմինիս պէս կարօտ, եղբայր  
հոգի մը, որ կը հասկնա ինձի ու իմ կրած ծանր  
խաչս, որ մօտիկ է ինձի ու կը սիրէ ինձի : (Առևն) :

**Վանահայրը** — (Կեցած է անշարժ ու լարւած . բռունցքները սեղ-  
մած՝ տեսակ մը կռւի պատրաստ դիրքով) :

**Իսխանուհին** — Այդ սարսափելի, այդ յաւիտենական,  
այդ խելագարընող մենութեան ձեռքէն փախած,  
եկեր ապաստաներ եմ հո՞ս, վերջապէս միասին ըլ-  
լալու, մինասին ըլլալու հոգիի մը հետ, միասին ապ-  
րելու, միասին ստեղծելու շէնք մը, այն միակ հոգի-  
ին հետ, որ ինձի կը հասկընա, որ հեռուէն ինձի  
հետ է եղեր ամբողջ կեանքս : Եւ ահա՛ թէ ինչպէս  
94

կը հասկնա ինձի այդ միակ հոգին : Ես կի՛ն, ես  
մե՛ղք, ես է՛գ ու խարերս : (Չայրացած) Գնա՛, հե-  
ռացի՛ր :

**Վանահայրը** — Աւարտէ՛ ու կ'երթամ :

**Իսխանուհին** — Ոչի՛նչ չուենիմ քեզի հետ աւարտելու :  
Ապրեր եմ միշտ մինակ ու օտար, մինակ ու օտար  
ալ կ'իջնեմ գերեզման : Անմտութիւն է ճակատա-  
գրին դէմ կուրիք, Գնա՛, գնա քանդէ՛, փո՛ւլ տուր  
այն քարերը . իմ տաճարս արդէն փուլ եկաւ :

**Վանահայրը** — (Խոժու) Ներէ՛, իշխանուհի՛, եթէ աւե-  
լորդ խօսք ըսի : Ես աւելի ինձի կը խօսէի, քան  
քեզի : Ես ուզեցի որ ճշմարտութիւնը մերկ կանգնի  
մեր առջև . ես ուզեցի բանամ մեր երկուքիս ալ  
աչքերը :

**Իսխանուհին** — Եւ բացի՛ր . շորհակա՛լ եմ :

**Վանահայրը** — Կը ցաւիմ, եթէ բաց աչքով տեսածդ  
ան չէ, ինչ որ կ'ուզէիր : Աշխարհիս երեսին եթէ  
տեսնել կ'ուզես, ինչ որ սրտիդ ուղածն է, պէտք է  
նայիս փակ աչքերով :

**Իսխանուհին** — Ճշմարի՛տ է :

**Վանահայրը** — Այդ ճշմարտութիւնը ես քեզմէ սորվեցաւ . . .  
ասկէ ուղիզ քոտնըհինգ տարի առաջ : Ներէ՛, իշխանու-  
հի : Եւ կարծեմ մեր մէջ ալ մտքըւս՛ժ է ամեն հաշիւ :

**Իսխանուհին** — Իմ բոլոր հաշիւներս ալ մտքըւս՛ժ են  
կեանքի մէջ :

**Վանահայրը** — Մաքրէ՛ վերին հաշիւներդ : Մնաս բարով,  
իշխանուհի՛ :

Իսխանուհին կեցած է լուռ ու անբարձ, մինչեւ Վա-  
նահայրը հանդարտ ու գլխահակ կ'ելնէ դուռս : Իսխանու-  
հին կամաց ու ճեսակ մը ակամա կը սահի վար ու խոր-

սակած կը նստի բազմոցին, ձեռքերը անուժ մեկը բազմոցին վրա նեժած, միւսը գոզը. անկեանք հայեացքը կեօի մը յառած:

2

- Պառաւր** — (Մտնելով հակառակ դռնէն) Մինա՞կ ես:
- Իւխանուհին** — (Տխուր գլուխը ճօճելով) Մինա՞կ, մինա՞կ...
- Պառաւր** — Գնա՞ց:
- Իւխանուհին** — Ո՞վ:
- Պառաւր** — Վանահա՛յրը:
- Իւխանուհին** — Չգիտե՛մ:
- Պառաւր** — Ի՞նչ ըսաւ որ:
- Իւխանուհին** — Ո՞վ:
- Պառաւր** — Վանահա՛յրը:
- Իւխանուհին** — Չգիտե՛մ: (Ինչ մը լուռ) Բե՛ր ինձի այն...
- Պառաւր** — Ի՞նչը, իշխանուհի:
- Իւխանուհին** — Յատակազիծը:
- Պառաւր** — Եկեղեցի՞ն:
- Իւխանուհին** — (Տխուր գլխով կ'ընէ)
- Պառաւր** — (Դուրս կ'ելնէ իր եկած դռնովը և իսկոյն ալ կը վերադառնա կու տա ոլորը) Ա՛ռ: (Ինքը կը քաշուի դէպի խաչելութիւնը)
- Իւխանուհին** — (Կը բանա յոտակնոգիծը, կը նայի քէ մը, կը բարձրացնէ, կը համբուրէ և հանդիստ ու կանոնաւոր շարժումներով կ'ընտիս պատուել՝ զսպելով հեղեղանքը, մինչդեռ կուրծքը ուժդին կ'ելեւէջէ և արցունքները առատ կը թափին. առանց ծպտուն մը հանելու)
- Պառաւր** — (Ետ նայելով՝ սպշած) Ատ ի՞նչ կ'ընէ Իշխանուհին:
- Իւխանուհին** — (Չայնը դողդոջուն) Չե՛ս տեսներ: Կը պատուեմ:

- Պառաւր** — Կը պատուե՛ս. ինչո՞ւ:
- Իւխանուհին** — Այ... ալ վերջացա՛ւ:
- Պառաւր** — (Ուրախ) Վերջացա՛ւ. աւարտեցա՛ւ եկեղեցին:
- Իւխանուհին** — Այո՛, աւարտեցա՛ւ:
- Պառաւր** — Ի՞նչ կ'ըսես: Դէ՛, աչքը լոյս Իշխանուհիիս. ալ ինչո՞ւ ես վշտացեր:
- Իւխանուհին** — Վշտացե՛ր. ո՞վ. ե՞ս. ամենեւին: Չե՛ս տեսներ, պառա՛ւ, ինչպէս ուրախ եմ, ինչպէս բաղդաւոր: Չե՛ս տեսներ՝ կու լամ:
- Պառաւր** — (Յուզած ու երկեղած) Այո՛, Իշխանուհի՛ս կու լաս... (Առջեւը չօքելով) Կու լա Տիրուհիս: Ես քու լացդ դեռ չէի տեսեր, այնքան վշտեր, այնքան ցաւեր էիր տեսեր: Եւ ի՞նչ տարօրինակ լաց է եղեր ուրախութեան լացը:



Զորրորդ Արար

## ԱՆՏԵՍԱՐԱՆ

ԱՐԵՂԱՅԻ ԽՈՒՅԸ ԳԻՇԵՐ. ՃՐԱԳ

Արեղան պառկած է անկողնին. սնարին կողմը նսած է Կոյր վանականը արձանի նման շիսակ: Ոսփին կողմը՝ անկողնի եզերփին նսած է Սիմօն վանականը, որ անընդհատ համրիչ կը արշէ, շուս-շուս յօրանջելով:

**Երիսասարդ վանական մը** — (Կեցած է սեղանին մօտիկ, կը խաղա ճրագին հետ ու կը խօսի ծանր-ծանր, խորհրդածելով)  
Եւ ինչքան, ինչքաններն են սակայն այդպէս անմիտ:  
Ա՛յ, ամբողջ այդ դուրսիները: Դժբաղդներ: Փա՛ռք քեզի, Աստուած, որ լուսաւորեր ես մեր միտքը:

**Սիմօն վանականը** — (Յօրանջելով) Փա՛ռք քեզի, Աստուած:  
**Երիսասարդ վանականը** — Մէյ մը ատոնց հարցընող բլա՛ն ո՛վ մարդ, ի՞նչ ես դտեր այդ ձախողութիւններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարօտութիւններու, այդ կուրի ու դառնութեան հովտին մէջ, որուն աշխարհք անունը կու տան: Այդպէս ալ յիմար հաշիւ: Քանի մը խղճուկ վայելքներու, քանի մը չնչին հաճոյքներու համար մարդ առնէ ու զո՛հէ իր հանդերձեաց կեանքի յաւիտենական երանութիւնը:

**Արեղան** — (Պառկած տեղէն սուսնց դէմքը փոխելով՝ հատիկ-հատիկ) Հա՛յր-սուրբ, տեսն՞ր ես դուն երբէք արեւի ծագումը:

**Երիսասարդ վանականը** — Ի՞նչ:

**Արեղան** — Եղև՞ր ես դուն երբէք արեւին տաճարը:

Երկու վանականները ապշած կը նային իրարու:

**Միտասարդ վանականը** — (Կը մօտենա անկողնին ու ձեռքը հիւանդի ճակատին դնելով) Սա՛ռն է: Արթ՛ժն էս, արեղա՛:

**Արեղան** — Ես արթ՛ժն էմ: Ես արթնցա, երբ արեւը ծագեցաւ: Իսկ դո՛ւք, դո՛ւք...

**Միտասարդ վանականը** — Մենք կը խօսինք, արեղա՛:

**Արեղան** — Կը լսեմ՝ կը խօսիս: Գնա՛, դիտէ՛ արեւին ծագումը:

**Սիմօն վանականը** — (Ձեռքով նշան կ'ընէ, որ հիւանդը հանդիստ թողնէ ու պատասխան չի տա. և ինքը ոտքի ելնելով) Իրա՛ւ կ'ըսէ, հա՛յր-սուրբ, ո՛ւշ է արդէն, երթանք, որ ան ալ հանդատանա: Գիշե՛ր բարի, արեղա՛: Այս գիշեր քեզի խոր քուն, վաղը ամեն բան անցած կ'ըլլա: (Կէսի դուռը)

**Միտասարդ վանականը** — Առողջութի՛ւն քեզի, արեղա՛: (Գէսի դուռը)

**Արեղան** — (Առանց դէրքը փոխելու, հատիկ-հատիկ) Քեզի կ'ըսեմ՝ տեսե՛ր ես դուն երբէք արեւին ծագումը:

2

**Կոյր վանականը** — (Ականջ կը դնէ, որ անոնք հեռանան. վերջը քիչ մը աւելի ծռելով դէսի անկողնը, խորհրդաւոր ու կիսաձայն) Ե՛ս... ես տեսեր եմ այդ արեւին ծագումը:

**Արեղան** — (Աշխուժ վեր կը թռչի խկոյն ու կիսովին կը նստի յենելով թեւին, մատը կոյրին ուղղած) Դո՛ւն... դո՛ւն... դուն տեսե՛ր ես: Դո՛ւն, կո՛յր...

**Կոյր վանականը** — (Ծանր գլխով կ'ընէ)

**Արեղան** — (Ցած ձայնով ու ձեզ տալով) Եւ երկրպագե՛ր ես:

**Կոյր վանականը** — (Ծանր գլխով կ'ընէ)

**Արեղան** — Դո՛ւն, դուն տեսեր ես արեւին տաճա՞րը, քու այդ աչքերո՞վդ:

**Կոյր վանականը** — Այո՛, տեսեր եմ այս աչքերովս, ու հաներ եմ այդ աչքերը, որ ալ չտեսնեմ:

**Արեղան** — (Սարսափած) Հանե՛ր ես աչքերդ:

**Կոյր վանականը** — (Կարդալու շեշտով) Այն անդամը, որ քեզի կը դայթակղեցնէ, կտրէ՛ ու դուրս նետէ՛ քեզմէ. այսպէ՛ս է գրւած:

**Արեղան** — Եւ դուն հանե՛ր ես աչքերդ:

**Կոյր վանականը** — Այո՛:

**Արեղան** — Հանե՛ր ես, քո՛ւ աչքերդ, քու այդ ձեռքերո՞վդ:

**Կոյր վանականը** — Ո՛չ, ո՛չ ձեռքովս. հաներ եմ կամքիս ուժով:

**Արեղան** — Կամքի՞դ:

**Կոյր վանականը** — Դիմէ՛ հաւատքիդ, ու սարերը կ'եղնեն իրենց տեղէն, աչքն ի՞նչ է, որ իր տեղը մնա:

**Արեղան** — (Քիչ մը մտածելէն ետքը՝ տարակոյսով) Եւ դուն կ'ըսես թէ՛ երկրպագեր ես արեւին:

**Կոյր վանականը** — Այո՛, մեղանչեր եմ, արեղա՛: Եւ ճիշտ ատոր համար է, որ կը հասկընամ քեզի, կը տեսնեմ քու հոգիդ ու կ'ըսեմ քեզի՛. «զգո՛ւշ, դեւն է, որ արթնցեր է մէջդ, մէջիդ սեւ դեւը»:

**Արեղան** — Ա՛ս է քու հասկըցածդ: Ինձի քաշողը ինքը լոյսն է ու գեղեցկութիւնը. ինձի քաշողը ասուածնե՛րն են:

**Կոյր վանականը** — Բոլոր դեւերն ալ երբեմն ասուածն են եղած, արեղա՛: Ընկճւած ասուածներն են ատոնք. պէտք է որ ընկճես:

3

**Վանահայրը** — (Կը մտնէ տխուր ու կըքած) Ողջո՞յն ձեզի:

**Կոյր վանականը** — (Կ'եղնէ ոտքի)

**Վանահայր** — (Մտեհնարով անհրղին) Ինչպէս ես : Նոր ե-  
կա ցամաքէն . ըսին՝ ինծի կանչեր ես :

**Մբեղան** — Այո՛ , կ'ըզգամ ծովուն թարմութիւնը , որ  
հազուսաներէդ կը բուրէ :

**Վանահայր** — Նո՛ր կա լաստէն :

**Մբեղան** (Հիացումով) Լաստէ՛ն... լաստէ՛ն...

**Վանահայր** — (Խոփուած) Ինչո՞ւ ես կանչեր ինծի :

**Մբեղան** — (Բիչ մը լուռ) : Հա՛յր , ես երկրպագեցի հին  
աստուածներուն :

**Վանահայր** — (Դաժան ու խիտ) Շատ բնական է :

**Մբեղան** — Ինչ... .

**Վանահայր** — Անչո՛ւշտ , անչո՛ւշտ . կ'ըստատէի՛ : Չէ՞  
որ քեզի խոտաշաւ իր տակի ձին , իր ձեռքի սուրը  
ու իր սեփական աղջիկը . դուցէ ե ոք մըն ալ , ս՞ով  
գլտէ , իր իշխանական ցուպը :

**Մբեղան** — (Սաստիկ վերաւորած) Հա՛յր... .

**Վանահայր** — Անչո՛ւշտ , շատ բնական է : Այդ բոլորի  
համար արժէ ասուած մը ուրանալ : (Յանկարծ ու բար-  
կութեամբ) Բայց ինծի՞ , ինծի՞ ինչու ես կանչեր հո՛ս :

**Մբեղան** — (Յանդիմանօրէն) Հապա ս՞ով կանչէի , վանա-  
հա՛յր... .

**Վանահայր** — Սխալուեր ես : Կանչէ՛ Հայր Անտոնը :

**Մբեղան** — Վանահա՛յր... .

**Վանահայր** — Հայր Անտոնին լաստը միայն կը հանէ  
քեզի հոն , ուր քու սիրտդ է :

**Մբեղան** — Կը վաճակես ինծի դո՛ւրս :

**Վանահայր** — Ես կը դրկեմ քեզի քու տենչացած աշ-  
խարհը :

**Մբեղան** — (Դառն ու հանդիտ) Կը դրկես ինծի իմ աշ-  
խարհը... . : Իսկ ս՞ով իրաւունք տւաւ քեզի՞՝ ուզած

ժամանակդ դուրս քաշես ինծի աշխարհէն , ուզած  
ժամանակդ ես նստես աշխարհ : Ո՞վ քեզի իրաւունք  
տւաւ , որ կապես հողիս , կապկպես զգացումներս :  
Ո՞վ քեզի իրաւունք տւաւ , որ հիմա երբ ես երե-  
սիս յանդիմանութիւն կը կարդաս :

**Վանահայր** — (Կոտրած) — Իրա՛ւ ես : Ես ուզեր եմ  
անկարելին : Ես ուզեր եմ՝ աղատեմ քեզի այն երկար  
գալարուն ճամբէն , որու դառնութիւններուն ու  
տառապանքներուն մէջէն միայն կը հասնին մարդիկ  
այս սուրբ մենարանը : Ես ուզեր եմ անկարելին :  
Հանէ՛ քուրծերդ ու գնա՛ :

**Մբեղան** — Երթա՛մ . ինչո՞ւ . ե ս՞եր :

**Վանահայր** — Աշխա՛րհ :

**Մբեղան** — Աշխա՛րհ... . (Անխօս գլուխը կը շարժէ . ե սպա  
չարտինդաց ) Ո՛չ , վանահա՛յր , հո՛ս է իմ աշխարհս .  
աշխարհքը , ա՛յ , այս կղզին է . ես հոս ճանչցա հին  
աստուածները , հո՛ս ալ պիտի երկրպագեմ :

**Վանահայր** — (Նսխ դարմանքով կը գետէ , վերջը ծանր ու  
վճռական) Ո՛չ , այդ մէկը չե՛մ թողներ , արեղա՛ :

**Մբեղան** -- Կը թողնե՛ս . դո՛ւն ես այդպէս կամեցեր :  
Ես ուրիշ աշխարհ չեմ տեսած , ես հո՛ս եմ շիներ իմ  
աշխարհս :

**Վանահայր** — (Կտրուկ) Լսէ՛ : Հոս մենարան է ու սրբ-  
բալայր , ուր այլ եւս աշխարհիկ հիւր մըն ես դուն ,  
պատահական ուխտաւոր մը : Իսկ ուխտաւորներուն  
իրաւունքը , գլտե՛ս , երեք օր է միայն : (Դէպի  
դուռը)

**Նոյր վանականը** — (Ետեւէն) Վանահա՛յր , շա՛տ ես խիտ :

**Վանահայր** — (Կիտովին ետ նսցելով) Ո՛չ , հա՛յր-սուրբ ,  
հիւանդ էր ու դիջող եղա : Չի լսեցի՞ր , ամբողջ երեք  
օր տւի իրեն : Բայց երեք օրը չի լրացած պէտք է  
որ Հայր Անտոնին լաստը ափը հանէ ատիկա : (Դուրս) :

**Աբեղան** — Լա՛ստը... Լա՛ստը :

**Կոյր վանականը** — Մոռցի՛ր, մոռցի՛ր այն լաստը, արե-  
ղա՛, Մոռցի՛ր քեզի աշխարհին կապող այդ երե-  
րուն կամուրջը, մոռցի՛ր այդ իրարու կապած երկու  
գերանի կտորը...

**Աբեղան** — Իրարու կապած... այո՛... իրարու կապած:

**Կոյր վանականը** — Դեռ ուչ չէ՛. խեղդէ՛ մէջդ այդ  
յուշերը, ընկճէ հին գեւը ու այս բոլորը թող դառնա  
հիւանդութիւն մը, որ եկաւ վրադ ու ու անցաւ :  
(Թեւեռը տարածելով անոր վրա) Ապաւինէ՛ Աստծուն  
արեղա՛ : (Կ'երթա դէպի դուռը և կէս ճամբէն) Դիշերը  
եթէ պէտք ունենաս՝ զա՛րկ պատը, դամ քեզի օգ-  
նելու :

**Աբեղան** — Ինձի ի՞նչ կրնաս օգներ դուն, կո՛յր. դո՛ւն,  
որ հաներ ես քու սեփական աչքերդ :

**Կոյր վանականը** — (Խարխաբելով մուտքը կը փնտռէ) Կ'օգնեմ  
կերպ մը, արեղա՛, խարխաբելով, խարխաբելով... :  
Զա՛րկ պատը, եթէ պէտք ունենաս : (Դուրս)

**Աբեղան** — (Նստած է անկողնին մէջ ծունկերը գրկած. քիչ մը  
ատեն լուռ ու անշարժ. վերջը հեգնոտ ու գլուխը շարժելով)  
Խարխաբելով... խարխաբելով... և կ'ըսէ՝ մոռցի՛ր  
լաստը :

**Սեղա** — (Դուան մէջէն հաղիւ կը նշմարուի) Մոռցի՛ր, մոռցի՛ր  
լաստը...

**Աբեղան** — (Յընցելով ու շշուկով) Սեղա՛...

**Սեղա** — Մոռցի՛ր և Սեղան :

**Աբեղան** — Ես մոռնամ քեզի՞ :

**Սեղա** — Մոռցի՛ր ինձի. ես քու մէջի սև դեւն եմ :

**Աբեղան** — Դուն իմ հոգիիս ճերմակ թեւն ես : Նստի  
էի անապատի աւաղին վրա տխուր, չոր ու մինակ,  
դո՛ւն էիր, որ եկար թեւ աւեր կեանքիս, բնու-  
թիւնը աւեր դգայարանքներուս ու ծովը սրտիս.  
Ճո՛վը. ուրիշ արեւները կը ծնին, ուր ես անգամ  
մը գրկիւր եմ քեզի :

**Սեղա** — Մոռցի՛ր, մոռցի՛ր այդ բոլորը. դեռ ուչ չէ՛.  
եղի՛ր նորէն ան, ինչ որ էիր. մտածէ՛. դեռ ամբողջ  
երեք օր աւին քեզի :

**Աբեղան** — Ո՛չ, Սեղա՛, ո՛չ. ես դարձ չկա. ո՛չ կր-  
նամ, ո՛չ կ'ուղեմ : Ես երկրպագեցի քու աստուած-  
ներուդ, ես ձօնեցի քու աստուածներուդ, ես խմեցի  
վայելքի եղջիւրէն : Ես հիմա միայն քեզի՛ ծարա-  
եմ, ես հիմա միայն քու գիրկդ կ'ուղեմ :

**Սեղա** — (Բիչ մը առաջ գալով, գրկաբաց) Եկո՛ւր, ես  
քու կի՛նդ եմ :

**Աբեղան** — (Ինքն ալ անկողնին վրայէն առաջ ծռելով) Սե-  
ղա՛... բայց չէ՞ որ դուն երազ մըն ես :

**Սեղա** — Եկո՛ւր, դո՛ւն ալ դարձիր երա՛զ մը :

**Աբեղան** — Երա՞զ մը :

**Սեղա** — Եկո՛ւր նորէն հո՛ն...

**Աբեղան** — (վախցած ու յափշտակած) Ծո՛վը...

**Սեղա** — Հո՛ն, ուր անգամ մը գրկիւր ես ինձի...

**Աբեղան** — Ուր դուն թեւերուս մէջ կը դողայիր քու  
մարմնիդ բոլոր մասնիկներովը...

**Սեղա** — Ուր ալիքները կը դողային ու փոթորիկը կը  
գոռար...

**Աբեղան** — Ուր դարկերուս տակ փրփուրը կ'եռար...

**Սեղա** — Հո՛ն եկուր, հո՛ն, եթէ նորէն գրկել կ'ուզես  
ինձի, միայն հո՛ն : Եկո՛ւր, հէնց որ նորէն ջրերը  
յուզելին, հէնց որ նորէն ծովը փրփրի :

**Աբեղան** — (Խելառած աչքերով. հեռահեռ ծուկի դալով անկողնին վրա) Այ՛մ, երբ որ ջրերը յուզւին, երբ որ ծովը փրփրի...

**Սեղա** — Եկո՛ւր, փաթթւինք իրարու ու տանիմ քեզի գրկիս մէջ անդունդէ անդունդ, մթնոլորտէ մթնոլորտ, տանիմ քեզի դէպի նոր անձանօթները, դէպի այն նոր աշխարհները, որոնց մասին դուն ու քու աշխարհքդ դադափար անգամ չունիք: Եկո՛ւր:

**Աբեղան** — Կու գա՛մ: Առաջին անգամ, երբ քեզի գրկիցի, բացւեցան ինձի որքա՛ն, որքա՛ն անձանօթներ. դա՛մ նորէն քեզի գրկելու ու թող բացւին նո՛ր անձանօթներ:

**Սեղա** — Եկո՛ւր, տանիմ քեզի հեռո՛ւ, հեռո՛ւ քու կեանքիդ նեղ սահմաններէն, տանիմ քեզի նո՛ր դոյութեան, նո՛ր ձեւերու, նո՛ր էութեան...

**Աբեղան** — (Վերացած) Նո՛ր, նո՛ր կեանքի, նո՛ր էութեան:

**Սեղա** — Եկո՛ւր, ձուլւիս ծովին, ձուլւիս լոյսին ու ջերմութեան, ձուլւիս ինձի ու Աստղիկան, ձուլւիս Վահագնին ու աստածներուն...

**Աբեղան** — Ա՛խ, շո՛ւտ, ա՛խ, շո՛ւտ:

**Սեղա** — (Ետ-ետ քաշւելով) Հէ՛նց որ ջրերը յուզւին, հէ՛նց որ ծովը փոթորկի:

**Աբեղան** — (Խեղդւած ձայնով) Հէ՛նց որ ջրերը յուզւին, հէ՛նց որ ծովը փոթորկի...



## Բ. ՏԵՍԱՐԱՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ի Ն Ա Ռ Զ Ե Ի Ի Շ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ե

Նոյնը ինչ որ առաջին արարի եկիրոյ սեսարանը  
Յերեկ է

1

Վանականները խոնւած են ու կը խօսին յուզւած: Աբեղան լուռ ու կեղրոնացած կեցած է ծառի մը յեցած:

**Միտոն** վանական մը — (Ապշած) Ի՛նչ կ'ըսես, ի՛նչ կ'ըսես...

**Աղամ** վանական — Ո՞վ էր լսեր այս տեսակ բան:

**Ղազար** վանական — (Ծաղրով) Հա՛, հա՛, հա՛, վանահայրը խռովեր է եկեղեցիէն:

**Սիմոն** վանական — Վե՛րջ տո՛ւր այդ անպատկառ ծիծաղիդ:

**Ուրիշ** վանական մը — Բայց իրա՛ւ է, որ ալ ժամ չի գար

**Աղամ** վանական — Ո՞ւր է հիմա ինքը:

**Վանական** մը — Քաշւեր է իր խուցը: Կը կարդա՞, կ'աղօթէ՞, ո՞վ գիտէ:

**Ծերունի** վանականը — Ա՛, այդ կարդա՛լը, կարդա՛լը: Չէ, այս բոլորէն աղւոր հոտ չի գար:

**Սիմոն** վանական — Ծերունի՛, մտածե՛ր ես՝ ինչ կը խօսիս:

**Ծերունի** վանականը — (Հեռանալով) Ես բան չըսի:

**Սիմոն** վանական — Մեր մեծաւո՛րն է, մեր առաջնո՛րդը:

**Ծերունի վանականը** — Ես բան մը չըսի: (Դուրս)

**Սիսօն վանական** — (Ետեւէն դուրս ելնելով) Կեցի՛ր, հա՛յրսուրբ, կեցի՛ր:

**Դաւիթ վանական** — (Մտածկոտ) Ճի՛շտ է. ամբարտաւանութիւնը մեղք է մահացու:

**Ադամ վանական** — Մարդս սէտք է հեղ ըլլա ու խոնարհ:

**Վանական մը** — Խոնարհ, խոնարհ...

**Ուրիշ վանական մը** — Հեղ ու խոնարհ...

Ու երեքը միասին կ'եղնեն դուրս:

**Ղազար վանական** — (Տեսակ մը ինքներեսը) Վանահայրը խռովիւր է եկեղեցիէն... (Ծիծաղը տփին մէջ խեղդելով անոնց ետեւէն կ'ելնէ դուրս:)

2

**Աբեղան** — (Միշտ իր ծառին տակը՝ անշարժ:)

**Դաւիթ վանականը** — (Նախորդ խումբէն միակ մ'նացողը. նախ քիչ մը կը մ'նա մէջտեղը մտածկոտ, ետքը բան չհասկըցողի շարժումով կ'օրօրէ գլուխը ու կը մտտենա արեղային) Լսեցի՛ր, սբեղա՛, լսեցի՛ր:

**Աբեղան** — Կը լսե՛մ, կը լսե՛մ... Թո՛ղ ինձի, մի՛ խանգարեր՝ որ լսեմ:

**Դաւիթ վանականը** — (Ձարմացած) Ի՞նչը:

**Աբեղան** — (Խորքը մատնանիշելով) Ա՛յ, ականջ դի՛ր:

**Դաւիթ վանականը** — Ի՞նչ է որ:

**Աբեղան** — (Խորհրդաւոր) Զրեքը կը յուզւին, ջրերը յուզւիլ են սկսեր:

**Դաւիթ վանականը** — Է՛, ի՛նչ ընենք. երեւի, գիշերը փոթորիկ ենք ունենալու:

**Աբեղան** — (Սաստիկ յուզւելով) Փոթորի՛կ, փոթորի՛կ...

**Դաւիթ վանականը** — (Անտարբեր) Գուցէ. եղանակները փոխւեցան:

**Աբեղան** — (Յանկարծ բռնելով ընկերոջը Թեւէն) Ուրեմն այս գիշեր... կը կարծես՝ այս գիշեր...

**Դաւիթ վանականը** — Այդ ինչպէ՛ս կը դողաս. Խեղճ արեղա՛, այն փոթորիկէն իվիր, երեւի, աչքդ վախցեր է: Հանգստացի՛ր, հանգստացի՛ր, Եկո՛ւր, երթանք եկեղեցի. աղօթէ՛, սիրտդ կը թեթեւի:

**Աբեղան** — (Յանկարծ) Եկո՛ւր՝ երթանք փոր:

**Դաւիթ վանականը** — Ա՛փը...

**Աբեղան** — Եկո՛ւր. կ'ուզեմ տեսնեմ փոթորիկն գալը: Բայց... բայց առանձին չե՛մ կրնար: Գիտե՞ս, կը քաշէ, կարծես կը քաշէ, կը քաշէ... (Ամուր կը սեղմըւի ծառին):

**Դաւիթ վանականը** — Աբեղա՛, աւելի աղէկ է՝ երթաս ու սթառկիս: Դու իզուր ես ելեր օտքի: Տե՛ս, աչքերդ կատարեալ անդու ունին դեռ: Երթա՛նք, տանիմ քեզի խուցդ:

**Աբեղան** — (Ծառին քսելով կամոսը մը կ'ելնէ ու կը նստի) Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ ինձի: Թո՛ղ, ես կ'ուզեմ տեսնեմ փոթորիկն գալը:

**Դաւիթ վանականը** — (Կեցած է Աբեղայի գլխուն՝ չեմոսաւով ինչ ընէ:)

3

**Վանական մը** — (Ներս վազելով) Վանահայրը, վանահասայրը:

Կը լսին ձայներ, զսպած աղմուկ ու մեկմեկ երկու-երկու՝ խառն կը մտնեն վանականները խոժոռ ու մսխտի: Կու գան ու լուռ կը շարունակ իրարու քով: Վանական մը կ'առաջնորդէ կոյրին:

**Խօյր վանականը** — Բայց ի՞նչ կա, է՛, ի՞նչ է պատահիր :  
**Առաջնորդող վանականը** — Հսի՛ չգիտեմ . վանահայրն է պատահիր :

**Վանական մը** — Սո՛ւսս . եկա՛ւ :

**Դաւիթ վանականը** — ( Արթընցնելու պէս ) Ոտքի՛ , արեւ-  
դա . վանահայրն է :

**Մբեղան** — (Կը նստի շուրջը ու կ'ելնէ ոտքի) :

4

**Վանահայրը** — (Կու գա խորքէն ծանր ու տխուր խորը դուլի  
կու տանս Լուս, երկար նայածք մը կը նետէ խուսքին վրա)  
Բոլորդ էք :

**Չայն մը** — Այո՛ , վանահայր :

**Վանահայրը** — (Կը նստի բարձր քարի մը Սպասողական  
լուսթիւնս) Բան ունիմ ձեզի ըսելու : (Կը մտածէ) Կը  
տեսնէ՞ք այս եկեղեցին , որ գրեթէ աւարտած է ար-  
դէն և ուր բաւական ժամանակէ խլիւր մեր աղօթք-  
ները կը խնկնէ մեր Աստծուն . այս եկեղեցին...  
այս եկեղեցին նւիրւած չէ՛ մեր Աստծուն :

Ընդհանուր զարմանք ու շարժում :

**Սիմօն վանականը** — Ի՞նչ ըսիր , վանահայր :

**Վանահայրը** — Այս եկեղեցին նւիրւած չէ՛ մեր Աստծուն :  
Այս եկեղեցին , երբ ևս կը շինէի , ևս դեռ կտրւած  
չէի աշխարհէն... (Շշուկներս) Ես կը կարծէի թէ կրտ-  
րւած եմ : Մենք բոլորս ալ , որ թողիւ ենք աշ-  
խարհը ու ե՛լիւր անապատ , մեր հողիին խորքը դեռ  
մեծ կտոր մը աշխարհ էինք բերիւր մեղի հետ . ներ-  
քին վայելքի ծածուկ կարօտ մը , քողարկւած հա-  
ճոյքներու բարակ ծարաւ մը , մեր անցած կեանքի ,

կուլի ու յուզումներու ամբողջ նուրբ ու կաշուն  
ցանց մը . և ախամ վերջուհներ : Այս բոլորը դեռ  
մեղի հետ էր , երբ այս եկեղեցին կը շինէինք : Այդ  
ծածուկ , քողարկւած յուզումներն են շինելու այս եկե-  
ղեցին . աշխարհէն անապատ եկած , մեղի հետ ներս  
սպրդած աշխարհի այդ կտորն է շինելու այս եկեղե-  
ցին : Աշխարհի՛նն է այդ եկեղեցին , մեր Աստծունը  
չէ՛ : Ատոր կամարներուն տակ մենք այլ եւս աղօթիկ  
չենք կրնար . այդ կամարները պէտք է քանդուի՛ն :

**Չայնք** — (Աղշած, տարտափած) Քանդուի՛ն... քանդուի՛ն...

**Սղամ վանականը** — Մեր եկեղեցին քանդուի՞ :

**Միստատող վանական մը** — Մեր նոր եկեղեցին քան-  
դուի՞ :

**Վանահայրը** — Այո՛ . պէտք է քանդուենք ու շինենք  
նորը :

**Չայնք** — (Չարմանք ու հեգնութիւն) Նո՞րը... նո՞րը...

**Սղամ վանականը** — Շինենք նո՞րը :

**Վանահայրը** — Նո՞րը : Եւ այդ նոր եկեղեցին պիտի  
շինենք մե՛նք ինքներս : Աշխարհէն եկած դրամը  
աշխարհիկ զգացումներու նւէրն է , աշխարհէն եկած  
վարպետները աշխարհիկ հասկացողութիւն է , աշ-  
խարհի արւեստը : Մարդս ի՛նք միայն կրնա շինել  
իր Աստծուն նւիրւած տաճարը , ի՛ր մեջքովը , ի՛ր  
ձեռքերովը , ի՛ր խելքովը : Թէ ինչ ձև է ունենալու  
մեր նոր եկեղեցին , դեռ ևս ինքս ալ որոշ չգիտեմ .  
այ , կը նստինք միասին ու կը խորհինք . կը խոր-  
հինք ու կը ստեղծենք :

**Չեռուցի վանականը** — (Հեգնոտ) Մենք ի՞նչ արհեստաւոր-  
ներ ենք , վանահայր . մենք ի՞նչ կրնանք շինել , դի-  
ցո՛ւք , կիթ ուղկնք ալ :

**Վանահայրը** — Կա՛մքը , ծերունի՛ . ուզէ ու կը շինես ,  
կիթ մանանխի չափ հաւատք ունենաա քու կամքիդ :

**Ծերունի վանականը** — Է՛, անցեր են այն ժամանակները :

**Վանահայրը** — Ո՛չ, չե՛ն անցեր. դեռ չե՛ն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիխ մէջէն պիտի երթանք դէպի այդ ժամանակները :

**Ծերունի վանականը** — Լսէ՛, վանահայր, լսէ՛ ինձի, ես ծերունի մարդ եմ: Դուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ: Քու բունած ճամբադ ծուռ ճամբա է: Մի՛ չարչարեր դու խղ. այդ ճամբան հերետիկոսներուն ճամբան է,

**Վանահայրը** — (Հպարտ) Այդ ճամբան առաքելներու ճամբան է. այդ ճամբով է անցեր ինքը Քրիստոս:

**Ղազար վանական** — Ո՛ւհ... կը լսէ՞ք:  
Շուկ ու վրդովում:

**Ծերունի վանականը** — Մի՛ խօսիր այդպէս անմիտ, վանահայր:

**Աղամ վանականը** — Ո՛չ ալ այդպէս մեծամիտ:

**Անոն վանականը** — Եւ ձգէ հանգիստ մեզի ու մեր եկեղեցին. մեզի պէտք չեն նոր ձեւի շէնքեր. այս ձեւն է մեզի մեր պապերէն աւանդ հասեր:

**Վանական մը** — Մենք ո՛չ քարտաշ ենք, ո՛չ վարպետ:

**Աղամ վանականը** — Եւ չենք եկեր հոս պատեր քանդելու, պատեր շինելու:

**Ուրի վանական մը** — Մենք եկեր ենք հոս հանգստանալու:

**Զաւարիա վանականը** — Այո՛, հանգստանալու ու աղօթելու:

**Միթասաւրդ վանական մը** — Եւ ինչո՞ւ քանդենք մեր նոր շինած սիրուն աղօթատեղին. ոչինչ չեմ հասկընար. մի՛տքն ինչ է, ինչո՞ւ:

**Զաւարիա վանականը** — Որուն վրա այսքան ծախս է թափւեր, այսքան աշխատանք:

**Ղազար վանականը** — Եւ ի՞նչ ըսենք իշխանին, իշխանունիին, որոնք հոգացեր են բոլոր ծախքը:

**Չայներ** — (Խառն) Իհարկէ՛, իհարկէ՛... իշխանը... իշխանունիին...:

**Զաւարիա վանականը** — Եւ ո՞վ կու տա այն ատեն տասը չափ ցորենը, սլարէնը, այսքան նւէրը:

**Չայներ** — (Խառն) Իհարկէ՛, իհարկէ՛... ցորենը... սլարէ՛նը...

**Աղամ վանականը** — Հանգիստ թո՛ղ մեզի ու մեր ապրուստը:

**Զաւարիա վանականը** — Քու շինելիք եկեղեցիդ հաց կու տա՞ մեզի:

**Դաւիթ վանականը** — Որքան ալ բլլա մեր սեղանը սակաւ, բայց հաց պէտք է, որ ապրինք:

**Ծերունի վանականը** — Որ կեանքի հոգը չխեղդէ մեզի:

**Մովսէս վանականը** — Որ մեր աղօթքը չխանդարի:

**Ծերունի վանականը** — Ուշքի եկո՛ւր, վանահայր, քանի կանուխ է. ու թո՛ղ մեր անապատը խաղաղ ու հանգիստ:

**Վանահայրը** — (Նստա շարածի պէս է սոս տարտիկն տակ, ետքը գլուխը վեր կ'առնէ, կը նայի շրջապատողներուն տեսակ մը սաշու(թեամբ) Դո՞ւք... հո՛ս իմ շուրջս, կ'ս... հո՛ս կեցած ձեր մէջը...: Ե՛ս ձեր վանահայրը, դո՛ւք իմ միաբանութիւնս, ի՛մ իսկ հիմնած: (ժպտուն) Միաբանութիւնս. ի՛նչ միութիւնս ձեր ու իմ մէջ... (Աչքերը շփելով) Կարծես կապը կ'իջնա աչքերէս: Ի՛նչ պէս է եզեր, որ ես չեմ հասկըցեր այսքան պարզ բանը, այսքան ակընդայանի: Մինչեւ հո՛ս, մինչեւ անապատ կրցեր եսք մենք միասին: Մինչեւ հոս ես կրնայի բերիլ ձեզի, մինչեւ հոս կարելի է բերիլ մարդը, բայց հոսկէ անդին... հոսկէ անդին մարդ ի՛նքը պիտի երթա: Ճշմարիտը դո՛ւք էք. այդ եկեղեցին պէտք է, որ մնա, ա՛ն է ձեր եկեղեցին.

գացէ՛ք, գացէ՛ք ներս. ան կու տա ձեզի անվերջ աղօթքներ ու մխիթարանք, ան կը բանա ձեզի արքայութեան դռները, կ'ազատէ ձեզի բոլոր սատանաներէն, ան ձեզի ձեր հացն ալ կու տա ու ձեր հանդիստը. գացէ՛ք, գացէ՛ք ներս ու խաղաղութիւնը թող ըլլա ձեզի հետ: Իսկ իմ փնտռածս ատիկա չէ. իմ փնտռածս աշխատանքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը, ներքին անվերջ նւաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյսներու անդունդներուն վրայէն, ելքերով ու անկումներով. անդադար խոյանք մը դէպի վերինը, տաժանակիր աշխատանք մը դէպի ճշմարտութիւնը: Գացէ՛ք, գացէ՛ք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ իմ եկեղեցիս. բայց այս անգամ ե՛ս, միա՛յն ես. և կերուածք մը, որ վայել ըլլա իմ Աստուծոս քնակութեանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքիս ո՛չ մէկ բառը կեղծ չի հնչէ, ո՛չ մէկ բառի արձագանգը դատարկ չի հնչէ:

Գաւիթ վանականը — (Ծաղրով) Աս ո՛ւր պիտի շինես, վանահայր, քու նո՛ր կերուածքը:

Ղազար վանականը — (Ծաղրով) Եւ ինչէ՞. կրանի՞դ պիտի ըլլա, թէ՞ մարմարէ:

Վանահայր — Կրանիդ ու մարմար, որձաքար ու ամեն տեսակ քար ես կը թողնեմ աշխարհի ասուածներուն: Իմ տաճարիս հիմքը իմ բանականութիւնս պիտի ըլլա, սինները իմ կամքս է, ու գմբէթն ալ ըլլալու է հաւատքս:

Ծեռուցի վանականը — Շատ խախուտ է, վանահայր, նոր շէնքիդ հիմքը:

Վանահայր — (Անփոյթ) Խախուտ է՝ կը փլի:

Գաւիթ վանականը — Եւ այն ատեն...

Վանահայր — Կը շինեմ նորը:

Ծեռուցի վանականը — Բայց ատիկա վերջ չունի:

Վանահայր — Կ'ուզէիր որ վերջ ունենար: Քանի կ'ապրինք՝ շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստուծոս իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք. շինենք ու շինենք միշտ, բայց երբէ՛ք, երբէ՛ք հաւարտենք: Հէնց որ աւարտի, ալ տաճար չէ Աստուծոս, այլ... (Եկեղեցին մտածանիշ) կուտուն:

Ղազար վանականը — (Կատաղի) Կը հայնոյէ, կը հայնոյէ մեր Աստուծոս:

Վանահայր — Ամենէն ստոր հողիները միայն հայնոյել կրնան այն Աստուծոս, որուն երբեմն երկրպագեր են: Բայց կը տեսնեմ՝ ալ մենք իրար չենք հասկընար: Մնաք-բարով, ձեր Աստուծոս ձեզի հետ:

Կ'ուզէ երբա՛ Սբեղան առաջ կու գա ու նամբան կը կտրէ:

Սբեղան — Կեցի՛ր:

Վանահայր — Ի՞նչ է: Գուցէ կ'ուզես նորէն խնծի հետ, արեղա՛: Եկո՛ւր, քու հողիդ թուխք ունի, ես գիտեմ:

Սբեղան — Կեցի՛ր: Ըսէ՛. քու այդ նոր շէնքէդ երեւա՞ պիտի արեւի ծագումը:

Վանահայր — Մոռցի՛ր արեւն ու իր ծագումը, որ ծագի քեզի ծագումներուն ծագումը, որ արեւէ քեզի արեւներուն արեւը:

Սբեղան — Կեցի՛ր: Ըսէ՛. քու այդ նոր շէնքէդ լաւ՞ պիտի, տե՛ս, այս աղմուկը... (Խորքը մտածանիշ ընելով) Կը լսե՛ս:

Վանահայր — Ի՞նչ աղմուկ. այդ լաւողը ծովն է սլեկոծ:

Սբեղան — Այո՛, ատիկա՛:

Վանահայր — Քու փնտռածդ, մանո՛ւկ, մարդու կառուցած առաջին եկեղեցին է, նախնակա՛նը:

**Արեղան** — Չէ՛, ալ ինձի չես խարեր քու այդ արհամարտա բառերովդ: Սուէ՛ չիտակ. ըսէ՛. հասնելը է քու եկեղեցիդ ծովուն ձայնը:

**Վանահայր** — Իմ եկեղեցիս չէ հասնելու ո՛չ-մէկ արտաքին յուղում, ո՛չ-մէկ արտաքին տղմուկ: Եթէ կ'ուզես ինձի հետ՝ յոյսդ կարէ՛ արեւէն ու ծովէն:

**Արեղան** — (ձամբա տալով) Անցի՛ր այն ատեն:

**Վանահայր** — (Հեռանալով) Ա.փա՛ս, արեղա՛, քու միտքդ երբեմն թեւեր ունէր: (Գուրտ)

**Արեղան** — (Ետեւէն) Ա.փա՛ս, վանահայր, քու սիրտդ երբեմն թեւեր ունէր:

**Կոյր վանականը** — (Երկու ձեռքերը առաջ պարզելով) Ե՛ս... Կ՛ս կ'ուզէի քեզի հետ...

**Ձայներ** — (Շշուկով) Կո՛յրը... կո՛յրը...



## Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Բ Ա Ր Ձ Բ Մ Ո Վ Ա Փ

Աջ ու ձախ ժայռեր: Քարբարն գեթինը քիչ-քիչ կը բարձրանա ու նակսին կը կազմէ ծովուն սեպ շրթունքը: Գիւշեր է. արեկոծութիւն:

1

Ժայռի շրթունքին ալիքներուն կասաղի ելեւեջը:

Ալիքները, որոնք կնոջ մարմին ունին, կ'երեւան միայն մինչեւ մեջքը ու կ'աշխատին կախին ժայռէն, բայց վայրկեան մը միայն, իսկոյն վար կը քափին նորէն շառաչելով:

Այնպէս որ անդադար շարժում է ու ելեւեջ, իրար հրելով, իրար փաշտելով. եւ այդ իրարանցումին մեջէն է որ կը խօսւի.

**Ձանազան ալիքներ** — (Թերնէ բերան ու ընդհատ-ընդհատ)

— Պիտի կորչի՞ս:

— Տե՛ղ տուր լանջիս:

— Քարի՛ն փակչիս:

— Ա՛յ, հասանք, հասանք:

— Հոսանք է, հոսանք:

— Ի՛նչ վազեր ենք ափէ ափ:

— Ի՛նչ ցատկեր ենք չափէ չափ:

— Չա՛փ. ի՛նչ չափ:

— Սնչա՛փ, անչա՛փ:

— Չա՛փ, չա՛փ:

— Աս թռչիլ է, վազիլ չէ:

— Աս եռալ է, ցատկիլ չէ:

— Կեցի՛ր, կեցի՛ր ու կանչէ՛:

— Չէ՛, չէ՛, անցի՛ր, աս ան չէ՛:

- Ա՛ն է :
- Անն չէ՛
- Է՛, մէկ չէ՞ :
- Կանչէ՛, կանչէ՛ :
- Մենք պարտաւ չենք :
- Ոչինչ՛, կանչենք :
- Կանչենք :
- Կանչենք :

**Խումբ մը ալիք** — (Միաբերան.)

Հէ՛յ, ախանջէ՛ .  
 յոյզ ու տենչ է ամեն լանջէ ,  
 կը շառաչէ .  
 քեզի ծո՛ւն է, որ կը կանչէ ,  
 հէ՛յ, առաջէ՛ :

**Ուրիշ խումբ մը** (Հեղանքով և հեռանալով)

Ա՛, չէ՛, չէ՛, չէ՛ .  
 նստէ հողին ու քեզ տանջէ :

**Նախորդ խումբին ձայնը** — (Աւելի հեռուէն)

Հէ՛յ, ախանջէ՛ .  
 յոյզ ու տենչ է ամեն լանջէ . . .

Ու քիչ մը ասեմ ժայռի շրթունքին լուրիւն կը սիրե. եւ աւելի որոշ կը լսի բացերէն փոքրկի խոր ու խուլ աղմուկը :

**Արեղան** — (Ժայռերուն մէջէն խելագար կը նետուի ներս, մտ- գերը խուլ, հագուստը խառնակ, աչքերը մուր) Եկա՛, եկա՛ . . . (Ու յանկարծ կը կենա, կը շփէ ճակատը, կը նայի ետ ու կ'ըստի բարկացած շեշտով մը) Դէ՛, մնա՛ս-բարով, կղզի՛, մնաս-բարով, անասպատ . մնաք-բարով դուք ալ մութ-մութ կամարները տաճարին, մնա՛ք-բարով իմ աղօթքներս ու խնկումը հողիս . մնաս-բարով

և դո՛ւն, ո՛վ անողոք ու վրէժխնդիր Աստուած, որուն ուղղեր եմ իմ տենչերս ու աղօթքներս : Դուն ալ մնաս-բարով, խցիկս, իմ մենաւոր ու լռիկ խցիկս, ալ չեմ դառնալու քեզի : Ա՛յ, դեռ կը վառի հոտ՝ ծոցիդ մէջ՝ ճրագիս աղօթ լոյսը . առտւան դէմ մի- նակը-մինակը մարի պիտի ու ալ երբէք չի պիտի վառի : Թո՛ղ մարի :

Հովի ուժեղ քափը :

**Արեղան** — (Կը ցնցուի, կը դառնա ծովուն ու թեւերը կարօտա- կէզ առաջ պարզելով) Դէ՛, բաց գիրկդ : Սեղա՛, բաց թեւերդ . ահա՛ յոյզքը ջրերուն, ահա՛ վազքը փո- թորկին . բաց թեւերդ ու նորէն փարած քու խըն- կելի մարմնիդ, նորէն շունչդ շնչիս, ալիքներուն ծեծկուքին մէջէն, անցնիմ այն նո՛ր ու մե՛ծ ան- ծանօթին, նո՛ր գոյութեան ու նոր կեանքի . ա՛ն, որ խոտապեր ես ինձի : (Քայլ մը ընելով առաջ) Բաց գիրկդ, Սեղա՛ . . .

**Սիմօն վանական** -- (Վերի Ժայռին վրայէն շխտակ անոր առ- ջեւը կը ցատկէ ու կը կտրէ ճամբան . հեւալով ) Կեցի՛ր : (Կուրծքը սեղմելով) Շունչս . . . շունչս . . .

**Արեղան** — (Յանկարծակիի եկած ու խօսող) Մէկդի՛ ձամբէս :  
**Սիմօն վանական** — Կեցի՛ր, դժբա՛ղդ, կեցի՛ր : Վախցի՛ր Աստուծո՛յ :

**Արեղան** — (Կուլի պատրաստելով) Մի՛ կտրեր առջևս :  
**Սիմօն վանական** — Քու առջևեդ մութ է ու անդունդ :  
**Արեղան** — Ետ քաշէ՛, մա՛րդ :  
**Սիմօն վանական** — Վախցի՛ր այդ մութէն ու անդուն- դէն :

**Արեղան** — (Կատրած) Է՛, հերի՛ք է, հեռո՛ւ գացէք ձեր

անդունդներովը ու մութերովը, հեռո՛ւ ձեր անկերջ վախերովը: Վա՛խ լոյսերէն ու բերկրանքէն, վա՛խ մութէն ու տանջանքէն. վա՛խ ասուածներէն, վա՛խ դժոխքէն: Հեռո՛ւ, բա՛ց ճամբաս: Հոն ո՛չ մութ կա, ո՛չ անդունդ: Ծովն է միայն ու փոթորիկը իմ առջևս:

**Սիմոն վանական** — Մահն է քու առջևը, թշուառ-կա՛ն:

**Ս.բեդան** — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնա-րածը:

**Սիմոն վանական** — Ասուած իմ, խեղագար է:

**Ս.բեդան** — Մահը ա՛ս է, հոս, ա՛յ, այս ձեր անապատը, այս վախի ու մեռելութեան կեանքը. իսկ հոն ազատն է, յոյզն ու շարժումը. հոն կեանքն է, եւ ես կ'ուզեմ կեանքին գիրկը... (Յանկարծ ուժով մը կը հրէ, կը նետէ գետին) Հեռո՛ւ ճամբէս: Ես կ'ուզեմ ասլրի՛մ, ասլրի՛մ. Սեղա՛... (կը նետուի ծովը):

**Սիմոն վանական** — (կէս մը գետնէն բարձրանալով, սարսափա-հար ու խեղդւած ձայնով) Կորա՛ւ, կորաւ իր հողին...

ԼՈՒՐԻՆԸ. ալիքներուն աղմուկը:

4

Ժայռերուն մեջէն հեզհեռէ կը հասնին վանական-ները՝ հագուս ու մագեր հովերուն:

**Ս.դամ վանական** — Ո՛ւր է, ո՛ւր է:

**Դաւիթ վանական** — Գոտա՛ր. ճի՛շտ է. տեսա՛ր:

**Զաֆարիա վանական** — Ո՛ր կողմը անցաւ:

**Ղազար վանական** — (Ներս ցատկելով) Ո՛ւր է, ո՛ւր է:

**Սիմոն վանական** — (Ծովը մտանանկէ) Ա՛յ, հո՛ն...

**Խոււմբը** — (Սարսափով, կիսաձայն) Ծո՛վը...

**Սիմոն վանական** — Կորա՛ւ իր հողին:

**Վանական մը** — Ա՛յ անիծւած է այս ժայռը. հոսկէ ճրգ-նաւոր մըն ալ նետեր է ինքըզինքը ծովը:

**Խոյր վանականը** — (Ուրիշ վանականի մը թեւէն կախուած շքն-չասպառ ու սաստիկ յուզւած. թեւերը անկարգ խորխորոզ շարժումներով առաջ պարզած՝ կը մտնէ ներս)

**Վանական մը** — Եկաւ իր կո՛յրը, իր կո՛յրը...

**Խոյր վանականը** — (կը կենա անշարժ ու ամբողջ հաստիով ուղղւելով. ընդհանուր լուսութեան մէջ) Իրա՛ւ է. իրա՛ւ է:

**Քոյորը** — (Բոտ լուսութիւն. գլուխները կը կախեն վար):

**Խոյր վանականը** — (Չեռքերը վեր բարձրացնելով) Ուրեմն... Ասուած իմ:

**Ղազար վանական** — Այո՛, Ասուած: Աստու վրէժն էր ասիկա: Եկեղեցին քանդել ուզելը անպատիժ չի մնար: Մեծի վրէժը ինկաւ ամենէն փոքրի գլխուն:

**Մովսէս վանական** — Ա՛խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր արեղան...

**Ս.դամ վանական** — Հեղ ու բարի, համեստ ու սուրբ: Խոււմբ մը — Ան սուրբ էր, սուրբ:

**Զաֆարիա վանական** — Եզե՛րքն իջնենք, եղբա՛րք, գուցէ գանենք գիւղը. գոնէ գիւղը:

**Երիսասարդ վանական մը** — Երթանք բերինք լաստը:

**Սևնոն վանական** — Դժւար է. բայց սէտք է, որ բերինք լաստը:

**Խոյր վանականը** — Լա՛ստը...

**Սևնոն վանական** — Զարմանք բան է. ինքը ազատեց ուրիշի մը կեանքը ծովէն ու իր կեանքը աւաւ ծովուն:

**Երիսասարդ վանական մը** — Երթա՛նք, երթա՛նք, որո-նենք:

**Մովսէս վանական** — (Աչքերը վեր յառած ու մարգարէական շեշտով մը) **Լսեցէ՛ք, եղբա՛րք: Եթէ Աստուած ողորմի ու դիտակը գտնենք, պէտք է տանինք թաղենք նոր եկեղեցիի սեմին: Զոհի նոխարը կը մորթին տաճարի սեմին:**

**Գաւիթ վանականը** — **Տէրը կը խօսի քու բերնովդ: Թաղենք եկեղեցիի սեմին:**

**Խոււրը (Հեռանալով)** — **Թաղենք, թաղենք եկեղեցիի սեմին:**

Բոլորը դուրս. կը մոռցւի կոյրը, որ կը մնա մինակ:

5

**Կոյր վանականը** — (Խորտակած՝ գլուխը կը շարժէ) **Գացէ՛ք... թաղեցէ՛ք... ձեր եկեղեցիի սեմին. հին աստուածներու սեմին. ա՛, կարո՛ղ են, հզօ՛ր, այդ հին աստուածները. դեռ շա՛տ են հզօր...**

**Չայն մը** — **Իզո՛ւր հանեցիր աչքերդ:**

**Կոյր վանականը** — (Խորին յուզումով ու ահաբեկ) **Ո՞վ է աս, որ կը յանդգնի...**

**Չայնը** — **Իզուր հանեցիր աչքերդ:**

**Կոյր վանականը** — (Վախէն ետ-ետ երթալով) **Որո՞ւն ձայնն էս դուն... կ'ուզէի նայիմ աչքերուդ խորքը...**

**Չայնը** — **Իզո՛ւր հանեցիր աչքերդ:**

**Կոյր վանականը** — **Իզո՛ւր...**




### ԿԱՐԵԻՈՐ ՎՐԻՊԱԿ

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
23 վարէն	10	օնինֆ	ֆօնին
30 »	13	պատճառ	անպատճառ
30 »	12	անտամ	տամ
34 վերէն	1 և 2	թուչեցան	թըլեցան

ԳՐԻԱՄ Է՛

ԵՐԵՎԱՆ, 1909 ՅԱՆՎԱՐԻՆ



304

«Ազգային գրադարան



NL0355876

47375